Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lii 2
224

A 654

157
Բ-91
Ա
Էակ
224

ԲԹ. Ը. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ.

Ա 654. 2000

ՍԷՐ ԵՒ ԽԱՆԴ

602

ԹԻՖԼԻՍ
Տպարան ՀԵՐՄԷՍ, Մադրաքեան փողոց, № 15.
(49) 1904

9178 ԱԿ

Дозволено цензурою, Тифлисъ, 11-го Сентября 1904 года.

ՀԱՅԿ-ՍՍՀ Գրքերի Պետական Գրադարան
Մ. Գ. Մասնեան անվ.
Ս. Սարգսյանի անվան
2 Ф-225
(6236 41)
224-2001

Հետևելով ձեր տուած խորհրդին, թանկագին բարեկամ, ես վերջապէս վճռեցի հրատարակել իմ նամակները, որ ուղղել եմ ձեզ զանազան ժամանակ։

Այո, դուք միանգամայն իրաւացի էք նկատում, որ անմիտ սէրը անտեղի խանդի հետ միացած, մի հանրամարդկային չարիք է, որ անողորմ կերպով հարուածում է հասարակական կեանքը ամեն տեղ։

Ուր որ առօրեայ կեանքը գիտութեան հետ ներդաշնակ չէ առաջ գնում, այնտեղ բնական է քայքայումը, աւերումը։ Եւ այս խոշոր պակասութիւնը, ինչպէս դուք էլ իրաւամբ շեշտել էք, շատ խիստ աչքի է ընկնում, մանաւանդ մեր ժողովրդի մէջ։

Մի ժողովուրդ է դա, որ զարմանալի անտարբերութեամբ ապրում է բոլշեվիկեան տգաւորութիւնների տակ, անդուսպ ու կոյր կրքերից դրդուած՝ առաջնորդւում է անասնական բնազդներով, ամբողջովին թաղուած է անհատական կամայականութիւնների մէջ։

Հասարակական կեանքի որ կողմն էլ նայես, կտեսնես միայն մանր ու խոշոր պակասութիւն-

ներ. խաբէութիւն, կեղծաւորութիւն, աղմուկ ոչնչի համար, կեղծիք... մի խօսքով կրքեր, որոնց ինքներս չենք հաւատում, բայց ձգտում ենք, որ ուրիշներին հաւատացնենք։

Սրտի ցաւով պէտք է խոստովանել, որ այսօրուայ մարդը այս բոլորը վայելում է իսկական, բնական կեանքի փոխարէն։

Առանց սիրոյ կեանքը կեանք չէ. առանց սիրոյ կարելի չէ ապրել։

Ճշմարիտ սէր է հարկաւոր, ճշմարտապէս սիրել է հարկաւոր, որ կեանքի մէջ ազատ շունչ քաշես ամբողջ կրծքով, որ հասկանաս, թէ հեռու ես ամեն տեսակ չնչին ու դատարկ բանից, որ կարողանաս կաթիլ կաթիլ հաւաքել լաւը, ազնիւը, ուժեղագոյնը, որպէսզի այդ բոլորը ապագայում ձուլես քո սիրած էակի անձնաւորութեան մէջ և ստանաս նոյնպէս սիրող ու սիրուած էակ։

Ահա թէ ինչ է վայել մարդուն ինչպէս նշանաբան։

Կենսունակ լինելու, տեղական կեանք ունենալու համար մեր ժողովրդին հարկաւոր է գիտութեան վերջին խօսքը, խօսք, որ հիմնուած լինի բազմաթիւ փորձերի, խոր ուսումնասիրութիւնների և առողջ դատողութեան վրայ։

Այդ խօսքը թող քահանան տայ իր հօտին, գրողը իր ընթերցողին, ուսուցիչը իր աշակերտին, ծնողը իր զաւակին և ամենքը միասին՝ հասարակութեանը։ Բայց միայն ոչ լոկ խօսք, այլ

գործ, անձնական օրինակներ։ Եւ այս բանը բարի ցանկութիւն չպիտի համարել, այլ սուրբ պարտականութիւն։

Այդ ժամանակ իրաւունք կունենանք յուսալու, թէ մեր հասարակութիւնը կը զարթնի, կը շարժուի, կըմբռնէ ժամանակի առաջադէմ ոգին և յետ չի մնայ ժամանակի ոգուց։

Թող ուրեմն, թանկագին բարեկամ, այս նամակները դառնան ջրի փոքրիկ կաթիլ ծարաւների համար։ Ծարաւները անընդհատ «ջուր, ջուր» են կանչում, բայց ոչ ոք չկայ, որ թաց ճկոյթը մօտեցնէ նրանց բերանին։

Բժ. Ա. Բ.

Մայիսի 5, 1904 թ.
Պետերբուրգ

1.

Յունիսի 5-ին։

«Սէրը յաւիտենական է եւ անմահ։»

Թանկագին բարեկամ.

Այսօր մենք հանդիպեցինք մեր ընդհանուրիս ծանօթին և չկարողացանք ճանաչել նրան, այնքան նա փոխուել է։

Մեր հանդիպումը տեղի ունեցաւ կապոյտ ծովի մէջ բարձրացած կանաչազարդ կղզու վրայ, ուր մենք այնքան յաճախ զմայլւում էինք բնութիւնը դիտելով և երկար երկար խօսում էինք, զրոյց անում։

Մեր ամբողջ ընկերական շրջանը զարմանքով իմացաւ, որ մեր ծանօթը սիրահարուած է և սիրւում է...

Եւ իրաւ, նրա հոգին նեղուած էր, հայեացքը ցրուած. յաճախ արտասանում էր իր համար Թանկագին անունը. համարեա չէր ուտում։ Անքուն գիշերներ է անցկացրել, մոռացել է իր գործերը։

Նա կամ ծիծաղում էր, կամ լաց լինում, քնում էր և զարթնում յանկարծ, նրա դէմքը կամ յանկարծ սպրտնում էր, կամ ծածկւում էր ալկարմիր գոյնով։

Յաճախ, մենակ մնալով, նա ասում էր իրան. ես հիւանդ եմ, բայց չգիտեմ, թէ ինչ հիւանդութիւն ունիմ։

Նա տանջւում է, բայց նրա մարմնի վրայ վէրք չկայ, նա տխուր տրտում է, բայց նրա վիշտը, ըստ երևոյթին, ոչ մի պատճառ չունի։

Նա ամբողջապէս այրւում է, նոյն իսկ այս դրախտի նման այգու զով ստուերի մէջ։

Քանի անգամ նրան ճանկռել է փուշը, և նա չէ լացել, քանի անգամ մեղուները խայթել են նրան, և նա դրանից ուտելու ցանկութիւնը չէ կորցրել։

Նշանակում է, որ այս բոլորից ուժեղ է այն ցաւը, որ այժմ հարուածում է նրա սիրտը։

Այսպէս հառաչում և նեղւում էր մեր խեղճ ծանօթը, չկարողանալով ասել, որ դա սէր է։

Կերակուրը բերանին մօտեցնելով, նա հազիւ էր նրա համն առնում. երբ խմում էր, հազիւ էր շրթունքները կպցնում բաժակի ծայրերին։

Նա, որ մի ժամանակ խօսող էր, հանդարտ է այժմ և մռայլ, նա, որ մի ժամանակ չարաճճի երեխայի պէս կայտառ էր, այժմ անշարժացել է։

Նրա գործերը մոռացուել են, սրինգը ընկած է և այլ ևս ձայն չէ հանում։

Եւ նրա դէմքը գունատուել է ինչպէս խոտը դաշտերում՝ ամառուայ տօթերի ժամանակ...

Բայց նա, ով իր կեանքում ենթարկուել է սիրոյ այդ ծանր հիւանդութեան և ով ազատուել է նրա լծից, կհամաձայնուի թէ ինչքան վատնգաւոր, ինչքան խենթ զգացմունք է դա և, միևնոյն ժամանակ, ինչ երջանկութիւն է, ինչպէս է հոգին քաղում և ինչպէս է ազնուացնում հոգին...

Սա մեր կեանքի մէջ մի ահագին երևոյթ է, որ աւելի շատ ուրախութիւններ և տանջանքներ է տալիս, քան ուրիշ որև է բան բնութեան մէջ։

Մենք ամենքս մութ կերպով ճանաչում ենք սէրը ինչպէս մի մեծ և քաղցր խորհուրդ, մենք նրան փափագում ենք, բայց մեր յարաբերութիւնները դէպի այդ կիրքը չենք ենթարկում բանականութեան, և այդ պատճառով էլ սէրը այնքան խելառ մի բան է, և փոխանակ երկնային քաղցրութիւններ տալու, յաճախ դժոխքից էլ վատ է տանջում։

Ցիշեցէք թէ այդ կրքից մարդկանց ինչ անթիւ բազմութիւն է տանջւում աշխարհս, և, աւելի յաճախ, ծածուկ։

Ցիշեցէք սիրահարուածների կենսական յարաբերութիւնների կատարեալ քայքայումը, թէ ինչպէս քայքայւում են նրանց գործերը, ինչպէս նրանք յաճախ մոռանում են բարոյական պարտականութիւնը, մոռանում են ամեն ինչ այս աշխարհի վրայ. և այս բոլորը այն, մեծ մասամբ

վաղանցուկ, երջանկութեան համար, որ յաճախ ցնորք է միայն։

Ցիշելով այս բոլոր այրող տանջանքները, ակամայ մի խորին խղճահարութիւն է գարթնում դէպի զոհերը։

Այսպէս թէ այնպէս, սիրահարուած և սիրուող մարդը երջանիկ է, լինի նա ազամարդ թէ կին։

Սէրը նման է ուրուականի, որովհետև շատերը չեն իմանում, թէ ինչ է իսկական սէրը։

Մարդու ամենաոգևորուած հանճարը թէ բանաստեղծութեան, թէ թատրոնի, թէ նկարչութեան, երաժշտութեան, քանդակագործութեան մէջ դեռ համարեա ամբողջովին նուիրւում է սիրոյ նկարագրութեան. սէրը, այսպէս թէ այնպէս, մեր բոլոր խաղերի և զուարճութիւնների մէջ է արտայայտւում. նրա նուրը շունչը զգացւում է ամեն տեղ, ամեն մի անկիւնում։

Վիպագրողները, բանաստեղծները, ոգևորուած մարդիկ շարունակում են ոգեշունչ օրհներգներ նուիրել սէրին, իսկ դատաստանական պաշտօնեաները համարեա օր չէ լինում որ բաց չանեն նոր և նոր փաստեր, որոնք հաստատում են այն խայտառակութիւնները, այն յուսահատութիւնը, այն յանցանքները, որոնց ծնողն ու սնուցանողը սէրն է, մէկ էլ նրա ուղեկից խանդոտութիւնը։

Բանաստեղծները երջանիկ սէրը նկարագրե-

բում են ջահիլ և չքնաղ կնոջ կերպարանքով, և բանաստեղծները գուցէ և իրաւունք ունեն. իսկ բժշկի և դատաւորի առջև այդ կիրքը հանդէս է գալիս իր ուղեկիցներով — խելագարութիւն, ինքնասպանութիւն, թոկ, խէնջար, ատրճանակ, ծըծմբային լուցկիների տուփ և այլն։

Մի գիտնական ասում է, որ սիրահարուածները կուզէին ուտել, լափել միմեանց, մարմնանալ, թափանցել մէկը միւսի մէջ բոլոր ձևերով և տեսակներով։

Եւ ահա, երբ այդ պահանջը մնում է անկատար, սիրահարուածները խոր և ծանր տանջւում են, որովհետև նրանցից իւրաքանչիւրը ըզգում է իրան կիսատ, կէս-կատար առանց միւսի։

Սէրը իր բնութեամբ մի եզակի զգացմունք է աշխարհիս վրայ, նա ձգտում է հնար եղածին չափ սերտ կապ հաստատելու, նա պահանջում է, որ իր առարկան կատարելապէս իրը լինի, ձըգտում է յաւիտենական միացման։

Սիրուողը կուլ է գնում սիրողի մէջ և սիրողը սիրուողի մէջ։

Սիրահարուածի միտքը կենտրոնանում է սիրելի մարդու շուրջը. սրանից է, որ նրան սիրելու երջանկութիւնը այնքան անհուն մեծ է երևում. սրանից և այն, որ բաւարարութիւն չըստացած սէրից առաջացած տանջանքը այնքան անհուն սոսկալի է երևում։

Երևակայութիւնը, ամբողջովին կլանուած մի

մտքով, մի առարկայով, երջանկութիւնն էլ, տանջանքն էլ ներկայացնում է անհաշիւ չափազանցրած չափերով։

Երջանիկ սիրահարը մի անկեղծ զարմանքով հարցնում է իրան, թէ ինչպէս էր կարողանում ապրել աշխարհում այն ժամանակ, երբ դեռ չէր ճանաչում իր պաշտելի առարկան. նրան թւում է, թէ հէնց որ անհետանայ այդ առարկան, անհնարին կլինի որ ինքն ապրէ։

Եւ ճիշտ այսպէս էլ լինում է, տարաբախտաբար։

Սիրահարուած ինքնասպանների թողած նամակներում համարեա անխուսափելի են լինում այսպիսի խօսքեր.

«Կեանքը առանց նրան անտանելի է, ես աւելի լաւ եմ համարում մեռնել»։

Կեանք տեսած մարդիկ գիտեն, որ դառնութիւններով լի է կեանքը. այն դառն դեղհատների անսպառ պաշարի մէջ, որ կեանքը մատուցանում է խեղճ մարդկութեան, քիչ չեն գտնուի այնպիսիները, որոնք դժբախտ սէրից թունդ են։

Բայց երիտասարդը դեռ փորձ չէ ունեցել այս ճշմարտութիւնը ճանաչելու համար։

Ամենամօտիկ դառնութիւնը, որ սպառնում է նրան, անբաղդ սէրն է. և որովհետև բոլոր տպաւորութիւնները անհամեմատ շուտ և խիստ են դրոշմւում երիտասարդի մէջ, ուստի վշտի այս առաջին կենսական ալիքը բռնում է նրան

մի անսահման թափով, դնում է նրա առջև հարց. լինել թէ չլինել։

Ահա թէ ինչու երբեմն միայն մի հատիկ վախը՝ թէ ամուսնութիւնը սիրած անձի հետ կարող է խանգարուել, կատարելապէս շշմեցնում է երիտասարդ սիրահարին և հասցնում է նրան լիուլի անյուսութեան, որ և հրում է նրան դէպի ինքնասպանութիւն։

Մի երիտասարդ նշանախօսութիւն էր սկսել, բայց աղջկայ ծնողները իրաւացի կերպով պատասխանեցին նրան. «Սոխակը առաջ բոյն է շինում և յետոյ միայն սկսում է երգել. այսպէս էլ, ուրեմն, և դու. առաջ տուն տեղ դիր, ապա կըստանաս մեր աղջկան»։

Բայց այս «սոխակը» չուզեց բոյն հիւսել, չուզեց սպասել և էլ գործը չերկարացնելով, վերջ տուեց իր կեանքին։

Հասարակ ժողովրդի մէջ այսպիսի անակընկալ պատահարները յաճախ բացատրւում են իբրև չարքերի և կախարդութեան գործեր, որովհետև այդ ժողովրդի հայեացքները հին են, նախնական։

Դեղեմնայի հայրը նոյնպէս չէ կարողանում հասկանալ, թէ ինչու իր դեղեցկուհի աղջիկը սիրահարուեց ծեր ու սև մավրի վրայ և գտնում է այն բացատրութիւնը, թէ դա կախարդութիւն է։

2.

Յունիսի 12-ին.

Թանկագին բարեկամ.

Ես գրեցի, որ մեր ծանօթը սիրահարուած է և ժամանակ առ ժամանակ շատ տխուր տրտում է։ Այս բանը շատ պատճառներ ունի, և բաւական ծանրակշիռ պատճառներ։

Նրա տխրութեան պատճառը մէկն է այն հրատապ հարցերից, որոնք, մանաւանդ մեր ժամանակ, ստացել են մի առանձին նշանակութիւն, քանի որ մեր օրերում սուր կերպարանք է ընդունել անձնական բարոյականութեան հարցը, որ և այսպիսով արժանի է բազմակողմանի ուշադրութեան։

Այդ հարցը սեռական բարոյականութեան հարցն է, այսինքն այն, որ թէ տղամարդի և թէ կնոջ համար պարտաւորական է մինչև ամուսնութիւնը կուսութիւն պահպանել։

Երիտասարդը սիրում է օրիորդին, սիրում է ասատիկ, վառ կրքով, իր սիրածի հետ միանալու միտքը երջանկութիւն է լցնում նրա մէջ։ Ինչպէս ձեզ յայտնի է, մեր սիրահարը, մի վերին ասիճանի ազնիւ երիտասարդ, հարցը դրել է կարուկ և վճռական կերպով. չնայած որ խորապէս սիրում է, նա ժամանակ առ ժամանակ մը-

տածում է հրաժարուել իր հարմնացուին առաջարկութիւն անելուց, որովհետև նա մինչև ամուսնանալը կապ է ունեցել կնոջ հետ։

Պատրաստւում է վերջ դնել իր կեանքին, որովհետև այժ չունի տանելու այն միտքը, թէ ինքը, այսպէս ասած, ֆիզիկապէս անմաքուր է, կապ է ունեցել կնոջ հետ... առանց սիրելու։

«Ես չեմ կարող քո ամուսինը դառնալ, չնայած, որ խելակորոյս սիրում եմ քեզ. ես կամքիս բոլոր ջանքերը գործ դրի, որ լցնեմ մեզ բաժանող վիհը։ Ի զուր...

«Ես անկարող եմ յաղթահարել իմ զգացմունքները. քեզ հետ իմ կեանքը կլինէր յաւիտենական կեղծիքի մէջ ընկղմուել։»

Այս էր գրում մեր սիրահարը իր իդէալին։

Այսպիսի խոստովանութիւնը պիտի յարուցանէր օրիորդի մէջ բոլորովին բնական զգացմունք, խառնուած յուսահատութեան, հիասթափութեան, բարկութեան և խանդոտութեան հետ։ Բայց անկեղծ սիրող և խելացի օրիորդը կարող էր պատասխանել ֆրանսիական բանաստեղծի խօսքերով. «Իմ սէրը կվերադարձնէ քեզ անմեղութիւնդ»։

Երիտասարդը այնքան յաճախ երդւում էր օրիորդի մօտ, թէ ինքը մինչև նրան պատահելը չէ սիրել ոչ մի կնոջ։

Այժմ նա բաց է անում իր ամբողջ անցեալ կեանքը, որ, ինչպէս և նրա շրջանի մարդկանց մեծամասնութեան կեանքը, բոլորովին մաքուր չէր։ Հարմնացուի սարսափը պիտի աճէր—նրա

նշանածը վարել է տղամարդկանց մեծամասնութեան, այսպէս ասած, սեռական կեանքը։

Հեշտ կորստաբեր կապեր, որոնք չէին ամբացրուած զգացմունքների ոչ մի հանգոյցով, փոդով գնուող սէր իր անխորական անասնական բնազդներով,—այսպէս էր երիտասարդի կեանքը, որի մէջ վատնուում էր ամենաբարձր բանը։

Նա դէն շպրտեց իր մաքրութիւնը, ինչպէս թղթի մի կեղտոտ կտոր, նա երբէք չէր էլ իմանում այդ մաքրութեան գինը։

Ոչ մի անգամ չմտածեց նա, թէ այն էակը, որ երբ և իցէ կնուիրուի նրան մի կատարեալ մաքուր անձնուիրութեամբ, ինչպէս կեանքի յաւիտենական ընկերուհի, կարող է պահանջել նրանից այդ մաքրութիւնը, քանի որ ինքը մաքուր է։

Միայն այժմ է նա մտածել ու հասկացել, որ տղամարդու և կնոջ համար հարկաւոր է միանման բարոյականութիւն։ Այժմ նրան նոյն իսկ վրդովում են այն պայմանները, որոնց մէջ անցնում է տղամարդկանց մեծամասնութեան կեանքը մինչև ամուսնութիւնը և բոլորովին ճիշտ նկատում է, որ ապահովուած դասակարգերի մէջ այդ երևոյթը յաճախ է պատահում, քան աղքատ դասակարգերի մէջ, ուր տղամարդիկ վաղ են ամուսնանում։

Մեր ընկերները համոզեցին սիրահարին, որ ինքնազոհութեամբ լի մի կեանքն էլ կարող է անցեալի փրկանք դառնալ։

Անկասկած, կոշտ ու կոպիտ հայեացքների տէր մարդիկ կծիծաղեն մեր սիրահարի վրայ, նրա անիրագործելի երևակայութիւնների վրայ. բայց այս ծիծաղը ոչինչ չէ ապացուցանում։

Սակայն «ապագայի հրաշակերտ, աւելի մաքուր, կուսական շէնքի համար» անհրաժեշտ են միանգամայն կանոնաւոր կրթուած, երկաթէ կամք և բնաւորութիւն ունեցող անհատներ, որոնք ընդունակ կլինեն տանել կռիւը այդ ապագայի համար, դիմանալ կեղծիքով, հարստահարութեամբ և խաբէութեամբ լի ներկայ կեանքի ծանր ճնշումին։

Կայ մի կոպիտ հիմնական սխալ մեր սիրահարուած հերոսի մտածութիւնների մէջ. նա, ինչպէս մի կատարեալ ֆանատիկոս, ամբողջ կեանքը և բարոյականութիւնը բերել դրել է «ֆիզիկական մաքրութիւն» դաւանանքի մէջ։

«Անօգուտ է զղջումը, երբ կորցրուած է մաքրութիւնը», այսպէս վճռում է, այո, ֆանատիկոսը, տանելով իրան դէպի խարոյկ, մի սուրբ հաւատով, թէ կրակը ամենալաւ միջոցն է մեղքի դէմ կամ այն բանի դէմ, ինչ նա մեղք է համարում։

Փորձենք մի քիչ քննել մեր հերոսի այն դաւանանքը, թէ սեռական մաքրութիւնը կեանքի գլխաւոր կէտն է, և ով կորցրել է այդ մաքրութիւնը, նա պրծած կորած մարդ է։

Նրա համար, ինչպէս խեղճ Մարգարիտի համար, չկայ փրկութիւն, նրան յաւիտեան պիտի հալածէ վրդովուած խղճի ձայնը. «դու կորած ես»։

Բարձրագոյն դատարանը, անձայն, ինչպէս յայտնի է, արդարացնում է Մարգարիտին։ Մեր մեղաւորի համար էլ գուցէ կգտնուի եթէ ոչ արդարացում, գոնէ ներում ստանալու իրաւունք։

Այդ մեղաւորը կարող էր ցոյց տալ, որ ինքը, ինչպէս այդ լինում է շատ և շատ դէպքերում, աւելի մի անգիտակից մեղաւոր է, որ ընկնում է դեռ այն ժամանակ, երբ բոլորովին չէ գիտակցում այն, ինչ կատարում է, երբ նա չափազանց թոյլ ու կամազուրկ է և չէ կարող յաղթահարել բնազդի և կրքի այրող ոյժը։

Նա կարող էր մատնանիշ անել և՛ այլանդակ դրուած կրթութիւնը, և՛ այսպիսի արդարացի մտքերը. «Ազատ ընկերական յարաբերութիւնները տարբեր սեռերի անձանց մէջ դեռ մինչև այժմ դատապարտւում են ինչպէս մի ինչ որ արգելուած բան. որանով այդ յարաբերութիւններին տալիս են մի առանձին չքնաղութիւն և դարձնում են նրանց ինչ որ գայթակղեցնող և վտանգաւոր բան»։

Վախենում են, թէ այդ բարեկամութիւնը կարատաւորէ բարի անունը, թէ բամբասանքների ճահիճը կը կլանէ ջահիլ աղջկան և նրա մաքրութիւնը, այն մեծագոյն գանձը, որի տէրն է նա, կը կեղտոտուի նախապաշարմունքի ազդեցութեան տակ...

Տղամարդու և կնոջ յարաբերութիւնների մէջ շատ սաստիկ, համարեա անբարոյականութեան հասնող թափով շեշտւում է սեռական հանդա-

(6236 41) 1934-2009
Գոս. Հանրային գրադարան ՀՍՍՀ-ՍՍՀ Գոս. Публ. Библиотека Հ. Ա. Մասեանի անվ.

մանքի վայրկեանը. և այս բանի մէջ քիչ մեղաւոր չէ սեռերի անջատման սիստեմը։

Երանի այն սերնդին, որ երբ և իցէ կըհասնէ լաւագոյն, աւելի առողջ ժամանակների։

Այստեղ կարելի է ցոյց տալ և տնտեսական պատճառների սարսափելի ոյժը, պատճառների, որոնք աւելի ու աւելի երկարացնում են ամուսնութեան մէջ մտնելու ժամանակը. կարելի է ցոյց տալ և կեանքի անկարգութիւնները, քաղաքային այն անառողջ մթնոլորտը, որ այնքան մաքուր և լաւ ոյժեր է ոչնչացնում։

Բայց վերջ ի վերջոյ, անկասկած, այս բաները չպիտի դառնան արդարացուցիչ հանգամանքներ մեր հերոսի համար։

Ֆիզիկական մաքրութիւնը դեռ հոգեկան մաքրութիւն չէ. մենք բաւականաչափ բաներ ենք տեսել, որպէսզի կարողանանք որոշել թէ որտեղ է մէկի և միւսի սահմանը։

Այն չէ պղծում մարդուն, ինչ մտնում է նրա բերանը, այլ այն, ինչ դուրս է գալիս նրա բերանից։

Խօսք չը կայ, երջանիկ է, նախանձի և յարգանքի արժանի է նա, ով կարողանում է բարձրանալ մինչև ճշմարիտ հոգեկան մաքրութիւն հասկանալը, պահպանելով միևնոյն ժամանակ և՛ մարմնական մաքրութիւն. — այսպէս պիտի լինի ազատ անձնաւորութեան իդէալը։

Մեզ թւում է, թէ անկեղծ զղջացող վիճաբանը, որ պատրաստ է ինքնազոհութեամբ լի մի

ամբողջ կեանքով քաւել իր մեղքը, աւելի բարձրը է և մաքուր այժմ, քան երբ նա մարմնով անարատ էր, ինչպէս նորածին մանուկ։

Բայց էլի լաւ է պահպանել մաքրութիւնը մինչև ամուսնութիւն, որովհետև այդ մաքրութիւնը հարկաւոր է երեխաների ապագայ սերնդի առողջութեան համար։

3.

Յունիսի 19-ին.

Թանկագին բարեկամ.

Սխալների և անկման դժուար և ծանր ճանապարհով մենք գնում ենք բարձրագոյն դատաստանի իրաւունքը, կեանքի բարձր հասկացողութեան իրաւունքը։ Եւ մեր հերոսը, որ անդառնալի կերպով դատապարտել է այդ կեանքը, թէ ուշ, ունի նոյն իրաւունքը։

Անօգուտ է նրա զոհը, քանի որ դա չէ բղխում անհրաժեշտութիւնից և ուրիշների բարօրութեան համար զոհուելու գիտակցութիւնից։

Հեշտ կարող է այսպէս դատել նա, ով չէ եղել սխալների մէջ, անկման մէջ, ով երբէք անձնական կեանքի նեղլիկ շրջանից չէ դուրս եկել կեանքի պայքարի ասպարէզը, որ լիքն է աշխատանքով, ընդհարումներով և սխալ գործողութիւններով։

Մեր հերոսը հազիւ-հազ տարաւ առաջին, բայց ոչ ամենածանր հարուածը, որ յաճախ հասցնում է անխնայ ճակատագիրը, ուզում էր և պատրաստւում էր իր թեթեւամիտ մահով ապացուցել, որ ինքը կատարելապէս անպէտք է կեանքի համար։

Բայց ի պատիւ նրա ասենք, որ նա քաջաբար տարաւ այս առաջին հիասթափումը, հասկացաւ այն ճշմարտութիւնը, թէ կեանքի մէջ ամեն ինչ վճռողը «սեռական բարոյականութիւնը» չէ, որքան էլ նա ինքնըստինքեան կարևոր լինի։

Այս էլ մեզ համար մի ահագին քայլ է դէպի առաջ, որ մեր հերոսը մի անգամ էլ ափթ տուեց խօսելու «բարոյական հաւասարութեան» մասին։

Մեր հերոսը, անդառնալի կերպով դատապարտելով տղամարդուն, որ նա կորցնում է կուսութիւնը, ուզում էր, թէև ուշ, իր արիւնով, իր կեանքով քաւել իր սխալը, և պահանջում է միանման բարոյականութիւն թէ տղամարդու և թէ կնոջ համար։ *)

*) Անգլիայի շատ քաղաքներում գոյութիւն ունեն պոռնկութեան, որպէս սոցիալական մի չարիքի դէմ, կռուող ընկերութիւններ։

Նրանք անուանւում են բարոյական կատարելագործութեան ընկերութիւններ։ Կազմւում են առանձին շրջաններ հինգ-եօթը հոգուց, ինքնակրթութեան և կատարելագործման համար։ Նրանց գլխաւոր պարապմունքներից մէկն է ծանօթութիւն

Այս տեսակ մարդիկ արդէն մի մեծ նշան են, որ գազանը դեռ վերջնականապէս չէ յաղթել, որ չէ մեռել լուսաւոր ոգին մարդու մէջ։ Եւ գուցէ երբ և իցէ նա կը ջարդէ օձի գլուխը։

Ո՞վ է մեղաւոր և ի՞նչպիսի մարդ համարենք մեր հերոսին, որ առաջին անգամ զգաց կենդանու այն ամբողջ ոյժը, որ թաղնուած է նրա մէջ, զգաց և այն, թէ որքան ինքը անզօր է մեն-մենակ գործ ունենալու նրա դէմ։

Այս հարցը հասցնում է նրան յուսահատութեան և մեռնելու միտքը երևում է նրան իբրև միակ միջոց անտանելի ձանձրոյթից և կատարեալ գիտակցութիւնից ուրախութեամբ ազատուելու համար։

Մեր հերոսը, կարելի է ասել, մի սովորական երևոյթ է, որի նմանները առնուազն ինչպէսուն տոկոսն են կազմում մեր հասարակութեան միջին շրջանների մէջ։

Նա մեր զաւակն է և այդպիսի զաւակներ ահագին մեծամասնութիւն են կազմում. իսկ նրա փոքրիկ տխուր պատմութիւնը մեր բարքերի փառաւոր պատկերն է։

Մեր հերոսի բոլոր ընկերները, ի հարկէ, չեն զգում խղճի խայթեր իրանց ֆիզիկական անկումից, որ տեղի է ունենում մինչև ամուսնանալը։

«սեռական բարոյականութեան» հիմքերին։ Եւ իրաւ, երիտասարդութիւնը կատարելապէս գիտակցաբար ոգևորւում է կուսութեան ոգով, որ միանման բարոյականութիւն է ընդունում տղամարդու և կնոջ համար։

Այդպիսիների թիւն էլ շատ մեծ է։ Բայց դրանց համար էլ գոյութիւն ունեն զանազան ծանր տեղական հիւանդութիւններ, որոնք ազդում են նրա վրայ և նրա սերունդների վրայ։

Ո՞րքան տանջանքներ են կրում նրանք։ Ո՞րքան աղջատուած բնաւորութիւններ, հիւանդոտ հետևանքներ են առաջանում այն բանից, որ մենք անկեղծ չենք, արդար չենք ինքներս մեզ հետ և մեր երեխաների հետ։

Ծնողները, երբ որդիները ծանր բոպէներին դիմում են նրանց, թէև հասկանում են թէ ինչ-որ մի ողբերգական բան է կատարւում իրանց դաւակների հոգու մէջ, բայց չեն կարողանում մարդկայնաբար մօտենալ նրանց, ցոյց տալ այն սէրը, որ չէ վախենում ցեխից այս չափազանց կենսական հարցերի մէջ։

Այս դէպքում էլ մենք թափառում ենք մշուշի մէջ մռայլ ու լուռ, յօժարութեամբ հաւատում ենք, որ ամեն ինչ լաւ է գնում, թէև գիտենք, որ կեղծում ենք։ Մեզ ուրախացնում է այն մշուշը, որ ծածկում է ճշմարտութիւնը։

Մենք պարտաւոր ենք անպատճառ նայել կեանքի այս անկիւնին, ուր ամեն ինչ այնպէս բարեյաջող ու լաւ չէ գնում։ *)

Եւ այդ անկիւնը թարմացնող մթնոլորտ մըտցնողները այն հերոսներն ու հերոսուհիները չը

*) Տես իմ «Վենեբական ախտեր» և «Սիֆիլիս» գրքերը։

պիտի լինեն, որոնք քարոզում են մարմնական մաքրութիւն, ինչպէս կեանքի երջանկութեան և բարոյականութեան առաջին և գլխաւոր պայման։

Ընդհակառակն, այնպէսի խօսքերը՝ թէ «զըղջումը չի օգնի, երբ մաքրութիւնը կորցրուած է», կարող են դժբախտ մեղաւորներին անդառնալի կերպով մղել դէպի անառակութիւն։ Իսկ դրանք, այո, աւելի դժբախտ մարդիկ են, քան արատաւոր. և չէ կարելի ասել, թէ անընդունակ են դուրս գալու անկման անդունդից և մաքրուելու։

Ինչ կորցրուած է, նա կորած է,-խօսք չկայ։

Բայց չկայ անկում, որի համար փրկութիւն չը լինեը։

Եւ փրկութեան համար ամենից առաջ հարկաւոր է սէր, որ այս ու այն կողմ չէ նայում և ցեխից չէ վախենում։

Մեր հերոսը հանդիպեց «նրան» և հէնց առաջին անգամից կարծես փառը քաշուեց նրա աչքերից։ Նրա ընտրեալը, կարծես մի ինչ-որ կախարդութեամբ, մարդուց դարձաւ մի ինչ որ առանձին, կասես աստուածային էակ։

Թող դա լինի ցնորք, կրքի ներշնչման ազդած տեսողական պատրանք, բայց ինչ էլ լինի, այդ ցնորքը գերող, յափշտակող է։

Ինչպէս խելագար ժլատը դեղնապղնձի կոճակները ոսկու տեղ է ընդունում, ինչպէս մեծութեան վրայ ցնորուածը կարծում է, թէ իր գդակը թագ է, այնպէս էլ սիրահարը անկեղծ կերպով, կրակոտ կրքով ընդունում է իր սիրոյ ա-

ռարկան ինչպէս մի կատարեալ էակ, երկնքից ուղարկուած մի լուսափայլ բան։

Ո՞վ գիտէ, գուցէ կիրքը, խաշխաշի նման, այն աստիճան լարում է սիրահարի հոգին, որ սա ըսկսում է տեսնել սիրուած առարկայի մէջ ոչ միայն մարմին, այլ աստուածային և անմահ ոգի, որ միայն գեղեցիկ է, որ միայն արժանի է սիրոյ և վերածնում է սիրահարին։

Մարդը թեւում է անսահման սիրուն, գրաւիչ և հրաշալի. նա ուզում է երկրպագել նրան, զմայլուել նրանով, հոգով անձնատուր լինել նրան։

Անասելի հրճուանքով լցւում է նրա սիրտը, երբ միան է բերում նրան։ Նա ամեն ինչ է, նա աշխարհ իջած Աստուծու նման մի բան է։

Զգում է, որ գտնուած է կեանքի նպատակը, որ իրագործուած է մարդու իդէալը։

Ահա նա։

Բայց, բացի հեշտասիրութիւնից, որ աւելի շուտ միջոց է և ոչ թէ սիրոյ նպատակ, սիրահարութիւնը տալիս է մի առանձին հոգեկան երջանկութիւն, անմարմին սիրոյ խորհրդաւոր և անիմանալի ուրախութիւն։

Այս երջանկութիւնը մեծ մասամբ սկսւում է դեռ նախ քան առաջին հանդիպումը. սիրահարուելու հակում ունեցող երիտասարդին պաշարում են քաղցր սպասելիքներ, նա երազում է չեղած սիրահարներ, նա... կարող է գրել սիրերգեր, նուիրուած իր ապագայ ընտրեալին։

Սիրահարութիւնը պարունակում է իր մէջ

իսկական վերացում. նա աւելի բարձր է, քան ուրիշ պահանջներից ստացած բաւականութիւնը։

Սէրը, միայն սէրն է ազնուացնում մարդուն ամեն կողմով։

Սէրը չքնաղ է. իր ազդած զգացմունքների ընդհանրութեամբ նրան կարելի է դասադասել կրակոտ բարեկամութիւնից, մայրական սէրից։

Տարաբախտաբար, այդ սէրը կարող է լինել զգացմունքների պատրանք, որ կարող է և մարելի. սակայն այդ աստուածային կրակը պահպանելու համար հազարաւոր իլլիւզիաներ են հարկաւոր։

Այսպէս, յայտնի է, որ սիրահարուածները յաճախ ոչ մի բանի առաջ կանգ չեն առնում իրանց նպատակին հասնելու համար. խաբէութիւն, ստութիւն, դաւաճանութիւն, սատելութիւն, անուանարկութիւն, գողութիւն, սպանութիւններ —սրանք սովորական միջոցներ են։

Կինը դաւաճանում է ամուսնուն և հակառակը, աղջիկը թողնում է հարազատ ընտանիքը։ Սիրահարուած մարդը, եթէ հարկաւոր է, դաւաճանում է հայրենիքին, կրօնին, որ հոգու լաւագոյն հաւատալիքներ են։

Սիրահարը իր սիրածին անուանում է իր կուռքը. նա, ճիշտ որ, կուռք է սիրահարի համար, իսկ վերջինս—մի անկեղծ կապաշտ։

4.

Յունիսի 26-ին.

Թանկագին բարեկամ.

Կռապաշտութիւնը ոգու մի խղճալի խաւարում է։

Անցնում է զգայական կրքի կրակոտ թափը, և յանկարծ սիրահարները իրանք էլ զարմանքով տեսնում են, որ ոչ միայն անհետաքրքրական են դառնում իրար, այլ և օտար ու խորթ։

Աւաղ, այլ ևս ոչինչ ընդհանուր բան նրանց մէջ—ոչ մի առարկայ, ոչ մի միտք, ոչ մի գրաւչութիւն։

Դուրս է գալիս, որ մարդիկ բոլորովին տարբեր ճանապարհներով են գնում, բոլորովին օտար են, բոլորովին նման չեն իրար։

Առաջ է գալիս գիտակցութիւն, թէ կեանքը փչացրուած է, թէ նա դառնացնում է օրերը. և այս գիտակցութիւնը թունաւորում է առանց այդ էլ, այսպէս ասած, թթու կենակցութիւնը։

Ինչու այսպէս եղաւ։

Պատճառն այն է, որ մի ժամանակ երկուսն էլ խելացնոր չափազանցութեամբ էին նայում սէրին, իրանց սեռական յափշտակութեան։ Նրանք անխելքի պէս արհամարհում էին ճշմարիտ լուրջ պայմանները-զարգացման համապատասխանող չափը, բնաւորութիւն, համոզմունքներ, սովորու-

թիւններ, ճաշակներ. արհամարհում էին այն սկզբունքը, որ պէտք է յարգել մարդուն և ոչ թէ էգին կամ արուին, որովհետև երկրորդականը հեռանում է արագ, հիմնականը մնում է։

Այստեղ պէտք է լինի մարդը և ոչ թէ էգը կամ արուն. որովհետև, կրկնում ենք, երկրորդականը անցնում է արագ, հիմնականն է մնում։

Հաւատացնում են, որ երջանիկ ամուսնութիւնների մեծ մասը տեղի է ունենում այն պայմանների մէջ, երբ չկայ տիպիկական սիրահարութիւն, բայց կան լուրջ պայմաններ, բարեկամութեան հնարաւորութիւն։

Չկայ սիրային խելագարութիւն, բայց որքան արժանապատուութիւն և ճշմարիտ գեղեցկութիւն կայ յարաբերութիւնների մէջ, որքան պայծառութիւն և խելացիութիւն։

Զգայական սէր գրգռողը, ասում են, ֆիզիկական գեղեցկութիւնն է. բայց սա միշտ այսպէս չէ։

Սիրահարւում են և՛ տգեղների վրայ, և սիրահարւում են յաճախ ամենահիւանդոտ, տանջալից կրքով։

«Սէրը աթարին էլ կը կպչի», ասում է հայկական առածը։

Յիշեցէք հին յունական աստուածներից Վուլկանին. նա ամենից անճոռնին էր, երկու ոտով կաղ, բայց Աֆրոտիդէի ամուսինն էր։

Սիրոյ մէջ վճռական նշանակութիւնը գեղեցկութեան չէ պատկանում։ Գուցէ աւելի նուազ

զրկուած է այդ նշանակութիւնից ճշմարտութիւնը և բարութիւնը։

Սիրահարուածները յօժարութեամբ խոստովանում են, որ անխելք է եղել նրանց ոգևորութիւնը և դրանով նոյն իսկ պարծենում են։

«Ես յիմարութիւններ արի».—այս խօսքը արտասանում են մեծ ինքնահաւանութեամբ, հպարտութեամբ։

Այս պայմանների մէջ բանականութեան մասնակցութիւնը համարեա մեղք է համարւում։

«Դա արդէն սէր չէ, երբ գործում է դատողութիւնը։»

Բոլորովին ճիշտ է, բայց եթէ յիշենք, թէ ինչ դէպքերում է մարդը հրաժարւում բանականութիւնից, հետևանքը անսպառ կը լինի սիրոյ համար։

Մենք խլացնում ենք բանականութիւնը այն դէպքերում, երբ չենք կարող նրա աջակցութեան սպասել. և սիրահարները լաւ գիտեն, որ թէ բանականութիւնը և թէ խիղճը միշտ հակառակ են այդ զգայնական կրքերին։

Սիրոյ մէջ բոլորովին բացակայում է և բարութիւնը. սիրահարւում են անխտիր թէ չարերի և թէ բարիների վրայ. սա, ի հարկէ, կախուած է սիրահարուողների բնաւորութիւնից և բարքից։

Սիրոյ թոյլ աստիճաններում, երբ բանականութիւնն ու կիրքը դեռ բոլորովին չեն ճնշուած, ընտրութիւն անելու մէջ մասնակցում են և՛ դրանք.

բայց որքան ուժեղ ու տիպիքական է կիրքը, այնքան էլ նա անխելք է։

«Դա արդէն սէր չէ, երբ գործում է դատողութիւնը»։ Ճիշտ է սա։

Մարդու ուղեղը պարունակում է իր մէջ բարձր սեռական կենտրոնը, որից կախուած են ողնուղեղի մէջ գտնուող կենտրոնները, բայց որի վրայ ազդում է այս վերջինների գրգռման դրութիւնը։

Այն շրջանում, երբ սեռական հասունութիւնը կատարեալ է և սննդառութիւնը կատարւում է եռանդուն կերպով, ուղեղի սեռական կենտրոնն էլ լարուած դրութեան մէջ է գտնւում և դառնում է դիւրագրգիռ։

Այն մարդկանց վրայ, որոնք հակում ունեն դէպի, այսպէս ասած, հոգեկան շարժումները, նոյնպէս և այն մարդկանց վրայ, որոնց ուղեղը ոչ մի բանով չէ զբաղուած, այդպիսի դրութեան մէջ գտնուող սեռական կենտրոնը յաղթահարող, նոյն իսկ բռնակալական ազդեցութիւն է անում։

Նա ներգործում է դատողութեան, երևակայութեան, կամքի վրայ, սեռական յարաբերութիւնների շրջանից մաքեր է յարուցանում և առհասարակ ուղեղի աշխատութեանը տալիս է մի տեսակ ուղղութիւն միայն։

Անհատների մէջ այդ դրութիւնը արտայայտւում է սիրային ցանկութեամբ, սիրելու ձգտումով։

Բաւական է, որ այսպէս տրամադրուած անհատը պատահէ իր նման մէկին,—այդ ժամանակ

նրա ցանկութիւնները, ձգտումները գտնում են առարկայ և դառնում են սէր։

Սեռական կենտրոնի զրգռած ուղեղի ամբողջ գործունէութիւնը զբաղուած է սիրած էակով, որ հասկացւում և գնահատւում է ոչ թէ այնպէս, ինչպէս նա կայ իրապէս, այլ այնպէս, ինչպէս նա համապատասխանում է սիրողի ֆիզիկական պահանջներին։

Օտարոտի չի լինիլ, եթէ ասենք, որ առարկան դառնում է մի մանրիկէն, որ հագնուած ու զուքուած է սիրողի ճաշակով։

Ամեն մի առողջ մարդ անգիտակցաբար զգում է, թէ ինչ յատկութիւն պիտի ունենայ հակառակ սեռի անհատը, որպէսզի նրա հետ միաւորուելու միջոցով իր սեփական յատկութիւնները պահուեն և վերածնուեն ապագայ սերնդի մէջ։

Որքան շատ է նա զարգացած, որքան ինքնատիպ է նա, այնքան բարդ յատկութիւններ է վերագրում միւս սեռի անձին, որին ձգտում է տիրել։

Եթէ նա ընտրելիներ շատ ունի, անսխալ կընտրէ նրան, ով աւելի շատ է համապատասխանում իր այս իդէալին, որ վերջնականապէս ձևակերպուել է նրա մէջ սեռական հասունութեան բոպէին։

Իսկ եթէ չունի շատ ընտրելիներ, բաւականանում է առաջին հանդիպած անհատով, միայն թէ սա շատ հեռու չլինի իր իդէալից։

Որքան մի անհատ շատ է համապատասխանում միւս անհատի իդէալին, այնքան շուտ է տեղի ունենում այդ անհատին իդէալի նմանեցնելու գործողութիւնը։

Եթէ երկուսն էլ մօտաւորապէս կատարեալ կերպով են իրար համապատասխանում, այդ դէպքում երկուսի մէջ կարծես ելեքտրական մի հոսանք է վազում. նրանք մի վայրկեանում սիրահարւում են իրար վրայ և նրանց թւում է թէ վաղուց ճանաչում էին, վաղուց սիրում էին իրար։

Իսկ եթէ ընտրելին որ և է բանով նման չէ իդէալին, այն ժամանակ անհատը պիտի սկսէ համակերպուել, նմանեցնել, սովորել այդ տարբերութեան. նա պիտի աշխատէ ոչնչացնել տարբերութիւնը այդ ընտրելի և իր իդէալի մէջ և որքան հնար է, մօտեցնել նրանց իր երևակայութեան մէջ։

Այս դէպքում սիրահարւում են հետզհետէ, նայած, թէ որքան արագ կարելի է նմանեցնել սիրոյ առարկան իդէալին։

Յամենայն դէպս, սիրում են իսկապէս ոչ թէ այն անհատին, այլ այն իդէալը, որ մշակել է մեր օրգանիզմը։

5.

Յուլիսի 3-ին։

Թանկագին բարեկամ.

Բոլոր վերև ասածներս գուցէ և կոպիտ բաներ են, բայց այսպէս են կարծում և հասկանում մեծ մտածողները և գիտնականները։

Զուր են կարծում, թէ սէրը սառը քննութեան առարկայ չպիտի դառնայ։

Զուր են կարծում, թէ սէրը կարելի է երգել միայն բանաստեղծական ոգևորուած գրուածքների մէջ։

Զէ՞ որ զուտ ճշմարտութիւն է, թէ չէ կարելի սէրին մօտենալ իբրև սիրահար, այլ իբրև դիտող։

Եւ սիրահարուածը վերջին աղբիւրն է, որից կարելի է սպասել, թէ նա կարող է լուսաբանել այն ֆիզիկական երևոյթները, որոնք երևան են գալիս սիրոյ հետ։

Մի այն կողմնակի դիտողը կարող է այդ անել, դիտողը, որ խօսելով սիրոյ մասին, կարիք չունի ծունկ չոքելու, աչքերը պլշելու, բորբոքուելու, բանաստեղծական զեղումների մէջ ընկնելու։

Եւ այսպէս, սիրային ցանկութիւնը միշտ ձգտում է իր իդէալը մարմնացնելու։

Սէրը մի հաւասարացում է, թէ մենք գտել ենք այդ իդէալը. սիրոյ առարկան մեր ներքին իդէալն է, որ, այսպէս ասած՝ դուրս է քաշուած մեր միջից։

Անհատի այդ զգայնական կեանքը սկսւում է սեռական հասունութեան ժամից և շարունակւում է նոյնքան երկար, որքան այդ հասունութիւնը։ «Սէրին հպատակւում են բոլոր հասակները»,

Իդէալը փոքր ի շատ մշակուած է մինչև

սեռական հասունութիւնը և գոյութիւն ունի այդ հասունութեան միջոցին։

Կիրագործուի՞ նա թէ ոչ, այս բանը ամենևին չէ փոխում գործի էութիւնը. նա շարունակում է գոյութիւն պահպանել և սպասում է յարմար առիթի, որ մարմնանայ։

Սիրում են իրանց իդէալը, եթէ չեն սիրում մի որոշ մարդուն։

Որքան նսեմացած, որքան հասարակ է իդէալը, այնքան հեշտ է անհատը գտնում նրա մարմնացումը։

Ահա թէ ինչու պարզ, սովորական բնաւորութիւնները ընդունակ են հեշտ սիրահարուելու և հեշտ էլ փոփոխում են իրանց սիրոյ առարկաները։

Աւելի նուրբ, աւելի բարդ բնաւորութիւնները կեանքի մէջ շատ քիչ են գտնում իրանց իդէալը կամ նրան նմանուող մի բան։ Եւ երբ կորցնում են նրան, դժուարութեամբ են գտնում մի ուրիշը, որ փոխարինէր նրան։

Առողջ բնական սէրը համարեա միշտ պարզ գիտակցում է իր նպատակը։

Ուժեղ բնաւորութիւն ունեցող անհատների մէջ սէրը ծնեցնում է կամքի այնպիսի գրգիռներ, որոնք բաւականաչափ ուժեղ են ամեն մի յամառութիւն յաղթելու և ամեն մի արգելք ոչընչացնելու համար։

Թոյլ բնաւորութեան տէր անհատները չու-

նեն այդ ընդունակութիւնը. հոգեկան յուզմունքը մնում է անհատական և չէ դառնում գործողութիւն։

Սակայն սիրոյ ոյժը կշռելու համար չպէտք է աչքի առաջ ունենալ, թէ ով որքան ջանք է գործ դնում, որ տիրանայ սիրած էակին, որովհետև այդ ջանքերի մեծութիւնը կախուած է կամքի ոյժից և ոչ թէ սիրոյ ոյժից։

Այն անհատները, որոնք ընդունակ են ուժեղ կերպով սիրելու, կունենան և ուժեղ կամք։

Սեռերի զանազանութիւնը պարունակում է իր մէջ և համապատասխան տարբերութիւն նրանց սիրային կեանքի վերաբերմամբ։

Կնոջ դերը այս դէպքում աւելի կարևոր է։ Կինը տղամարդուց աւելի խնամքով է մշակում իր իդէալը. այդպէս հարկադրում է նրան ինքը բնութիւնը։

Կնոջը աւելի դժուար է հարկադրել, որ հրաժարուի իր իդէալից և բաւականանայ նրան փոխարինող մի բանով, որ չափազանց տարբերւում է նրանից։

Երբ նա միանգամից գտել է իր իդէալը, այլևս համարեա անհնարին է հարկադրել նրան, որ հեռանայ այդ իդէալից. և այս հոգեկան դրութիւնը միացնում է նրա գիտակցութեան մէջ ամեն մի ուրիշ տպաւորութիւն. սրանով էլ միայն ապրում է նա։

Իր կամքը, իր դատողութիւնները, իր երևակայութիւնը, ամեն ինչ նա նուիրաբերում է իր

սէրին և նոյն իսկ չէ փորձում յաղթահարելու իր մէջ այդ զգացմունքը որ և է նկատումներով։

Կինը բնազդով զգում է, որ ինքը իրաւունք չունի խաբուելու, որ իր սխալը անուղղելի հետևանքներ կունենար։ Այս պատճառով էլ նա չափազանց անվստահ է և սաստիկ վախենում է, թէ կարող է սխալ գործել։

Մեւս կողմից, նա շատ լաւ գիտէ այդ և երբ նրան աջողւում է գտնել իրան անհրաժեշտ մարդուն, աւելի հեշտ, քան տղամարդը, ընդունակ է լինում նուիրելու նրան իր ամբողջ կեանքը։

Բոլորովին ուրիշ բան է տղամարդը, որովհետև սխալը նրա համար չունի այդպիսի ծանր հետևանքներ. բայց նրա իդէալն էլ, որ ձուլւում է կնոջ պատկերի մէջ, աւելի առաջ որոշուած կերպարանքով է ներկայանում նրան։

Տղամարդը աւելի շուտ է սիրահարւում, աւելի հեշտ՝ առաջին հանդիպած կնոջ վրայ. նա աւելի քիչ հաստատամիտ է, հեշտ է հրաժարւում սէրից. վերջապէս, նրա սէրը կարող է համեմատաբար հեշտ մեղմանալ, իջանալ։

Ահա երկու խօսքով սիրոյ բնական պատմութիւնը։

Այստեղ գոյութիւն ունեն բազմաթիւ անորմալ երևոյթներ շնորհիւ թէ անհատի, այնպէս և մի ամբողջ ժողովրդի, նոյն իսկ մի ամբողջ ցեղի թուլութեան, ուժասպառութեան և այլասերման։

Սէրը այստեղ դառնում է անբնական իր ար

տայայտութիւններով, իր ուժգնութեամբ և առաքկայի ընտրութեամբ։

Աննորմալ մարդու թոյլ, իր հաւասարակշռութիւնը կորցրած ուղեղի մէջ սեռական կենտրոնը տիրապետում է անդադար և, իբրև կատարեալ տէր, լցնում է նրա գիտակցութիւնը բացառապէս իր գրգիռներով։

Քիչ կան մեզանում հիւանդ և թուլամտութ մարդիկ։

Այդպիսի անհատը կին տեսնելիս՝ կորցնում է խելքը, ինքնազսպման կարողութիւնը և զանազան գործողութիւններ է թոյլ տալիս իրան։

Մի ուրիշ այդ տեսակ անհատին փոթորկալի կամ հանդարտ էքստազի, յափշտակութեան մէջ է գցում սիրած կնոջ մի հատ ձեռնոցը կամ ծաղիկը։

Մի տեղ սէրը հասցնում է ոճիրի, մի տեղ մելամաղձութիւն է բերում մարդու վրայ։

Յետոյ մենք նկատում ենք կամ անբնական արագ թռիչքներ քմահաճ սառնութիւնից դէպի կրակոտ քնքշութիւն և բուռն կիրք, կամ կատարեալ թուլութիւն, առողջ մտքի բացակայութիւն. և այս ամենը—սիրոյ ազդեցութեան տակ։

Զանազան հիւանդոտ մտապատկերներ, օտարոտի հակումներ, ռոմանտիքական յափշտակութիւններ, ցաւագար տափանքներ և խելագար յուզումներ սիրոյ անկանոն և անբնական ձևերն են։

6.

Յուլիսի 10-ին.

Թանկագին բարեկամ.

Սէրը մեր երկրաւոր կեանքի միակ ճշմարիտ, հիմնական և գերագոյն գեկավարող սկզբունքն է։ Այդ սկզբունքը, իբրև միակ աղբիւր, դէպի իրան է քաշում այն ամենը ինչ դուրս է մեր առօրեայ շահերի շրջանից—թէ կրօնը, թէ բարոյականութիւնը, թէ առաքինութիւնը, թէ ճշմարտութիւնն ու արդարութիւնը.

Այս ամեն ինչ գրկող պաշտամունքի գոյութիւնը արտայայտւում է ոչ միայն կրօնական հայեացքների ու գրականութեան մէջ, այլ և անմիջապէս կեանքի մէջ։

Հին կլասիքական ժամանակները ունէին ոչ միայն մի ամբողջ սիրային դիցաբանութիւն իր գրականութեամբ, այլ և բազմաթիւ սիրոյ տաճարներ և ժողովրդական տօնախմբութիւններ...

Միջին դարերի սկզբում, մի քանի բանաստեղծների գրուածքների մէջ մենք տեսնում ենք փորձեր՝ սէրը յայտարարելու իբրև առաքինութեան, ճշմարտութեան և արդարութեան բարձրագոյն սկզբունք։

Տեսնում ենք նոյնպէս փորձեր՝ բարձրացնելու սէրը մինչև անհասանելի իդէալի աստիճանը, նրան երկնքում բնակեցնելու և նրա վրայ աղօթելու փորձեր։

Գանում են, որ սիրոյ վերամբարձ զգացմունքը ամեն մարդու չէ մատչելի, այլ միայն ազնիւ սիրտ ունեցող մարդուն, այսինքն, որ մարդը պիտի բարձրանայ մինչև սէրը, դառնայ նրան արժանի։

Հաստատում են, որ սէրը այնքան զգայնական կիրք չէ, որքան մտաւոր յափշտակութիւն և անհասանելի իդէալ։

Մի երիտասարդ բանաստեղծ ապացուցանում է, թէ իր սիրած անձը երկրային արարածներից չէ, այլ ինքը Աստուած է ուղարկել նրան, և թէ սէրը երկնային երևոյթ է։

Յայտնի են միջնադարեան բանաստեղծութեան հռչակաւոր ներկայացուցիչները — Դանտէ, Պետրարկա և ուրիշները։ Դանտէն—Բէաթրիչէի երգիչ, Պետրարկան—Լաուրայի երգիչ։

Դանտէն ուղղակի յայտնում է, թէ իր բանաստեղծական և փիլիսոփայական ներշնչումը արդիւնք է իր անսահման սիրոյ դէպի Բէաթրիչէն, թէ այդ հոգեկան տրամադրութիւնը միակ միջոցն էր, որով կարելի էր լինում մշտական հաղորդակցութիւն պահպանել Բէաթրիչէի և իր հոգու մէջ։

Դանտէի ասելով, Բէաթրիչէն պարզապէս մի կին չէ. նա «աստուածային յայտնութեան, Քրիստոսի իդէալական եկեղեցու նշանաբանն» է։

Պետրարկան աւելի էլ գերազանցում է Դանտէին. նրա Լաուրան ամեն երջանկութեան, ամեն տեսակ բախտի, ամեն բարի սկզբունքների աղբիւրն է։

«Նրանից է դէպի քեզ գալիս այն սիրային միտքը, որին դու հետևում ես և որ հասցնում է քեզ բարձրագոյն բարիքին։

«Նրանից է դէպի քեզ գալիս այն ազնիւ քաջութիւնը, որ ուղղում է քեզ դէպի երկինք ուղիղ ճանապարհով»։

Կարող ենք մենք մեր ներկայ ժամանակներում երևակայել մի մարդ, որ համարձակուէր հասցնել սիրոյ իդէալացումը այսպիսի ֆանտաստիական բարձրութեան։

Հոմերական քրքիջը կը լինէր նրա պատասխանը և քննադատութիւնը չէր քաշուի ոտով քացի տալ նրան։

Թանկագին բարեկամ, մենք դեռ նոր կանգնած էինք մի շատ բարձր սարի վրայ։ Կանգնած նրա գագաթին, մենք տեսնում էինք մարդկային ոգու իսկական երջանկութեան այնպիսի մի շլացուցիչ փայլուն տեսարան, որի առաջ մթնանում է ներկայ մեր ամբողջ երկրային բարեկեցութիւնը։

Բայց, աւաղ, որքան մենք ցած ենք իջնում այդ սարից, սիրոյ պայծառ պսպղացող աստղը աւելի և աւելի հեռանում է մեզանից դէպի հորիզոնը։ Եւ հասնելով ստորոտին, մենք կորցնում ենք նրա վերջին փայլն էլ, որին կլանում է մեր երկնքի գժգոյն տարածութիւնը։

Ինքնագոհ անգործությունը, փոխադարձ կոտրածները և մասաւոր զարգացման կատարեալ բացակայությունը միջին դարերում հետզհետէ ոչնչանում են, տեղի տալով առաջադիմող պետական սկզբունքին։

Բանաստեղծական ամբոխները իրանց անհոգ կեանքով դատարկւում են և մոռացութեան մատնւում։

Տրուբադուրները իրանց դիւթիչ երգերով շատ վաղ անհետանում են, աւանդութիւնների կարգն անցնում։

Վերջ ի վերջոյ սիրոյ պաշտամունքի միջնադարեան երկրպագուի լուսատու կերպարանքը տեղի է տալիս ծաղրական պատկերների, ինչպէս, օրինակ, Դոն-Քիշոտը։

Մենք տեսնում ենք այստեղ, որ ընդ միշտ թաղուած է և իր մաքրութեամբ այնքան դրաւիչ, իր էութեամբ այնքան վսեմ ասպետական սէրը...

Երկու երեք դարից յետոյ արդէն սկսւում է մեր ժամանակակից գործնական և անդարդ կեանքի շրջանը։

Այս կեանքը բնորոշում է անցեալը «կլասիք», «ռոմանտիք», «սէնտիմենտալ» հեգնական անուններով, այսինքն ուզում է ասել, «օ՜հ, որքան ծիծաղելի և անպէտք են եղել այդ մարդիկ, որոնք իրանց համար հոգեկան բաւականութիւն ստանում էին սիրային արկածների և բանաստեղծական զեղումների մէջ»։

Մեր ժամանակ և մեր ժամանակից քիչ առաջ, երբ սկսեցին ստեղծուել պետական և հասարակական կարգեր, սիրոյ պաշտամունքը հետզհետէ կորցրեց իր ամբողջ պարզամտութիւնը և ամբողջ անկեղծ ոգևորութիւնը։

Մի կողմից սէրը մնում է ամուսնութեան մէջ, մի հաստատութիւն, որ օր օրի վրայ կորցնում է սիրոյ հիմնական տարրը, որպէս զի դառնայ կամ քաղաքական կամ գործնական մի կարգ։

Միւս կողմից, սէրը աղճատւում է կոպիտ ֆիզիքական բաւականութիւն ստանալու անյագ ձգտումից և դառնում է հեշտասիրութիւն և անառակութիւն։

Հասարակական զարգացման մի յայտնի աստիճանի վրայ ժամանակակից ամուսնութիւնը (միակնութիւնը) պատմական անհրաժեշտութիւն է, բայց միևնոյն ժամանակ մի մեծ յաղթութիւն, գուցէ ամենամեծը այն յաղթութիւններից, որ երբ և իցէ տարել է կինը։

Գուցէ հին և միջին դարերի երևակայութիւնը շատ ուժեղ էր և նրան չէին ճնշում պետական սկզբունքի ամեն ինչ սարկացնող հիմքերը։

Այս էր պատճառը, թէ մի ուրիշ բան, յամենայն դէպս երևակայութիւնը լայն տարածութիւններ էր բաց անում մարդու հոգեկան աշխարհի և զգացմունքների առաջ. և եթէ մարդը սիրում էր, նա բարձրանում էր մինչև սաստիկ աստուածացում և կատարեալ ինքնուրացում. իսկ եթէ ատում էր, միայն դժոխքը կարող էր նրա

հետ մրցել վրիժառութեան և կատաղութեան ոյժի վերաբերմամբ...

Եւ իրաւ, սէրը այն ժամանակ մի հզօր ոյժ էր, որ կլանում էր մարդուն ամբողջովին և յետ էր քաշում նրան իրական կեանքի ոճնական շահերից։

Այստեղ մեզ բոլորովին չը պէտք է շփոթեցնէ հին փիլիսոփայութիւնը, որ հարկադրում է նրան կտրուել նիւթական, ֆիզիքական, մարմնաւոր կեանքից և ամբողջովին կուլ գնալ հոգևոր ինքնաքննութեան մէջ։

Ընդհակառակն, սիրոյ վերացական կողմը աւելի նուրբ արտայայտութիւն գտաւ այդ ֆանատիկոսական ձգման մէջ, մի ձգտում, որ ուզում է սպանել մարմինը այն պատճառով, որ նա ցածրացնում է սիրոյ իդէալական զգացմունքը, դարձնում կեանքի պահանջներին ենթարկուած կիրք։

Յամենայն դէպս, պէտք է ենթադրել, որ իր նիւթական գոյութիւնը կատարեալ ուրացութեան և իր մարմինը արհամարհանքի հասցրած հնդիկի առաջ գալու համար հարկաւոր են եղել ոչ պակաս դարեր, քան հարկաւոր էին մեր ժամանակակից յայտնի Շոպէնհաուէրի Երևան գալու համար, այն Շոպէնհաուէրի, որ մերժում, ատում և հարուածում է սէրը, ինչպէս սոցիալական մի մեծ չարիք։

Չէ՞ որ սէրը բնութեան հոգին է...

7.

Յուլիսի 17-ին.

Թանկագին բարեկամ.

—Կհաւատաք, մենք ամենքս սկսեցինք նախատել մեր սիրահարին, երբ նա հանդիպեց իր սիրոյ իդէալին։

Նրանք հանդիպեցին իրար, այդ երկու չարաբախտ էակները, որոնք մի անյաղթելի փոխադարձ ձգտում ունեն դէպի իրար, ձգտում, որ այնքան ծիծաղելի է դարձնում նրանց շրջապատող աշխարհի աչքում։

Ի՜նչ երկնային ուրախութիւն փայլեց նրանց աչքերի մէջ։

Ի՜նչ ոգևորուած արամադրութիւն էր արտայայտում իւրաքանչիւր գիծ նրանց դէմքի վրայ, իւրաքանչիւր շարժում։

Ո՞ւր կորաւ վշտի դրոշմը, որ քիչ առաջ երևում էր սիրահարի վրայ, ո՞ւր կորաւ այն ճընշուած արտայայտութիւնը, այն ցաւը կրծքի մէջ, այն մշուշը, որ պատել էր ուղեղը։

Երկուսի համար էլ յանկարծ լայնացաւ աշխարհը, երկուսն էլ թեթևութիւն զգացին. երկու սրտերի մէջ աւելի տեղ կայ, քան մի սրտի մէջ...

Թող ծիծաղեն նրանց վրայ, թող նրանց խելագար համարեն. ի՞նչ գործ ունեն նրանք շրջապատի հետ։

Նրանց հոգիները միացել են անսահման երջանկութեամբ արբենալու համար։

Ծիծաղեցէք...

Ներեցէք, խնդրեմ, բայց երբէք դուք չէք հասնի զգացմունքների այն ազնուութեան, ձգտումների այն անշահասիրութեան, որ գնում է ձեր բոլոր օրէնքների տեղ սիրոյ այդ բարի, սիրուն, անձնուէր աստուածուհին։

Նայեցէք թէ ինչպէս այդ «խելագար» սիրահարները քիչ են մտածում վաղուայ մասին։

Տեսէք ինչ սրտագին բարութիւն, ինչ անկեղծ ողորմածութիւն է շնչաւորուում նրանց իւրաքանչիւր վարմունքի, իւրաքանչիւր ցանկութեան մէջ։

Օ՜, որքան կը կամենային նրանք տեսնել ամբողջ աշխարհը բախտաւոր, տոգորուած նոյն երջանկութեամբ, նոյն հոգեկան խաղաղութեամբ։

Խնդրեցէք նրանցից օգնութիւն, ծառայութիւն. նրանք չեն մերժի։

Յուսահատութեան աղաղակը, աղքատութեան հեծեծանքը, մերձաւորի դժբախտութիւնը նրանց մէջ աւելի շուտ արձագանք ու համակրութիւն կը գտնէ, քան ձեր կոշտացած սրտերի մէջ։

Սէրը մեզ ոչ միայն երջանիկ է դարձնում, այլ և բարի, ազատ։

Սրտի մէջ սէր կրող վագրն էլ դադարում է գազան լինելուց, իսկ կալանաւորը դադարում է ստրուկ լինելուց...

Ձեզանից ո՞վ չէ սիրային յափշտակութեան

բոպէներին զգացել ցանկութիւն, որ այդ քարէ պատերը յետ գնան և ձեր առջև բացուի յաղթանակող բնութեան պատկերը, այսինքն բացուի անհոգ—երջանիկ բնութիւնը իր դիւթիչ գեղեցկութեան ամբողջ ոյժով։

Թէ ծովը, որ տարածուած է իր անեզր աւազանի մէջ, թէ վիթխարի սարերը, որոնց ձիւնափայլ գագաթները շողշողում են արևի ճառագայթների մէջ, թէ գոյնզգոյն ծաղիկներով ծածկուած դաշտերը։

Եւ առհասարակ սիրոյ հետ կապուած անյաղթելի ձգտումը դէպի բնութեան ծոցը, ուր ամեն մի խոտ, ծաղիկի իւրաքանչիւր թերթիկ, ամեն մի ամպիկ երկնքի երեսին սիրող մարդու ուշադրութիւնն է գրաւում, պատճառելով նրան գեղագիտական զուարճութիւն,—ցոյց է տալիս թէ այդ զգացմունքը, սէրը, միայն ֆիզիոլոգիական դրդումով չէ սկսւում և սպառւում։

Ձեզանից ո՞վ չէ այդպիսի բոպէներին զգացել, որ ընդունակ է կատարել ամենաֆանտաստիկ քաջագործութիւններ, ընդունակ է ամենաանձնուէր բարութիւն ցոյց տալ, սիրել ամենածանր վիրաւորածին անգամ...

Մի խոր զգացող գիտնական բոլորովին արդարացի կերպով ասում է. որքան էլ դատեն ու գրեն մարդու ալտրուիստական պարտաւորութիւնների մասին, այդ քարոզները միշտ կը մնան կախուած օդում, կեանքի ժիսրի աղմուկների մէջ։

Միայն սէրը,—այս կենսատու, բարքեր մեղ-

մացնող և ամեն չարութիւն յաղթահարող զգացմունքը, կարող է իրականացնել ամենամարդասէր և ամենագրաւիչ սոցիալական գաղափարները։

Բայց աւաղ, մեզանից շատերն են արժանանում բնութեան այս վեհագոյն պարգևին, նրա նախնական մաքրութեան մէջ։

Եւ սա շատ ցաւալի է, որովհետև օրուայ իրապաշտ շահերը, նիւթական կարօտութիւնը, հասարակական օրինաւորութեան պահանջները— ազատ ոգուն խորթ այս բոլոր տարրերը խոնուած են ձեր շուրջը ինչպէս անտեսս մոծակներ, և պօէզիայի տեղ երևան է գալիս կեանքի պրոզան։

Սիրային քնքոյշ զեղումները թունաւորուում են դրամական հաշիւների չոր խօսակցութիւններով. երգուում են թէ անփոփոխ հաւատարիմ կը լինեն իրար, բայց այդ երդումների հետ զուգընթաց են հոգսերը վաղուայ մասին։

Մարդկային անսրտութեան և պայմանական օրինաւորութեան ծանր ճնշման ենթարկուած սէրը չէ դադարում, այնուամենայնիւ, մտածել անսահման լայնարձակութեան մասին և որոնում է նրան բազմատեսակ զուարճութիւնների մէջ, թատրոններ և գեղարուեստական մուզէոններ յաճախելով, պարերին մասնակցելով և այլն։

Դեռ չինացիները գտնում էին, որ երաժշտութիւնը սիրոյ լեզուն է, իսկ գեղեցկութիւնը՝ նրա հայելին։

Յայտնի է, որ գեղեցկութեան հասկացողու-

թիւնը կախուած է ճաշակից, կրթութիւնից, սովորութիւններից։

Երաժշտութիւնը և գեղեցկութիւնը այն միակ տարրերն են, որոնք մեզ համար փոխարինում են միացումը բնութեան հետ, մի միացում, որ տեղի չէ ունենում մեր արհեստական նիստ ու կացի մէջ։

Ով չը գիտէ զմայլուել երաժտութեամբ և գեղարուեստական արտադրութիւններով, նա չունի սիրող սիրտ, նա համարեա երբէք չէ ճաշակել սիրոյ երջանկութիւնը։

Այսպիսի մարդիկ էլ կան, նիւթական հաշիւների մէջ չորացած մարդիկ. և հէնց նրանք էլ սիրոյ ամենակատաղի քննադատներն են և անսիրտ հալածողները...

Զը նայած դորան, այդպիսի կոշտացած սրտերը հանգստութիւն են գտնում հեռաքրքրական սիրային վէպի մէջ, միտքը կեանքի իրարանցումից հեռացնող դրամայի մէջ, ոգեշունչ քնարական ոտանաւորի մէջ։

Անհոգի նիւթապաշտի սառն քրքիջը կոկորդումն է մնում, տեսնելով բեմի վրայ ցնցող սիրային ողբերգութիւնը։

Հասկանալի է ուրեմն, որ գոյութիւն ունի այսպիսի հոգեկան յուզումների մի անյաղթելի, ճակատագրական պահանջ, երբ գրականութեան, բեմի և արուեստի բնաւորութեան և կեանքի նիւթական շահերի մէջ այսպիսի հակադրութիւն կայ և այնուամենայնիւ նիւթականը չէ յաղթողը։

8.

Յուլիսի 24-ին

Թանկագին բարեկամ.

Մենք շատ ու շատ ենք վիճել և մեր առջև, բնականաբար, հանդէս էր գալիս մի հարց, ինչպէս է առհասարակ ծնւում մեր մէջ սիրոյ զգացմունքը, ինչ ազդեցութիւնների տակ է կազմւում սեռերի փոխադարձ ձգտումը դէպի իրար։ Արժէ այստեղ խօսել այդ մասին մանրամասն։

Հազար հազարաւոր գրքեր են գրուել սիրոյ մասին, բայց, դժբախտաբար, մեր որոնած պատասխանը չը կայ։

Հոգեբանութիւնը հեզաբար ցած է դնում իր զէնքը, բայց ֆիզիկան և ֆիզիօլոգիան փորձել են գտնել այստեղ մի որ և է նմանութիւն մագնիսական երևոյթների հետ։

Վերջին ժամանակները սկսել են խօսել նոյն իսկ սիրոյ յատուկ միկրոբի մասին, և այս հանգամանքը աւելի ևս ծաղրական կերպարանքի մէջ է ներկայացնում այն անպտուղ ջանքերը, որ անում են այս կախարդուած հարցը լուծելու համար...

Խօսում են նոյնպէս և հիպնոտիզմի մասին. բայց ինքը, այդ հիպնոտիզմն է, մինչև այսօր դեռ չէ դուրս եկել առեղծուածների շրջանից.

թէև այս հարցի վերաբերմամբ արդէն շատ ու շատ փաստեր կան հաւաքուած։

Եւ այսպէս, երկու սեռերի ներկայացուցիչները շատ յաճախ են փոխադարձաբար ընդհարւում հասարակական կեանքի զանազան դերերի և պայմանների մէջ։

Սակայն բոլոր հանդիպումները չեն առաջացնում փոխադարձաբար իրար ձգտելու հնարաւորութիւն։

Այս գործողութեան առաջին պայմանը, անկասկած, այն է, որ մի անհատ ընդունակ է լինում իր վրայ կենտրոնացնելու միւսի յատուկ ուշադրութիւնը։

Մեր սիրահարի պատմածից երևում է, որ իր բանը հէնց այդպէս էլ եղաւ. նա հանդիպեց օրիորդին մի մեծ կուրօրտում, և նրանք դիտեցին իրար, ինչպէս ասում է, ոտքից մինչև գլուխ։ Նրանց հայեացքները կարծես շփոթուեցին, նրանք ծանօթ չէին։

Երիտասարդը այսօր էլ չէ կարողանում մոռանալ իր սիրուհու սքանչելի աչքերը. երկրային և երկնային ամեն մի բան աչքերի մէջ է...

Դրանից յետոյ մի հասարակ, պատահական կամ նոյն իսկ ապագայ մերձեցման վրայ յոյս ունեցող ծանօթութիւնը, ի հարկէ, բաւական չէ։

Ուշադրութիւն։

Ուշադրութիւնը անպատճառ գրգռւում է այն բարոյական կամ ֆիզիօլոգիական առանձնայատ-

կութիւններով, որոնք համապատասխանում են միւս անհատի զեղագիտական ճաշակին, բարոյական հակումներին կամ ֆիզիոլոգիական պահանջներին։

Որքան մենք մօտենում ենք մարդկային պատմութեան հնագոյն սահմաններին, այնքան սիրային յարաբերութիւնները դառնում են ազատ, իսկ մերձեցումը երկու սեռերի մէջ՝ աւելի պարզ։

Ամուսնութիւնը և հասարակական պարկեշտութիւնը այն աստիճան կերպարանափոխում են մարդու բնաւորութիւնը, մթնացնում և դիմակաւորում են նրա ամենից շատ աչքի ընկնող հոգեկան յատկութիւնները, որ նրա կերպարանքը դադարում է ծառայել իբրև հայելի նախնական մաքուր հոգու, այլ շատ յաճախ ներկայացնում է բոլորովին անհոգի մի դիմակ։

Անսովոր ախորժելի ժպիտը լուրջ դէմքի վրայ, աչքերի ջերմ արտայայտութիւնը, նոյն իսկ ինքնատիպ շարժումը, քայլուածքը, ձայնի ելևէջը, ծիծաղելու եղանակը, տաքութիւնը կամ անսովոր ինքնազսպումը վէճի մէջ,—այս բոլորը ուշադրութիւն գրգռելու պատահական պատճառներ են, իսկ այդ ուշադրութեան հետևում է արդէն համակրանքը։

Բայց համակրութեան առաջին արտայայտութիւնից մինչև իսկական սէրը դեռ շատ հեռու տարածութիւն է։

Սէրը երբէք յանկարծակի չէ ծագում, իր ամբողջ ոյժով։

Մարդկանց մեծամասնութիւնը հաւատացնում է, թէ սէրը, ինչպէս և ամեն մի ուրիշ զգացմունք, հպատակւում է զարգացման օրէնքին և երկարատև վարժութեան պէտք ունի։

Յայտնի է, որ մեր բոլոր տպաւորութիւնները և շարժումները չեն հաղորդւում մեր գլխի ուղեղին, այլ լինում են և ակամայ, անգիտակից շարժումներ ու տպաւորութիւններ, որոնց մէջ մասնակցութիւն չունի գլխի ուղեղը։

Սէրը պատկանում է, ինչպէս հաւատացնում են, այդպիսի երևոյթների կարգին։

Ամբողջ ժամերով, նոյն իսկ օրերով անձնատուր լինելով այդ զգացմունքին, մարդը աստիճանաբար դառնում է մի կատարեալ ստրուկ որոշ սովորութիւնների, որոնք բնորոշում են միատեսակ գործողութիւնների մի ամբողջ շարք։

Եւ որովհետև այդ զգացմունքը մարդուն տալիս է երջանկութիւնների ամենամեծ գումարը, ուստի նրա ծնեցրած սովորութիւնները աչքի են ընկնում իրանց ներքին դիմացկանութեամբ, ուժեղութեամբ։

Մենք յաճախ լսում ենք այսպիսի խօսքեր. սէրը կուրացրել է մարդուն, այս ինչ երիտասարդը երբէք չի ամուսնանայ մի ուրիշ կնոջ հետ կամ թէ այս ինչ օրիորդը չի ամուսնանայ մի ուրիշ մարդու հետ։ Եւ այս խօսքերի մէջ չափազանցրած բան չկայ։

Երբ սպասիկ զարգացած է սիրային դրութիւնը, մարդկային գործողութիւնները կանոնա-

ւորող խելքը բոլորովին յետ է քաշւում։ Եւ երբ «անբախտ կամ անմատչելի սիրով» դրաւուած անձի առաջ ծագում է այն վճռական անհրաժեշտութիւնը, որ պահանջում է սթափուել և դուրս գալ այդ դրութիւնից, այն ժամանակ այդ անձը դառնում է նահատակ այն սարսափելի հիւանդոտ մրցութեան, որ բացւում է զգացմունքի և խելքի մէջ։

Սովորութիւնները պահանջում են, որ շարունակուի նախկին կատարելապէս անխելք և անդորը բաւարարութիւնը, իսկ խելքը առաջ է քաշում մի շարք արգելքներ և աշխատում է զարթեցնել նրա մէջ վիրաւորուած ինքնասիրութեան, ինքնապաշտպանութեան և ինքնայարգութեան զգացմունք։

Մրցութեան վախճանը, ի հարկէ, կախուած է այս կամ այն ազդող պատճառների գերակշռող ոյժից, բայց, յամենայն դէպս, մարդը դուրս է գալիս այդ կռուից բարոյապէս ճնշուած, հիւանդ հոգով...

Դժուար չէ երևակայել, թէ որքան ծանր և քայքայիչ պիտի լինի այդ կռիւը մարդու համար, երբ կռուի մէջ բռնութեամբ ներս է խուժում դուռ արտաքին, անհոգի, վարչական մի սկզբունք (օրինակ, երբ քրիստոնեան ամուսնանում է հրէուհու հետ, վերջինս պիտի թողնէ իր կրօնը և մ՛ըտուի), երբ սէրը աշխատում են մտցնել արհեստական շրջանակների մէջ, հպատակեցնել անհոգի—ձևական պահանջներին։

Սէրը հպատակւում է իր սեփական օրէնքներին։

Կնոջ կրաւորական դրութիւնը, որ առաջ է գալիս նրա կազմուածքի թուլութիւնից և մարդկութիւնը բազմացնելու գործի մէջ նրան յատկացրած տանջալից դերից, հարկադրում է նրան որոնել իր կոչումը իրագործելու հնարաւորութիւն և մտնել աւելի ուժեղ սեռի հովանաւորութեան տակ։

Այս հանգամանքի շնորհիւ է, որ ընութիւնը կնոջ ներշնչել է ամենաուժեղ յատկութիւններից մէկը,—«դուր գալու ցանկութիւն»։

Այս ցանկութիւնը արտայայտւում է աղջկայ մէջ դեռ այն ժամանակ, երբ նա նոր է սկսում գիտակցաբար վերաբերուել իր շրջապատին։

Հասակաւոր աղջիկը արդէն զգում է մի անյաղթելի պահանջ մրցելու իր ընկերուհիների հետ ուժեղ սեռի առաջ։

Այստեղից է առաջ գալիս անդադար աճող հակումը դէպի զարդն ու զուքսը, հաճոյական ձևերը և սովորութիւններ իւրացնելը և ընդհանուր ուշադրութիւն դրաւելու ցանկութիւնը։

Խելացի կինն է միայն մտածում, թէ որքան ունայնութիւն կայ այդ բոլորի մէջ և որքան անհպատակ են ինքնասիրութիւն շոյող, բայց իսկապէս անբովանդակ այդ արարքները։

Սիրտը երկար ժամանակ զգում է, համարեա շօշափում է իր ընտրեալի մօտիկութիւնը, բայց չէ գտնում նրան։

Ուստի և որքան ուժեղ է լինում բոպէական բաւականութեամբ, կեղծաւոր խօսքերով և երկրպագուների հաճոյական արարքներով գրաւելը, այնքան զօրեղ է մենակութեան մէջ, օրինակ երեկոյթից յետոյ, զգացւում կեանքի կատարեալ դատարկութիւնը, որոնած իդէալի բացակայութիւնը...

Տղամարդուն բնութիւնը ներգործական դեր է յատկացրել, նա հասկանում է իր գերազանցութիւնը թոյլ սեռի վրայ, և այդ պատճառով էլ նա կանացի սեռի ուշադրութիւնը գրաւելու համար այդպիսի միջոցների դիմելու կարիք չունի։

Մինչդեռ կինը բաւարարութիւն ստացած ինքնասիրութեան զգացմունքով է հանդիպում իր վրայ ուղղած հայացքները, տղամարդը շատ անգամ բոլորովին անտարբեր կերպով է անցնում «ամենահետաքրքրական» անձնաւորութիւնների մօտով կամ թէ իր մեծութեան բարձրութիւնից սկսում է գնահատութեան ենթարկել նրանց գեղեցկութիւնը և հագուստները, բոլորովին չը մտածելով միևնոյն ժամանակ ուշադրութիւն գրաւել իր անձով։

Դուր գալու ցանկութիւն տղամարդու մէջ ծագում է գլխաւորապէս այն ժամանակ, երբ նրա համակրանքի առարկան նրա համար բոլորովին պարզուել է և այդ առարկային տիրելու ցանկութիւն է առաջ գալիս։ Այդ ժամանակ նա, ի հարկէ, աշխատում է դուր գալ։

Սկսում է նա առանձին ուշադրութիւն դարձնել իր արտաքինի, իր ձևերի, նոյն իսկ իր խօսքերի վրայ, որոնել շփման կէտեր իր և նրա բնաւորութեան, իր և նրա հայեացքների մէջ և այլն։

9.

Օդոստոսի 1-ն.

Թանկագին բարեկամ.

Կը հաւատաք, մեր սիրահարին չկարողացաւ ճանաչել ոչ ոք նրա ամենամօտիկ ընկերներից և բարեկամներից, այնքան փոխուել է նա։

Սիրուհու ազդեցութիւնը նրա վրայ ահագին էր. նա ամբողջովին վերածնուել է, ամեն բանի մէջ ազնուացել է։

Լաւ է, ի հարկէ, երբ մի մարդու ազդեցութիւնը միւսի վրայ կարող է առաջացնել այսպիսի բարերար, ազնուացնող ձգտումներ։ Մաքուր սէրը հէնց դրանով էլ մեծ է։

Նա, որին սիրում է մեր սիրահարը, շատ զարգացած, շատ կարդացած և կատարելապէս լուսաւորուած մի անձ է, որ ունի ահագին կամք և բնաւորութիւն. նա էլ կարող էր պահանջել երիտասարդից այդպիսի յատկութիւններ։

Եւ երիտասարդը սկսեց գիտակցաբար վերաբերուել իր բարոյական պարտաւորութիւններին, ոչ միայն իր վերաբերմամբ, այլ և այն հասարակութեան վերաբերմամբ, որի մէջ նա ապրում է։

Այսպէս, օրիորդը, ի միջի այլոց, սիրում էր թատրոնը, և երիտասարդը շինեց մշտական թատրոնական բեմ իր քաղաքի մէջ, նոյնպէս և շատ աջակցեց թատրոնի զարգացման, որ բարոյական մի դպրոց է ժողովրդի համար։

Օրիորդը սիրում էր կարդալ, և նրա սիրահարը հիմնում է շրջիկ գրադարաններ գիւղերում և ուրիշ կրթական հաստատութիւններ ժողովրդի համար։

Նա աշխատում էր բարձրանալ մինչև իր իդէալը, ապրում էր նրանով և սիրեց իր իդէալի մէջ—կնոջ մէջ, կանացիութեան գեղեցկութեան, քնքշութեան, կախարդիչ ներդաշնակութեան գաղափարը։

Այսպէս բարերար է իսկական սիրոյ ազդեցութիւնը մարդու վրայ։

Հէնց այդպէս էլ պիտի լինի, եթէ փոխադարձ ձգտումը կատարեալ բաւարարութիւն է ստանում, եթէ մի զոյգի սէրը հաւասարակշռուած է, այսինքն փոխադարձ սէր է։

Տղամարդը իր բնաւորութեան ոյժով, գուցէ խելքի կազմուածքով կնոջից շատ դիմացկուն է։

Մի անգամից կապուելով կնոջ հետ, նա երկար ժամանակ այլ ևս չէ մտածում ուրիշների մասին, և միայն կնոջից, նրա բնածին գրաւչութիւնից, նրա տաքացնող փաղաքշանքից է կախուած դարձնել այդ հաւատարմութիւնը անընդհատ և նոյն իսկ ատիճանաբար աճող։

Սիրող տղամարդն էլ, կատարելով իր սիրած

կնոջ քմահաճոյքները, նայում է այդ բանին, իբրև իր անձնուիրութիւնը արտայայտելու մի միջոցի։

Բայց հէնց այստեղ սկսւում են մի շարք անդիտակցական զիջումներ, որոնք կնոջը դնում են պատասխանատուութիւնների և արկածների սահուն ճանապարհի վրայ։

Երբ մի ամենափոքրիկ երկմտութիւնը, կասկածը, անվստահութիւնը կամ պատասխանը կնոջ մէջ յարուցանում է զրգռուած յանդիմանութիւններ, որոնց հետևում են նախ թեթև, ապա և լուրջ կռիւներ, այն ժամանակ երևան է գալիս խանդի զգացմունքը։

Բայց իսկապէս սիրող կինը, ամբողջովին նուիրուած իր սէրին, չէ կորցնում դուր գալու ցանկութիւնը, այլ կենտրոնացնում է այդ ցանկութիւնը, ինչպէս առաջ ասացինք, ըստ առապէս իր սիրած մարդու վրայ։

Նրա բոլոր ոյժերը գործադրւում են իր սիրածի սիրտը, այսպէս ասած, վերջնականապէս իր ձեռքը գցելու համար։

Բայց աւաղ, այսպիսի կատարեալ սէր մենք մեր գործնական կեանքում չենք տեսնում։

Ճնշուած արտաքին քաղաքավարութեան և գործնական հասկացողութիւնների պայմաններով, նա, ինչպէս մի քանի անգամ ասացինք, տարաբախտաբար, ստանում է լրիւ կերպարանք։

Այսպիսի պայմանների մէջ սէրը չէ կարողանում բաւարարութիւն տալ շրջապատողներին

դուր գալու այն ցանկութեան, որ բնածին է կնոջ մէջ։

Կինը բոլորովին համոզուած չէ թէ իր և իր սիրած մարդու մէջ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները խախուտ չեն. նա, մեծ մասամբ, երկիւղ է կրում, թէ իր բնածին կոչումը իրագործելու մէջ կարող է անսպասելի ընդհատում տեղի ունենալ։

Ինքը բնութիւնը, մարդկային աճեցողութեան սկզբունքի շահերը նկատի առնելով, պահանջում է յարատևութիւն սիրոյ մէջ։

Եւ երբ այդ յարատևութիւնը չէ բղխում սիրային կապի ոյժից, երբ մի կողմի անձնուիրութիւնը կատարելապէս չէ համապատասխանում միւս կողմի անձնասիրութեան, հաւասարակշռութիւնը խանգարւում է և դուր գալու ցանկութիւնը, թէև բոլորովին անգիտակցաբար և ոչ դիտաւորեալ, իր ամբողջ ոյժով մնում է կնոջ մէջ։

Ահա թէ ինչու մենք տեսնում ենք, որ կանանց մեծամասնութիւնը մինչև չափազանցութիւնը զբաղուած է հագուստներով, մեծ յօժարութեամբ ժամանակը անց է կացնում երեկոյթների, պարերի, խնջոյքների մէջ, ուր սիրուած մարդը երկրորդական նշանակութիւն ունի։

Ահա թէ ինչպէս պէտք է հաւանականաբար բացատրել կանանց մշտական մրցութիւնը «երկրպագուների խումբ» գրաւելու մէջ շքեղ երեկոյթների, բալերի ժամանակ...

Բարեբախտաբար, միշտ չէ այսպէս լինում.

ամեն ինչ կախուած է սիրոյ ոյժից, սիրահար զոյգի բնաւորութիւնից և բնութիւնից։

Ահագին նշանակութիւն ունի սիրահար զոյգի վարքը մինչև հանդիպումը, փոխադարձ ոգևորութիւնը. շատ բան կախուած է կրթութիւնից, այն հասարակութիւնից, որի մէջ պատում է այդ զոյգը և ուրիշ այլ պատճառներից։

10.

Օգոստոսի 7-ին.

Թանկագին բարեկամ.

Ինչպէս ասացի վերևում, մի ամենափոքրիկ երկմտութիւն, մի անվստահութիւն, մի կասկած թոյլ է տալիս կնոջը զրգռուած յանդիմանութիւններ անել, որից յետոյ սկսւում են նախ թեթև, ապա և լուրջ կռիւներ.—այստեղ ուղղակի սկսւում է խանդի զգացմունքը։

Խանդը մի զգացմունք է, որ համարեա ամենքը ունեն և ամենքն էլ դատապարտում են։

Նրա հիմքը, ասում են, ամենից առաջ անվստահութիւնն է, հաւատ չընծայելը. իսկական սէրը չէ կարող տանել մի այդպիսի թունաւոր խառնուրդ։

Սէրը չէ ընդունում անվստահութիւն, հաւատի պակասութիւն. կարող է այս մասին որ և է կասկած լինել։

Սէրը, այս բառի բացարձակ մտքով, պէտք

է խիստ հաւասարակշռուած լինի անխախտելի փոխադարձութեամբ և կատարելապէս բաւարարութիւն ստացած. այդպիսի սէրը չէ կարող մի այլ հիմք ունենալ, բացի բացարձակ համակրանքից, բացարձակ հաւատից։

Ինքը, այդ «հաւատ չընծայել» խօսքը, արդէն մի հասկացողութիւն է, թէ կայ մի բան, որ բաժանում է սիրող էակներին, հեռու է պահում իրարից։

Հետևաբար, երբ խօսք է լինում թէ չկայ հաւատ երկու՝ միմեանց սիրող անձանց մէջ, նշանակում է, թէ նրանց սէրն էլ կասկածելի է։

Բայց իրողութիւնն այն է, որ մեծ մասամբ խանդը նոյն սիրոյ արտայայտութիւնն է, որ սաստիկ դրդուում է զուտ արտաքին հանգամանքների ազդեցութեան տակ։

Բոցի պէս սէրը այրւում է հանդարտ և հաւասար, մինչև որ չէ խանգարւում նրա հաւասարակշռութիւնը։

Բաւական է, մեծ մասամբ, մի թեթև քամու փոքրիկ շունչը, մի քանի կաթիլ ջուր կամ կողմնակի այրեցիկ մի նիւթ, և բոցը սկսում է բարձրանալ, տարածուել։

Երբ սիրային յարաբերութիւնները գտնւում են բնական դրութեան մէջ, խելքը կամ բանականութիւնը բոլորովին յետ են քաշւում կամ բոլորովին հաւասարակշռւում են զգացմունքի հետ. մարդը, այսպէս ասած, զգում է այն, ինչ մտածում է, և մտածում է այն, ինչ զգում է։

Ահա ինչու սիրահարուած անհատներին բոլորովին բնական են երևում այն արարքները, որոնք թէև բոլորովին անհեթեթ են գործնական տեսակէտից, բայց համապատասխանում են նրանց զգացմունքին։

Այս յարաբերութիւնների մէջ տեղի ունեցող ամենաթեթև տատանումն անգամ խանգարում է հաւասարակշռութիւնը զգացմունքի և բանականութեան մէջ և վերջինս, ինչպէս տիրապետող սկզբունք, ի հարկէ, ուրախ է օգտուելու իր բոպէական ազատութեամբ, որպէս զի հակառակորդին հպատակեցնէ իր գործնական պահանջներին...

Այդ մրցութիւնն էլ ծնեցնում է մարդու մէջ այն կսկծալի, անորոշ, բնազդային կամ անըմբռնելի զրուցիւնը, որ անուանւում է խանդ,—ինչպէս արդարացի կերպով բնորոշում է այդ բանը մի գիտնական։

Մարդը սկսում է կշռել իր յարաբերութիւնները դէպի իր սիրած էակը, ստուգել իր խելքում նրա իւրաքանչիւր արարքը, վերլուծել նրա իւրաքանչիւր խօսքը և, վերջապէս, չափ ու կշռի տակ դնել իր սեփական գործողութիւնները։

Այդտեղ կան կասկածի, անբաւականութեան, դրդման և, վերջապէս, տանջանքի բոլոր տարրերը, բայց դեռ չկայ հաւատ չընծայելը, որ կըտրում է ամեն մի կապակցութիւն։

Հաւատի պակասումը տեղի է ունենում միայն այն բոպէին, երբ ծայրայեղ լարման է հասնում

այն դրութիւնը, որ մենք անուանում ենք խանդ, այսինքն այն ժամանակ, երբ ոտնակոխ եղած հաւատի զգացմունքը արդէն դառնում է վրէժի ծարաւ և սիրոյ զգացմունքը վերջնականապէս ճընշւում է կամ բոլորովին մի կողմ է քաշւում (Օթէլլո և Դեզդէմոնա)։

Պէտք է ասել, որ յաճախ, երբ տանջանքը երկուստեք է լինում, իսկ սիրոյ զգացմունքը բոլորովին անխախտ է մնում, այդ վրիժառութիւնը չէ կարող տեղական լինել։

Բաւական է մի ջերմ փաղաքշանք, մի քընքոյշ խօսք, թեթև զղջում, փոքր ի շատէ բաւարար բացատրութիւն և խանդոտը անձնատուր է լինում, խաղաղութիւնը հաստատւում է վերջնականապէս։

Լաւատեղեակները ասում են, թէ այդպիսի բռնկումները յաճախ նոյն իսկ աւելի ամրացնում են սէրը երկու սիրահարների մէջ։ Ճիշտ է սա։

Այս բոլոր ասածից պարզ հետևում է, որ խանդի աղբիւրը հաւատ չընծայելը չէ, որ միայն հաւաքուած և միմեանց վրայ կուտուած կասկածների հետևանքն է, այլ գուցէ այն յամառութիւնը, որով այս կամ այն կողմը պաշտպանում է իր կեղծ ինքնասիրութիւնը, իր նախապաշարմունքները և վատ հակումները։

Երբ սէրը կատարեալ ներդաշնակութիւն է կազմում, խանդի համար այլ ևս տեղ չէ մնում։

Իսկ ներդաշնակութեան համար անհրաժեշտ հարկաւոր է երկու կողմերի զգացմունքների, հա-

մոզմունքների և սովորութիւնների եթէ ոչ կատարեալ համաձայնութիւն, ձայնակցութիւն, գոնէ խիստ հաւասարացում՝ փոխադարձ զիջողութեան միջոցով։

Եթէ տղամարդու և կնոջ հոգիները թւում է թէ կատարելապէս միախառնուել են, բայց տղամարդը պահել է ուրիշ կանանց ետևից ընկնելու վատ սովորութիւնը, իսկ կինը «դուր գալու ցանկութիւնից» ձեռք չէ վերցնում, սիրոյ հաւասարակշռութիւնը անպատճառ պիտի խանգարուի։

Զիջողութիւնը և սրտաբացութիւնը խանդի ամենալաւ հակադրութիւնն են կազմում։

Այն տղամարդը, որ ընդունակ չէ այսպիսի յատկութիւններ ցոյց տալու, բնաւորութիւնից զուրկ մի մարդ է և արժանի է դժբաղդ սիրոյ չարչարանքներին։

Բայց թող ներեն իմ փափկասուն ընթերցողուհիները, եթէ ասեմ, որ այստեղ պատասխանատուութեան ամենամեծ մասը կնոջ վրայ է ընկնում։

«Դուր գալու ցանկութիւնը», որ ընածին է կնոջ մէջ, յաճախ դառնում է ամեն դժբախտութիւնների ամենասաստիկ դրդիչ, եթէ կինը չէ կարողանում խեղդել նրան իր սիրոյ մէջ։

Դուր գալու ցանկութիւնը առաջացնում է վտանգաւոր և ափեղցփեղ ընդհարումներ օտար տղամարդկանց հետ և, առհասարակ, այնպիսի գործողութիւններ է պատճառում, որոնք զօրով

անհամաձայնութիւն են զգում կնոջ և սիրուած մարդու մէջ, փոխադարձութեան երջանկութիւնն են կրճատում և ցրտացնում են զգացմունքը կամ խանդ են զրգռում։

Եթէ կինը միշտ խնամքով, աղնուաբար և անկեղծ պահէր-փայփայէր իր ձեռք բերած փոխադարձ սէրը, նա կը կարողանար գտնել իր մէջ բաւականաչափ խելացիութիւն և խոհեմութիւն՝ խանդ զրգռելու ամեն առիթները հեռացնելու և իր զգացմունքների վերաբերմամբ ամեն մի չնչին կասկած անգամ ցրուելու համար։

Մարդկային սիրտը լաւ ճանաչողներից շատերը հաւատացնում են, թէ ճշմարիտ սիրող մարդը յաճախ չէ տանում, որ իր սիրած կինը և մի ուրիշ տղամարդ նոյն իսկ չափազանց սիրալիր կերպով փոխանակեն ողջոյններ, ֆիզիկապէս մօտիկ լինեն իրար, օրինակ ամուր սեղմեն իրար ձեռք, նստեն մի կառքի մէջ և այլն, չէ տանում երկդիմի խօսակցութիւնը նրանց մէջ կամ բարեկամական գրագրութիւնը։

Այստեղ նոյնպէս չըկայ չը հաւատալու նշոյլ անգամ։ Իւրաքանչիւր այսպիսի մի փաստի մէջ նա միայն տեսնում է, որ մի օտար տարր խուժում է իր զգացմունքի շրջանի մէջ, և դրանից նոյն իսկ տանջանքներ է զգում, այն, ինչ պատճառում է, առհասարակ, ամեն մի անկոչ միջամտութիւն նրա կեանքի մէջ։

Այս դէպքում նրա համար թանկ է իր սիրոյ ամբողջութիւնը, նա պիտի խնայէ այդ զգացմունքը,

պիտի իր սիրած մարդու բնաւորութեան ամենատիպարիկ առանձնայատուկ յատկանիշները ըմբռնէ և հնար եղածին չափ խուսափէ այն ամենից, ինչ յարուցանում է նրա մէջ նոյն իսկ ծածուկ զրգռում։

Դրա վարձատրութիւնը կլինի սիրոյ ներդաշնակութիւնը, յաւիտենական և անկողոպտելի...

Ի դէպ, թանկագին բարեկամ, ուշադրութեամբ նայեցէք այն պատկերին, որ զետեղուած է այս գրքոյկի սկզբում։

Գեղարուեստի հրաշակերտներից մէկն է դա. նկարչի վրձինը բաց է արել յաւիտենականութեան վարագոյրը և անմահացրել է յաւիտենական եւ անմահ սիրոյ տեսարանը. նայելով նրան, չէք համոզուում, որ այդ սէրն է մարդկային սրտին յատկացրած, որ նա է մարդկային ցեղի նեցուկը։

Ձեր առջև սիրող և սիրահար էակն է։ Դժբախտաբար, ճակատագիրը հարուածեց նրան իր անգութ տնօրինութեամբ. նրա սիրած մարդը յանկարծահաս մեռաւ։ Եւ ահա չքնաղ օրիորդը, այդ որբացած հարսնացուն, պատրաստել է տուել իր սիրած, ծաղիկ հասակում հանգած փեսացուի կիսարձանը և դրել է նրան գերեզմանատանը, իսկ յայտնի օրերին գնում զարդարում է այդ նուիրական կիսարձանը թարմ ծաղիկներով։

Եւ կիսարձանի շրթունքների վրայ ահա նա թողնում է իր անմահ սիրոյ համբոյրների հետ-

քերը, որոնք նման են գարնանային վաղորդեան ցո-
ղերին։ Նայեցէք այդ դէմքին, նայեցէք այդ համ-
բոյրին. հանճարեղ վրձինը սրտի անհուն մի պատ-
մութիւն է դրել։

Այսպէս կարող է սիրել միայն դեղեցիկ սե-
ռը։

Դիտեցէք պատկերը. նկարիչը չէ մոռացել և
մարդկային ցեղի միւս կէսը. ահա պատկերի ձախ
կողմում տեսնում էք մի փոքրիկ կիսարձան, որ
զարդարում է մի կնոջ գերեզմանը։ Անշուշտ նրա
առջև էլ կանգնում է սիրող տղամարդը և նոյն
ձևով պաշտում է այդ հանգուցեալին...

Ճարտար նկարչի այս ստեղծագործութիւնը
թող, բարեկամ, տաքացնէ մեր սառցապատ սըր-
տերը փոխադարձ սիրոյ վեհ գաղափարով...

11.

Օգոստոսի 15-ին.

Թանկագին բարեկամ.

Պարզ է, որ խանդի զգացմունքը նոյնքան
բնական և օրինաւոր է, որքան ինքը, սիրոյ զգաց-
մունքը. պարզ է, որ դա ոչ միայն հոգեկան, այլ
և ֆիզիոլոգիական դրութիւն է, որ բնորոշում է
սիրոյ փոխադարձութեան խանգարուած հաւասա-
բակշռութիւնը։

Չէ զգում այդ դրութիւնը միայն այն մար-
դը, որ իր սեփական «ես»ը կատարելապէս դի-

մադուրկ է արել, երբ սիրած կնոջ կամքն ու
քմահաճոյքը դառնում են նրա համար անխախտ
օրէնքներ և ոչինչ բողոք չը վերցնող վճիռներ։

Սովորական լեզուով այդ դրութիւնը ա-
նուանուում է «գանուել կոշիկի տակ»։

Այդ զգացմունքը խորթ է մնում մարդուն,
եթէ նա այնքան հաւատում է իր սիրոյ ոյժին,
այնքան համոզուած է, թէ ինքը բարձր է ամ-
բողջ շրջապատից, որ հեռացնում է իրանից ա-
մեն մի կասկած կողմնակի ազդեցութիւնների և
հանգամանքների վերաբերմամբ։

Իսկապէս, սիրող տղամարդին «ես»ից զրկե-
լը նոյնքան անգրաւիչ ծայրայեղութիւն է, որ-
քան կնոջ համար վտանգաւոր է մեծամտութիւնն
ու ինքնապաշտութիւնը։

Տղամարդը կատարելապէս հպատակուել կնո-
ջը կարող է միայն ի միաս իր մտաւոր եռանդի
և ֆիզիկական ոյժի։

Նոյնպէս ցանկալի չէ կնոջ կատարեալ հպա-
տակութիւնը տղամարդուն։

Այստեղ երևում է սիրոյ փոխադարձութեան
բացարձակ խանգարումը։

Մեզ թւում է, որ կինը ի զուր ուրախա-
նում է, տեսնելով, որ տղամարդու յարաբերու-
թիւնների մէջ դէպի իրան բացակայում է խան-
դը, մինչդեռ ինքը բաւական առիթներ է տալիս,
որ զարգանայ այդ զգացմունքը։

Խանդի զգացմունքը մի անցողական դրու-
թիւն է, բայց և այնպէս՝ երկու կողմերին տալիս

է հնարաւորութիւն, որ իր ժամանակին հոգ տանեն հաւասարակշռութիւնը պահպանելու համար։

Թաղցնելով իր մէջ այդ զգացմունքը, սիրող մարդը անգիտակցաբար ճնշում է դրանով և սիրոյ զգացմունքը. վաղ թէ ուշ գալիս է այն րոպէն, երբ նրա՝ դէպի սիրած էակը ունեցած յարաբերութիւնների մէջ սկսում է երևալ մինչև այդ չեղած սառնութիւն։ Այստեղից միայն մի քայլ է մնում մինչև խանգարուած փոխադարձութեան կատարեալ քայքայումը։

Կան մի քանի պատճառներ, որոնք հաստատում են այն եզրակացութեան, թէ խանդը ժամանակակից սիրոյ մէջ շատ կարևոր դեր է կատարում։

Այդ պատճառներից մէկը պէտք է համարել այն տարրական ճշմարտութիւնը, թէ ճշմարիտ սիրող սրտի մէջ կամ խանդն է սպանում սէրը կամ սէրն է սպանում խանդը։ Հակառակ երևոյթ կարելի է նկատել միայն այնտեղ, ուր երևան է գալիս կիրքը։

Իսկ կիրքն է, որ համարեա միշտ հանդիսանում է ժամանակակից սիրոյ դրդիչ։

Մեր օրերի սիրահարը հասնում է այդ կրքին, որովհետև զօրեղ ցնցումների սաստիկ ծարաւ ունի, որով ուզում է արբենալ, որովհետև ունի անբուժելի վէրքեր, որ պատճառել են նրան հիասթափումը, անսանձ կեանք վարելը։ Սա զարմանալի էլ չէ մեր ներվային դարում. այսօր ամեն բան, վաղը ոչինչ։

Ժամանակակից հասարակութեան մէջ, ամեն տեղ և ամեն մի անկիւնում, սկզբից մինչև վերջ, վերևից մինչև ցած, ամենքը իրար հետ թշնամացած են, գոյութեան կռիւ մղելով, աջ ու ձախ իրար չեն հաւատում։ Չեն հաւատում ընկերին և անծանօթին, չեն հաւատում ընտանիքին։ Մարդիկ ապրում են անհոգի, առանց իդէալների։

Էլ ինչու այն մարդը, որ անցել է կեանքի այդ դպրոցը, պիտի յանկարծ գտնէ իր մէջ հաւատաւոր ողջախոհութեան աղբիւր, մանաւանդ երբ ենթարկուած է այն զգացմունքի ազդեցութեան, որ գազանի մնացորդն է փոթորկում նրա մէջ։

Աւելացրէք դրան և այն, որ տասից իններ մարդ, մինչև ամուսնութիւնը կապեր ունենալով կանանց հետ, չեն յիշում մի այնպիսի դէպք, երբ հաւատարիմ մնացած լինեն կնոջը։

Կանանց անհաւատարմութիւնը չէ, որ մեզ սովորեցնում է չը հաւատալ նրանց, այլ մեր սեփական անհաւատարմութիւնը։

Խանդը զանազան տեսակներ ունի, բայց առօրեայ կեանքի մէջ դրանց վերաբերմամբ ոչինչ տարբերութիւն չեն դնում։ Ասում են. «կինը կամ տղամարդը խանդոտ» է։

Խանդի ձևերը յաճախ շփոթւում են և իրար հետևում, իսկ կրքի բնաւորութիւնը տարբեր է։ Խանդի ամենապարզ և ամենայայտնի տիպը — զգայնական խանդն է։

Մի փիլիսոփայ շատ վաղուց այսպէս է որո-

շել խանդը. նա, ով կարծում է, թէ իր սիրած կինը ուրիշին է անձնատուր լինում, տանջւում է ոչ միայն այն պատճառով, որ այդ անհաւատարմութիւնը կարող է իր կրքի համար արգելք դառնալ, այլ և այն պատճառով, որ նա անհրաժեշտօրէն իր սիրած կնոջ պատկերի հետ միացնում է և իր հակառակորդի պատկերը։

Ուստի նա սկսում է ատել այդ կնոջը և այս բանը դառնում է խանդ, որ ուրիշ բան չէ, բայց միայն այն, որ հոգին ստիպուած է սիրել և դրա հետ ատել միևնոյն առարկան։

Այդ ցեխոտման պատկերը, ինչպէս ներկայացնում է հակառակորդը, որ ապականում է պաշտած մարմինը, միանման ոյժ չունի այն դէպքում, երբ կնոջ այդ մարմինը մեզ է պատկանում արդէն և այն դէպքում, երբ մենք երբէք չենք տիրել նրան։

Այստեղ պարզ երևում է խանդի երկու տեսակը։

Այն դէպքում, երբ մենք խանդ ենք տածում մի կնոջ վերաբերմամբ, որ երբէք մեզ չէ պատկանել, կայ շատ հաւանականութիւն, որ այդ խանդը կը վերջանայ զզուանքով և մեր կիրքը բոլորովին կոչնչացնէ։

Իսկ եթէ, ընդհակառակն, այդ կինը արդէն մերն է, այն փաղաքշանքները, որ նա թափում է մեր հակառակորդի վրայ, դառնում են մի պատկեր, որ մի անսովոր ոյժով զարթեցնում է մեր

մէջ յիշողութիւններ նոյն այդ տեսակ փաղաքշանքների մասին, որ նա մեզ էր տալիս։

Այս յիշողութիւնները ներգործում են մեզ վրայ և զրգռում են զգայնական խանդ, որ իր կողմից ծնեցնում է սաստիկ կիրք. այստեղ, անկասկած, մեծ դեր է խաղում նոյնպէս և ինքնասիրութիւնը։

Մենք կարող ենք լաւ ճանաչել մեր խելքն ու սիրտը, բայց երբէք չենք կարող ճանաչել այն գաղանային բնազդները, որոնք թաղնուած են մեր մէջ. ուստի և երբէք չենք կարող ասել «այս կինը ոչինչ իշխանութիւն չունի ինձ վրայ»։

Դեռ Նապոլէոնն է ասել, թէ սիրոյ մէջ միակ յաղթութիւնը փախուստն է։

Զգայնական խանդը սէրից երկար է տևում։

Սա պիտի որ միխիթարանք լինի թողնուած բոլոր կանանց համար, եթէ նրանք սրտից չեն տանջւում, այլ միայն մնափառութիւնից։ Իրանց դաւաճանող և թողնող տղամարդկանցից վրէժ հանելու համար նրանց ճնում է միայն մի նոր տղամարդ ձեռք բերել (սիրական)։ Գուցէ սրանով նրանք չեն վերադարձնի անհաւատարիմ երկրպագուին, բայց կարող են հաւատացած լինել, որ դորանով ցաւ կը պատճառեն նրան։

Ահա սա է մէկը մարդ-գազանի ամենամեծ դժբախտութիւններից։

Ո՛չ պատիւը, ոչ սէրը այնպէս չէ ազդում խաբուած տղամարդի վրայ, որ նրա մէջ միտք ծագէ սպանել իրան խաբող կնոջը։

Սպանութիւնը զգայնութեան շնորհիւ է տեղի ունենում, հեշտասիրութիւնը յաճախ մօտ է կատաղութեան։

Զգայնական խանդը դանազանւում է միւս բոլոր խանդերից նրանով, որ երևան է գալիս ժամանակ առ ժամանակ, ոմանք այն պատկերներից, որոնք զրգռում են նրան։

Դա ընդհատուող և նորից վերանորոգուող խելագարութիւն է, դէպի որը սառնասրտութեամբ մղում են մեզ չափազանց անբարոյականացած կանայք։

Նրանց դէմ մենք նոյն այս տեսակի զէնք կունենայինք, եթէ իմանայինք արհամարհանքով վերաբերուել նրանց ստորութեանը։

Դժբախտաբար, այդ արհամարհանքը միայն աւելացնում է մեր կիրքը, իսկ այդտեսակ կանայք իրանց ստորութիւնը չեն զգում։

Սիրել մի սիրով, որի մէջ գերակշռողը զգայնութիւնն է, նշանակում է շարունակ բոցավառուել կրքով և շարունակ տանջուել ցանկութիւնների անյագ ծարաւից։

Սիրել սրտով նշանակում է գտնել բարձրագոյն երջանկութիւն ինքնուրացութեան մէջ, ուստի և պէտք է ապացուցուած համարել, որ սիրել սրտով—նշանակում է վաղօրօք ամեն ինչ նեբել նրան, ում սիրում են։

Թոյլ տանք մեզ ասել, որ զգայնական խանդը աւելի համարւում է կոպտութիւն. իսկ սրտի խանդը երևում է հազիւ նշմարուող կերպարանքով։

Առաջինը յաճախ տղամարդկանց բաժինն է լինում, երկրորդը՝ կանանց։

Այն բոլոր հանգամանքների մէջ, երբ գլուխը գերակշիռ է հանդիսանում սրտի և զգացմունքների վրայ, սէրը անհետանում է, որպէս զի տեղ տայ եսամոլութեան,—մի եսամոլութիւն, որ աւելի ևս զզուելի է այն պատճառով, որ յաճախ ծածկուած է սենտիմենտալիզմի դիմակով և վարակուած է ստոփառութեամբ։

12.

Օդոստոսի 21-ին.

Թանկագին բարեկամ.

Խանդի զգացմունքը մեծ մասամբ այնքան սերտ կապուած է մարդկային բնաւորութեան հետ, որ մենք տեսնում ենք նրան բոլոր ազգերի մէջ, բոլոր ժամանակ և կուլտուրական զարգացման բոլոր աստիճանների վրայ։

Խանդին հպատակ է ոֆրիկեան որ և է վայրենու սիրտը, նրա հետ և բարձր կուլտուրական զարգացման հասած եւրոպական գիտնականի սիրտը...

Գիտնականների մի մասը ապացուցանում է, որ նախնական մարդկութիւնը բոլորովին ծանօթ չէ սիրոյ կրքին, որ կուլտուրայի սանդուղքի առաջին աստիճանների վրայ կանգնած մարդիկ

պարզապէս արուներ և էգեր են և հնազանդւում են միայն պտղաբերութեան բնազդին։

Պէտք է նկատել, որ եթէ գոյութիւն ունի սիրային կիրքը, պէտք է որ գոյութիւն ունենայ և խանդը։

Սիրային կրքից յափշտակուած մարդը ուզում է սիրոյ առարկայի միակ տէրը լինել, և ամենն մի մարդու, որ փորձում է տիրանալ այդ առարկային, խլել նրան, նա, բնականաբար, նայում է իբրև իր արիւնարբու թշնամու։

Հէնց միայն այն երկիւղը, թէ այդպիսի փորձ կարող է լինել «նրա սեփականութեան» վերաբերմամբ, դարձնում է նրան անհանգիստ և կասկածոտ։

Նրան լափում է կասկածը, նա մռայլ կերպարանք է ստանում, նա հետզհետէ ամբողջովին անձնատուր է լինում այն անշարժ մտքին, որ կրծում է նրա ուղեղը։

Չը կայ մի փուչ ու դատարկ բան, որ չը յուզէ խանդոտին։

Սակայն նա ինքն էլ անգործ չէ մնում. իր ամբողջ ժամանակը տալիս է այն բանին, որ իր հոգու մէջ մտուցանէ և աճեցնէ այդ անհանգիստ ծնունդը—խանդը։

Նրա համար եռանդով աշխատում են, ջանալով ապացուցանել նրան, թէ որքան անհեթեթ և անհիմն են նրա կասկածները. նա խոհեմութեամբ համաձայնում է այդ բոլորի հետ, խոստովանում

է իր սխալը, մինչև իսկ հեգնում է ինքն իրան և, ըստ երևոյթին, բոլորովին հանգստանում է։

Բայց այդ հանգստութիւնը ընդամենը մի քանի րոպէ է շարունակւում։

Այն ակնթարթից, երբ նրա ուղեղը կասկածների աւար է դարձել, այլ ևս ոչ մի հնարաւորութիւն չէ մնում, որ նա պահպանէ հաւասարակշռութիւնը։

Խանդոտ մարդը կամ երջանիկ լինելու չափ հանդիստ է, կամ կատաղելու չափ յուզուած, բայց իսկապէս բոլորովին չէ հասկանում ինչ անել, ինչի՞ վրայ կանգ առնել։

Նա զզուելի կերպով լրտեսում է իր կրքի առարկային անձամբ և ուրիշների միջոցով, նա չէր կամենայ աչք հեռացնել իրան անհանգստացնող մարդուց։

Իւրաքանչիւր հայեացք, իւրաքանչիւր ժպիտ նա բացատրում է հազար ու մի տեսակ և վերջ ի վերջոյ ընկնում է ամենամռայլ կասկածի մէջ։

Չար զգացմունքը նրա մէջ միշտ բարի զգացմունքից գերակշիռ է հանդիսանում։

Դիտող մարդիկ նկատել են, որ խանդոտներին մանաւանդ սաստիկ զրզռում է և այն, երբ նրանք տեսնում են, որ իրանց սիրած կինը ուրախ խօսակցում է մի որ և է ուրիշ տղամարդու հետ։

Այդ ուրախ տրամադրութիւնը, այդ ժպիտները, այդ ծիծաղը խանդոտի համար դաւաճանութեան անհերքելի ապացոյցներ են։

Այստեղ սիրած կնոջ ծիծաղը նա ուղղակի իր հաշուին է ընդունում. այդ կինը իր վրայ է ծիծաղում, և ում հետ—իր հակառակորդի հետ։

Խանդոտը կը կամենար, որ ոչ ոք չը կարողանար նայել իր սրտի սիրած կնոջ։

Մի քանի խանդոտներ իրանց սիրածին փակուած են պահում. նրանք չեն ուզում, որ մէկը տեսնէր նրան, բացի իրանից, որ մէկը համաձակուէր հիացմունքով նայել նրան։

Մի խանդոտ բանուոր դատում էր այն պատճառով, որ փորձել էր սպանել իր կնոջը. իսկ կնոջ մեղքն այն էր, որ լինելով կրօնասէր, ուզում էր եկեղեցի գնալ. բանուորը այդ էլ չէր թոյլատրում։

Աշխարհիկ շրջանին պատկանող խանդոտը, պէտք է ենթադրել, կատարեալ տանջանք է զգում մի որ և է բազմամարդ պարերեկոյթում, երբ տեսնում է, թէ ինչպէս հակառակորդը գրկում է իր սիրած կնոջ մէջքը և պտոյտներ է անում նրա հետ պարի մէջ։

Ի հարկէ աշխարհիկ պարերեկոյթներում մարդիկ դեռ կարողանում են պահել իրանց. բայց պէտք է տեսնել, թէ ինչ է կատարուում այն պարերեկոյթների և խնջոյքների մէջ, որոնք տեղի են ունենում հասարակ ժողովրդի խաւերում. կարելի է անթիւ օրինակներ բերել։

Ամենահանդարտ և հեզ մարդը խանդի ազդեցութեան տակ դառնում է կատաղի գազան. սա սովորական երևոյթ է։

Նրան կեղեքում, չարչարում է խանդը, նա խորապէս տանջուում է և ուզում է, որ նա, ով իր այդ տանջանքների պատճառն է դարձել, քաւէ իր մեղքը նոյնպէս տանջանքներ կրելով։

Նա սկզբում մռայլ է, մրթմրթում է ինքն իրան, յետոյ անցնում է յանդիմանութիւններին, կատաղի հայհոյանքներին, սպառնալիքներին և վերջացնում է ծեծով։

Խանդոտը, ըստ երևոյթին, չէ կարող իրան յետ պահել կռուից. նրա ձեռքերը քոր են գալիս։

Հասարակ ժողովրդի ընտանիքներում խանդը առաջացնում է ապտակների և բռունցքների մի ամբողջ հեղեղ նոյն անողորմ լոգիկայով, ինչպէս փոթորկալից ամպը անձրևի հեղեղներ է թափում։ Այստեղ լրտեսելը դառնում է մի ինչ-որ բնական պահանջ. կինը, ինքն ըստ ինքեան հասկանալի է, տղամարդուց յետ չէ մնում։

Խանդը կնոջ կողմից մեծ մասամբ ներուում է և նոյն իսկ սիրոյ ապացոյց է համարուում, բայց միայն յայտնի սահմանների մէջ։

Երբ խանդոտը ոտնակոխ է անում ամեն մի սահման,—մի բան, որ, տարաբախտաբար, յաճախ է տեղի ունենում—, այն ժամանակ համբերութիւնն էլ դուրս է գալիս սահմանից, և այդպիսի միջոցով ապացուցուող սէրը կորցնում է իր ամբողջ գեղեցկութիւնը։

Գալիս է ըստէ, երբ խանդը ընտանեկան օջախը կատարեալ մի դժոխք է դարձնում, և այն

ժամանակ խեղճ կինը, անաբեկուած այդ վագրային սէրից, փախչում է առանց յետ նայելու։

Մօտ ժամանակներում այսպիսի սիրոյ զոհերից մէկը դատարանում պատմում էր, որ իր ամուսինը համարեա պսակադրութեան րոպէից սկսած եօթը տարուայ ընթացքում, անդադար, օրը օրին, հալածում էր իրան, կնոջը, յանդիմանութիւններով, կռիւներով, հայհոյանքներով և սպառնալիքներով։ Ի դէպ ասենք, որ այդ կնոջ մարդու էին տուել ծնողները առանց նրա կամքի։

Նա պատմում էր, որ իր ամուսինը անդադար կրկնում էր. «Կառնեմ երկու տարճանակ և կպահեմ մահճակալիս մօտ. առաջ կնոջս կսպանեմ, յետոյ ինձ»։

Վերջացաւ այդ դրաման նրանով, որ տղամարդը շատ ծանր վէրք հասցրեց իր անբիծ կնոջը և սպանեց իրան։

Մեր շուրջը, կեանքի մէջ, այսպիսի օրինակներ շատ և շատ կան։ Եւ մեծ մասամբ դժբախտ կանայք չեն կարողանում մի ճշմարիտ ելք գտնել իրանց համար, ուստի յաճախ ակամայ ընկնում են անառակութեան գիրկը։

Մի ուրիշ խանդոտ սովորութիւն էր դարձրել ամեն գիշեր իր բարձի տակ մի ահագին խոհանոցային դանակ դնելը։

Նրա կինը, յուսահատութեան հասնելով մահուան այդ մշտատև սպառնանքի տակ ապրելու մտքից, վերջ ի վերջոյ չդիմացաւ և փախաւ իր ծնողների մօտ։

Խանդոտ ամուսինը գնաց նրա մօտ, ունենալով, ըստ երևոյթին, ամենախաղաղ դիտաւորութիւններ, համոզում էր նրան, ամենախորին զղջում էր յայտնում, և կարողացաւ այնպէս անել, որ կինը նորից վերադարձաւ իր մօտ։

Բայց վերադառնալուն պէս սկսուեց հին պատմութիւնը. ամուսինը էլի այն էր, նոյն իսկ աւելի վատանում էր։

Երբ կինը սկսեց համոզել, որ աւելի լաւ է խնդրել ապահարզան, ամուսինը ոչխարի պէս մորթեց նրան։

Խանդոտները մի անսովոր կատաղութիւն և անգթութիւն ունեն դէպի իրանց զոհերը. տանջելիս նրանք ոչ մի սահման չեն ճանաչում։

Կու�ում են, հարուածներ են հասցնում, ինչով ասես, աչքին, քթին, փորին, ոտներին. ատամներ են ջարդում, կոտրում են մատները և այլն։

Ահա մի նշանաւոր դիպ. ծեծելով իր զոհին, խանդոտը չէ թոյլ տալիս նրան բղաւել և գանգատուել. գանգատները միայն կրկնապատկում են խանդոտի կատաղութիւնը, և նա այդ գանգատներին պատասխանում է նոր և նոր տանջանքներով։

Եւ այդ գազանային բռնութիւնների զոհերից շատերը անտրտունջ դիմանում են զարմանալի երկար ժամանակ։

Ազգականները, ծանօթները, հարևանները տեսնում են, որ կինը սաստիկ ծեծուած է, հար-

ցնում են թէ ինչ է պատահել, իսկ նա սովորաբար չէ մատնում իրան տանջողին և հնարում է զանազան պատճառներ իր մարմնի կապտած տեղերը բացատրելու համար։

13.

Օգոստոսի 27-ին.

Թանկագին բարեկամ.

Խանդը յաճախ այն աստիճան անհիմն է լինում, որ երբ յանցանք գործած խանդոտը կանգնում է դատաւորների առաջ, վերջիններիցս մի քանիսը սկսում են վիճել և ապացուցանել, թէ այս յանցանքի մէջ ոչ մի խանդ չէր կարող լինել, թէ խանդոտութեան ոչ մի առիթ տեղի չունէր և թէ մեղադրուողը դիտմամբ սուտ է ասում և շփոթում է, որպէս զի կարողանայ մի որ և է արդարացում գտնել իր համար։

Տարաբախտաբար, առիթների բացակայութիւնը, ինչպէս արդէն տեսանք, ոչ մի կերպ չէ կարող ապացոյց լինել, թէ բացակայ էր և խանդը։ Ոչ մի տեսակ առաքինութիւն, ինչ անսահման չափերի էլ եթէ հասնէ նա, չէ պաշտպանում կնոջը խանդից։

Պէտք չէ ասել, թէ ինչ կատաղութեան են հասնում այր ամուսինները, որոնք ունեն, ինչպէս իրանք են կարծում, պատճառներ կասկածելու, թէ այն գաւակը, որով իրանց կինը պատրաստում է երջանկացնել իրանց, պատկանում է մի ուրիշին...

Դատաստանական գործավարութիւնից յայտնի են շատ դէպքեր, երբ կասկածից տանջուող հայրերը սպանել են իրանց յղի կանանց։

Մի երիտասարդ ամուսին գնդակ խփեց իր յղի կնոջ և նրա մօրը։

Գնդակից ծանր վիրաւորուած կինը դեռին ընկաւ և հէնց այդտեղ մի մեռած երեխայ ծնեց։

Զոքանչի վրայ ուղղած գնդակը վրիպել էր, չէր դիպել և այս բանը այնքան զայրացրեց երիտասարդին, որ նա խելագարի պէս սկսեց թակել նրան հրացանի յետքով։

Ինչպէս ասուած է վերևում, անկարելի է թոյլ տալ, որ խանդը շօշափէր միայն կնոջը ձեռք դցելու հարցը. անշուշտ, խանդոտը աչքի առաջ ունի սիրած արարածի ոչ միայն մարմնին, այլ և սրտին տիրապետելը։

Կրկնում ենք, լինում են զանազան բնաւորութիւններ, և այս տարբերութիւնը պիտի արտայայտուի այն ձևերի մէջ, որ ստանում է խանդը։ Կան այնպիսիներ, որոնց խանդը աւելի հոգևոր կողմն ունի աչքի առաջ, կան և այնպիսիներ, որոնք մարմնի հարցն են իրանց խանդի առարկայ դարձնում։

Եթէ մի խանդոտ մարդ, որ խանդի հետ ունի և թոյլ կամք, հոգևորի (սրտի) հարցն ունի

աչքի առաջ, նա աւելի շուտով ինքնասպան կը դառնայ, քան ուրիշին սպանող. իսկ սեռային կըրքով բռնուած խանդոտը, ընդհակառակն, աւելի ուրիշին սպանող կը դառնայ, քան ինքնասպան։

Մի դէպքի հերոս դարձաւ մի հասարակ բանուոր-կաշեգործ։

Այս մարդը երիտասարդութեան տարիներում ինչ որ մի յանցանք էր կատարել. նրան դատեցին, դատապարտեցին մի ինչ-որ պատժի։

Դրանից յետոյ նա սաստիկ սիրահարուեց և ամուսնացաւ մի աղջկայ հետ, որին չյայտնեց, թէ յանցանք է գործել։

Անցաւ մի քանի տարի, և յանկարծ կինը իմացաւ, որ իր ամուսինը դատուած և պատիժ կրած մի մարդ է։ Եւ այս բանը սաստիկ վիշտ պատճառեց կնոջը։

Իսկ ամուսինը, ենթադրելով, թէ այդ ըստ էին կինը այլ ևս չպիտի սիրէ իրան, այնքան ցնցուեց այդ մտքից, որ ատրճանակը ուղղեց իր ճակատին և սպանեց իրան։

Սակայն խանդոտի սովորական տիպը այդ չէ. սովորականը մի կատաղի վագր է, որ մի ձեռքում ըէվոլվէր ունի, միւսում խէնջար։ Այս մարդիկ մեծ մասամբ ներվային հոգեկան հիւանդներ են։

Նա կատաղած է, նա գազանութիւն է անում, մոռացութեան տալով ամեն մի չափ։

Նա ոչ միայն սպանում է, այլ և ծուատում է, այլանդակում է, հնարում է մի այնպիսի բան,

որի առջև սարսափահար կանգնում է մարդկային խելքը։

Նա համարձակ խօսք է տալիս՝ իր գազանութեան մէջ գերազանցել ամեն մի բաշիբուզուկից։

Մի խանդոտ ամուսին, օրինակ, առաջ խեղդում է իր կնոջը, ապա այրում նրա երկու ատները։

Վերին աստիճանի հետաքրքրական են յետին թուով ծագած խանդոտութեան դէպքերը։

Մարդը ամուսնանում է մի այրիի կամ ապահարզան ստացած կնոջ հետ, և յանկարծ սկսում է խանդ զգալ դէպի կնոջ առաջին ամուսինը, դէպի մի մարդ, որ նոյն իսկ կենդանի էլ չէ։

Այն միտքը, թէ իր կինը մի ժամանակ պատկանելիս է եղել մի ուրիշին, խելքահան է անում նրան։

Այսպիսի յետին թուով խանդը յաճախ իր ամբողջ ծանրութեամբ ընկնում է բոլորովին անմեղ արարածների, երեխաների վրայ։

Ահա մարդը ամուսնացաւ մի այրիի հետ, որ առաջին ամուսնուց ունի երեխայ։ Այս դժբախտ երեխան խանդոտ ամուսնու համար մի կատարեալ աչքահանիկ է։

Նա շարունակ, ինչպէս ասում են, «կնոջ գլուխը տանում է» երեխայի պատճառով և կինը, եթէ միայն թանգ է համարում ամուսնու լաւ վերաբերմունքը դէպի իրան, նոյնպէս սկսում է սակաւ առ սակաւ սովորել այն մտքին, թէ այդ ե-

ըեխան մի արգելք է իր երջանկութեան համար։ Նա առաջ դուցէ վառ սիրով էր կապուած իր երեխայի հետ, բայց ամուսնու խանդոտութիւնը հետզհետէ արտաքսում է նրա սրտից մայրական սէրը։

Սկզբում այդ մայրը անտարբեր է դառնում դէպի իր մանուկը (աւելորդ է ասել, որ դա մայր չէ, այլ անբարոյական մի ճիւաղ), իսկ յետոյ ամուսնու հետ միասին սկսում է ատել նրան։

Այս դրութիւնից երբեմն այն հետևանքն է ծնում, որ այդ տեսակ ամուսինները վճռում են նոյն իսկ ոչնչացնել երկուսի համար ատելի դարձած մանուկին, որ արգելք է դառնում նրանց մէջ բարի համերաշխութիւն հաստատելու դէմ։

Մի քանի անդարգացած կին՝ ամուսիններ լաւ չեն ըմբռնում, որ խանդոտ այր մարդու սպառնալիքները բոլորովին դատարկ խօսքեր չեն, բայց քիչ չէ պատահում, որ նրանք խիստ վախենում են սրանց սպառնալիքներից։

Պատահում է, որ կինը օգտակար է համարում այդ մասին ազդարարել իր ազգականներին։ Երբեմն նա ուղղակի յայտնում է նրանց. «Իմ ամուսինը ուզում է սպանել ինձ. ես համոզուած եմ, որ այս մօտիկ օրերում ինձ մեռած կը գտնեն»։

Եւ նրա դուշակութիւնը, տարաբախտաբար, քիչ դէպքերում չէ իրագործւում։

Ախալցխայում մի գաղան ամուսին այսպէս սպանեց իր կնոջը. պատժից ազատ մնալու համար նա խոկոյն փախաւ Թիւրքիա և այնտեղ մահմեդականութիւն ընդունեց։ Այս դէպքը պատահել է քսան տարի առաջ. հասկանալի է, որ նա մի անմորմալ մարդ էր։

Ով երբէք իր աչքով դիւահար չէ տեսել, նրան կարելի էր յանձնարարել, որ նայէ խանդոտին այն միջոցին երբ խանդը տենդային կերպարանք է ընդունում։

Մի խանդոտ ամուսին, բառի բուն մտքով, ատամները կրճատացնելով, գոռում էր թէ պիտի պատռէ իր հակառակորդի փորը, պիտի թափէ նրա աղիքները։

Այստեղ մենք, ի հարկէ, չենք բերի այն սարսափելի, կեղտոտ, մարդ փախցնող խօսքերն ու ոճերը, որոնց մէջ ձուլւում է խանդոտի գազանային բարկութիւնը։

Մի քանի գիտնականներ, օրինակ՝ յայտնի Լոմբրոզոն *), յենուելով այն առանձնայատկութիւններին, որոնք նկատւում են դիւահարուած խանդոտի ոգու զօրութեան մէջ, փորձել են, առաջնորդուելով այդ արտաքին նշաններով, ապացուցանել թէ այդպիսի մարդը հարկաւ աննորմալ մէկն է։

«Այդ խանդոտները», ասում է Լոմբրոզոն, որոնք այժ չունեն իրանց բարկութիւնը զսպելու, և որոնք աղաղակում են, թէ վրէժ հանելու ինչ ծրագիրներ ունեն, անշուշտ, խիստ տարբերւում

*) Տես իմ «Ով է մեղաւոր» գիրքը։

են մարդկային նորմալ տիպից, որովհետև սովորական մահկանացուն, երբ մտադրւում է մի յանցանք կատարել, չէ սկսում աղաղակել այդ մասին զանգակատանից, այլ, ընդհակառակն, իր ամբողջ կատաղութեամբ աշխատում է թաղցնել իր դիտաւորութիւնը»։

Ի դէպ, պէտք է ասել, որ խանդոտի վերաբերմամբ ճիշտ է այն ասացուածքը, թէ «յաւելուածոյ սրտի բարբառէ բերան»։ Կիրքը կոյր է և չէ ճանաչում ոչ զգուշութիւն և ոչ խոհեմութիւն։ Այդ կուրացնող, կլանող կիրքը ամեն ինչ յետ է քաշում, երկրորդական տեղ է դնում։

Այստեղ մարդուն բոլորովին չէ վախեցնում ոչ այն սարսափելի խայտառակութիւնը, որի պատճառը ինքը պիտի լինի, ոչ գլխատման մեքենան կամ, ամենալաւ դէպքում, տաժանակիր աշխատանքը, որոնք սպասում են իրան. նա ամբողջովին մի խելագար զառանցանքի մէջ է։

Խանդոտ ամուսինը վերցնում է դանակը, շարժում է մի խումբ վկաների առաջ և կանչում է, թէ կսպանէ իր կնոջը, եթէ դրա համար նոյն իսկ տաժանակիր աշխատանքների ուղարկեն իրան։

Մի խանդոտ, սպանելով կնոջը, սկսեց ծուատել նրա դիակը և մսագործի նման մանրեց նրան։

Խանդոտութեան բռնկման ժամանակ մորթուած կանանց մեծ մասի մարմինները դանակով կամ խէնջարով ծակծկուած կամ կտրտուած են լինում բոլոր ուղղութիւններով։

Կռուի պատրաստուելով իր ախոյեանի դէմ,

այսինքն իր կնոջ իսկական կամ կարծեցեալ սիրականի դէմ, խանդոտը, սովորաբար, զինւում է ոտքից մինչև գլուխ։

Նա վերցնում է ամեն ինչ, որ կարող է մահաբեր լինել. հրացան, ատրճանակ, խէնջար, դանակ, երբեմն երկու, նոյն իսկ երեք հատ իւրաքանչիւրից. անշուշտ, այս բոլորը դեռ քիչ է թւում։ Մի մարդ, սպանելով իր կնոջը, 18 վէրք հասցրեց նրան և յետոյ պատմում էր դատարանում, որ հարուածում էր խելագարի նման, մինչև որ ձեռքը նեղացաւ։

«Եթէ ես ունենայի այնքան կեանք, որքան կաթիլներ կան արիւնիս մէջ, — բացականչում է Շէքսպիրի Օթելլոն, — այդքան կեանքերն էլ քիչ կըլինէին իմ վրէժխնդրութիւնը յագեցնելու համար»։

Այսպէս կատաղած, բարկութիւնից կուրացած է լինում խանդոտ մարդասպանը յանցանք գործելու վայրկեանին, բայց այս բոլորը, ի հարկէ, չէ վերցնում նրանից ոչ բարոյական և ոչ քրէական պատասխանատուութիւնը։

Այդպիսի մարդասպանների բժշկական քննութիւնը անփոփոխ գտնում է, որ արիւնը ուղեղին է տուել, դէմքը սաստիկ կարմրած է, աչքերը ընից դուրս են ցցուել։

Պրօալը հաւատացնում է, որ խանդոտ կանայք, որոնք վճռում են սպանութիւն գործել, համարեա միշտ հակառակ երևոյթ են ներկայացնում. յանցանքի վայրկեանին նրանք չեն կար-

մրում, այլ, ընդհակառակն, սպրանում են, դողում են, մի խօսքով, մեծ երկիւղի մէջ են գրանւում։

Ոմանք այդպիսի կանանցից, մի քանի հարուածներ տալով բէվոլվէրից, ուշաթափւում են կամ ջղաձգական դողոցքի մէջ են ընկնում։

Առհասարակ սպանութիւնից յետոյ այն սարսափելի զրգռմունքը, որ մինչև այդ բռնել էր ոճրագործին, մեծ մասամբ անցնում է շատ արագ. կատաղութեան տեղ երևան է գալիս զղջումը, յանախ և կատարեալ յուսահատութիւնը։

Երբեմն էլ վերջին ժամին քնքշութեան մի հոսանք է բարձրանում խանդոտի մէջ և նա փաղաքշում է իր զոհին, սպանութիւն կատարելուց առաջ։

Օթէլլոն համբուրում է Դէզդէմոնային և ապա խեղդում։

Խանդոտ սպանողը միայն շատ հազուագիւտ դէպքերում է փախուստի դիմում։

Յանախ, նոյն իսկ համարեա միշտ, նա առանց դիմադրութեան յանձնում է իրան արդարադատութեան ձեռքը, ասելով. «Ես սպանեցի կնոջս, բռնէցէք ինձ»։

14.

Օգոստոսի 30-ին.

Թանկագին բարեկամ.

Զոհը սպանելու և ապա ինքնասպանութիւն գործելու գաղափարը բաւական յանախ է այցելում խանդոտի ուղեղը։

Այս տեսակ ոճրագործներից մի քանիսը գանգատւում են, թէ կեանքը իրանց ձանձրացրել է և յայտնում են, թէ հաստատ վճռել են վերջ դնել իրանց կեանքին։

Նրանց դէպի ինքնասպանութիւն մղողը այն համոզմունքն է, թէ կինը չէ սիրում, իսկ առանց այդ սիրոյ նրանք միտք չեն գտնում աշխարհի վրայ ապրելու մէջ։

Բայց վճռելով վերջ դնել իր կեանքին, մարդը մտածում է կնոջ մասին։

Նա մտածում է, որ եթէ ինքը վերանայ մէջտեղից, կինը պիտի պատկանէ մէկ ուրիշին, պիտի երջանիկ լինի այդ ուրիշի հետ. իսկ այս միտքը անտանելի է նրա համար։

Այս պատճառով էլ նա վճռում է նախ սպանել կնոջը, ապա միայն վերջ տալ իր կեանքին։

Ի դէպ, ինքնասպանների մասին սովորաբար շատ հեշտ ասում են. «մի եսամոլ էլ պակասեց»։

Մարդկանց մեծամասնութիւնը հաւատացնում է, թէ առհասարակ կանայք տղամարդկանցից աւելի խանդոտ են և աւելի եռանդոտ կերպով են արտայայտում իրանց խանդոտութիւնը, ինչպէս ասացինք վերևում։

Կանանց խանդոտութիւնը աւելի յանախ հիմնուած է լինում հոգևոր սկզբունքների վրայ, քան տղամարդկանցը։

Կինը քիչ է տանջւում սեռական կրքով և խանդոտութեամբ, հիմնուած այդ կրքի վրայ։

Նրա խանդոտութեան համարեա հիմնական դրդիչը ոտնակոխ եղած ինքնասիրութիւնն է։

Այս հանգամանքը պէտք է որ կախում ունենայ հասարակական դիրքից. անարդարութիւն է երևում, որովհետև կրթութեան միանման պայմանների մէջ կինը տղամարդից ոչ մի բանով պակաս չէ *)։

Կինը տղամարդու պէս հնարաւորութիւն չունի բաւարարութիւն տալ իր ինքնասիրութեան, ձգտելով դէպի պատիւներ, իշխանութիւն, փառք և հռչակ հասարակական կեանքի զանազան ասպարէզներում, ուստի նրա ամբողջ հպարտութիւնը և բոլոր բաւականութիւնները կենտրոնանում են մի բանի վրայ—դուր գալ, հարկադրել որ իրան սիրեն։

Կեանքի պայմանների այս տեսակ դասաւորութիւնը ակամայ կենտրոնացնում է նրա միտքը սիրոյ վրայ։

Կանայք խանդոտ են հասարակական բոլոր դիրքերի մէջ, և աշխարհիկ տիկնոջ խանդոտութիւնը ոչնչով չէ զանազանւում նրա աղախնի խանդոտութիւնից։

Զանազանութիւնը գուցէ միայն այն լինի, որ հասարակ ժողովրդի կինը խանդի ազդեցութեան տակ աւելի մեծ յօժարութեամբ է դիմում

*) Տես իմ «Կինը և տղամարդը»։

բռունցքների, քան մի որ և է կոմսուհի, իշխանուհի։ Կասկած չը կայ, որ զանազան տեսակ է լինում, ամեն ինչ կախուած է բնաւորութիւնից և խանդի աստիճանից։

Պրօպն ասում է, որ կանայք երբեմն ինքնասպանութեան դիմում են, դրդուած այնպիսի մի խանդից, որի պատճառները զարմանալի դատարկ են լինում։

Լինում են դէպքեր, երբ բաւական է, որ ամուսինը տուն վերադառնայ մի քիչ ուշ այն ժամանակից, երբ կինը սպասում էր նրան, կամ թէ բաւական է, որ կնոջը այնպէս երևայ, թէ ամուսինը անտարբեր է դարձել դէպի իրան. բաւական է և այն, որ ամուսինը իր կնոջ ներկայութեամբ լաւ խօսէ մի ուրիշ կնոջ մասին և այլն։

Այսպիսի դատարկ բաները իսկոյն առաջացնում են յանդիմանութիւններ, յանդիմանութիւնները դառնում են բացատրութիւն, ապա կռիւ. մէկ էլ տեսնում ես ջղային կինը վազում է դէպի պատուհանը և հինգերորդ յարկից իրան ցած է գցում։

Խանդոտ կինը մի հատ անշարժ միտք ունի. նա ուզում է, որ ամուսինը միայն իր մասին մտածէ, միայն իրանով լինի զբաղուած։

Նրան գրգռում է նոյն իսկ այն ուշադրութիւնը, որ ամուսինը ցոյց է տալիս դէպի իր բարեկամները. այս բարեկամները, ինչ էլ լինի, խլում են ամուսնու սրտի մի մասը։

Գիտնականի կինը կարող է խանդ զգալ դէ-

պի նրա գրքերը, որովհետև այդ գրքերը խլում են գիտնականի ժամանակի մի մասը և որ գլխաւորն է, մի յայտնի բաւականութիւն են պատճառում նրան. նշանակում է, որ գիտնականը բաւականութիւն գտնում է իր կնոջից դուրս, ապա ուրեմն այդ գրքերը այդ կնոջ հակառակորդներն են։

Բանը այն տեղին էլ է հասնում, որ խանդոտ տիկնոջ մէկը սկսում է համոզուել, որ իր ամուսինը չափազանց գեղեցիկ է, ուստի և մտածում է, թէ ինչ պէտք է անել այդ գեղեցկութիւնը մի քիչ պակասեցնելու համար։

Այդպիսի խանդոտներից մէկի ամուսինը ծաղիկ ընկաւ. հիւանդութեան ժամանակ կինը անդադար կրկնում էր. «Ես ամբողջ սրտով կցանկանայի, որ նա այլանդակուած մնար, ապա թէ ոչ նա չափազանց գեղեցիկ է»։

Մանաւանդ տանջալից է լինում խանդոտ կնոջ դրութիւնը այն ժամանակ, երբ նա իր ամուսնուց փոքր ի շատէ տարիքով է։

Անկաշառ հայելին ցոյց է տալիս նրան սպիտակած մազեր, կնճիռներ դէմքի վրայ, հանգած հայեացք. նա յուզմունքով իմանում է, որ իր ատամները շարժւում են և, առհասարակ, թառամում է իր գրաւչութիւնը։

Միևնոյն ժամանակ նա կասկածոտ աչքերով նայում է իր ամուսնուն, ցնցուելով տեսնում է նրա թուխ մազերը, թարմ դէմքը, փայլուն հայեացքը։

Նա լաւ գիտէ, որ ամուսինը դեռ շատ և շատ կարող է դուր գալ կանանց, և այս գիտակցութիւնը անտանելի տանջանքներ է պատճառում նրան։

Եթէ, ի լրումն այս բոլորի, պատահէ այնպէս, որ կինը նկատէ փոքր ինչ անուշադրութիւն իր երիտասարդ ամուսնու կողմից, այն ժամանակ նրա դրութիւնը դառնում է անտանելի։ Այստեղից արդէն մի քայլ է մնում մինչև քրէական դրաման։

Խանդը առատ հունձ է տալիս այն կանանց շրջանում, որոնք մի ընտանիքի են պատկանում։ Յայտնի է, թէ Նապոլէոնի քոյրերը որքան տանջում էին նրա կնոջը, Ժոզէֆինային, իրանց խանդոտութեամբ։

Իր որդուն կամ աղջկան ամուսնացնող մայրը խանդ է զգում դէպի իր հարսը կամ փեսան։

Վերջապէս կան և այնպիսի կանայք, որոնք խանդ են զգում դէպի իրանց սեփական երեխաները։

Կանայք յաճախ են գանգատւում, թէ իրանց այլ ևս չեն սիրում, իսկ իրանք միևնոյն ժամանակ չեն սիրում նրանց, որոնց սէրն են պահանջում։

Այսպիսով գեղեցիկ սեռը երբեմն ցոյց է տալիս զարմացնող երևոյթ – խանդ առանց սիրոյ։

Կինը, օրինակ, համարեա բոլորովին չէ սիրում իր ամուսնուն, բայց պահանջում է, որ ամուսինը սիրէ իրան և խանդոտ է դառնում, երբ

համոզւում է, որ մի հակառակորդ ուրիշ կին կայ։

Այստեղ, երևի, առաջին տեղը գրուած է ինքնասիրութեան հարցը։

Կնոջ հարկաւոր է իր ամուսնու սէրը, որովհետև այդ սէրը ամուսնու ցոյց տուած ուշադրութեան չափն է։

Նա չէ կարող տեսնել, որ իրանով զբաղուեն, որ իրան արհամարհեն։

Ծնողների և զաւակների մէջ տեղի ունեցող խանդոտութիւնից առաջացած յանցանքները կատարելապէս հրեշաւոր կերպարանք են ընդունում։

Որդիները մորթում են իրանց հայրերին, մայրերը իրանց աղջիկներին։

Ճիշտ են ասում, թէ մարդու սրտի մէջ նիրհող գազան կայ *)։

Սա ճշմարիտ է։

Այդ գազանը խակապէս չէ էլ նիրհում և զարթած ժամանակը այնպիսի գործեր է կատարում, որ սարսափում ես մարդ ասած էակի համար և համոզւում ես, որ մարդը իր զգուելի վատութեան մէջ կարող է ամեն մի կենդանուց շատ առաջ գնալ...

Առհասարակ արտաքին ֆիզիկական, կլիմայական, ֆիզիօլոգիական գործօնները շատ մեծ ազդեցութիւն են անում խանդի արտայայտութեան ձևերի վրայ։

Կլիման, օրինակ, անկասկած, ազդում է այդ

*) Տես իմ «Կռիւ և իրաւունք» գիրքը։

զգացմունքի սաստկութեան վրայ. այրող երկինքը այրող կրքեր է ծնեցնում։ Հարաւի այրող արեգակը արևահարութիւն է պատճառում և հարաւացու կիրքը նոյնպէս որոտի հարուածներ ու կայծակներ է երկնում։

Մի խանդոտ իտալացու կամ սպանիացու շատ բան չէ հարկաւոր, որպէս զի դև դառնայ բարկութիւնից։ Նրանց բաւական է տեսնել, որ իրանց սիրածը խօսում է մի օտար մարդու հետ։

Այսպիսի մի դէպք Նորերումս տեղի ունեցաւ հարաւային Ֆրանսիայում, Մարսել քաղաքի մէջ։

Մի խանդոտ կին տեսաւ, որ իր ամուսինը խօսում է մի ուրիշ կնոջ հետ, պարզապէս խօսում է և ուրիշ ոչինչ։ Բայց խանդոտին այդքանն էլ բոլորովին բաւական էր կրակ ընկնելու համար։ Նա վերցրեց մի շիշ ծծմբաթթու և իր ամուսնուն նրանով ողողեց ոտից մինչև գլուխ։

Նրան բոլորովին չէին շփոթեցնում զոհի սըրտապատառ աղաղակները, նա շարունակում էր թափել այրող հեղուկը, մինչև որ դատարկեց շիշը մինչև վերջին կաթիլը։

Երբ հարաւացին, օրինակ, իտալացի բանտորը, բռնւում է խանդից, նա այլ ևս ոյժ չունի իրան զսպելու և ամենասարսափելի սպառնալիքներ է թափում իր սիրած կնոջ և նրա իրական կամ երևակայական սիրականի հասցէին։

Սովորաբար նա ի կատար է ածում այդ սպառնալիքները. նա չէ սիրում զուր տեղը խօսել։

Առհասարակ, իտալացու, սպանիացու համար մարդ սպանելը մի աւելի դժուար գործ չէ, քան մի բաժակ գինի խմելը։

Այսպիսի «քեալլագեօղները», սովորաբար, չեն բաժանւում իրանց խէնջարից, և խնամում են նրան ինչպէս հարազատ զաւակին, եղբօրը, մաքրում են, սրում են, փայփայում են։

Իտալացիները ահագին թւով յանցանքներ են կատարում կրքոտութիւնից դրդուած, նրանց է պատկանում անդրանկութեան արմատնին և քաղաքական սպանութիւնների մէջ։

Ամենքը դեռ լաւ յիշում են Ֆրանսիայի նախագահ Կարնօի, սպանիական մինիստր Կանովասի, աւստրիական Եղիսաբէթ թագուհու և, վերջապէս, Իտալիայի թագաւոր Հումբերտի սպանութիւնները։ Այս չորս դէպքերում էլ սպանողները իտալացիներ էին։ Իտալացին սարսափելի ինքնասէր և վրիժառու է. ահա կրքոտութիւնից առաջացած բազմաթիւ սպանութիւնների պատճառը։

Հետաքրքրական է նայել նոյն ոճրագործին սպանութիւն կատարելուց մի կամ երկու շաբաթ յետոյ. նոյն այդ ոճրագործները, որոնք սպանութիւնից յետոյ անմիջապէս հրճւում են մի չար հանդիսաւորութեամբ և համարեա պարծենում իրանց գործած ոճիրով, մի շաբթից յետոյ նկատելի կերպով ցածրացնում են իրանց ձայնը, իսկ մի շաբաթ էլ անցնելուց յետոյ սկսում են զղջալ և նոյն իսկ հեկեկալ։ Նրանցից շատերը բա-

ցարձակ խոստովանում են, որ իրանց արարքը զզուելի էր և եթէ չը լինէր կոյր բարկութիւնը, որ այդ ժամանակ այրում էր նրանց, երբէք նրանք այդպիսի վատութիւն չէին անի։

Ոճրագործը գնալով աւելի և աւելի թողնում է կատաղութիւնը, վրիժառութեան գործի յաղթանակը հետզհետէ ջնջւում է նրա հոգուց և շուտով մենք կտեսնենք մի ամենահասարակ մահկանացուի, որ ամենաանկեղծ կերպով կզղջայ իր կատարած յանցանքը։

Ի հարկէ գոյութիւն ունեն և այլասեռուած մարդիկ, գոյութիւն ունեն բարոյական խելագարութեան ենթարկուած մարդիկ, վերջապէս, կան պարզապէս հոգեկան հիւանդ մարդիկ. բայց մենք ոչ մի իրաւունք չունենք պնդելու, թէ իւրաքանչիւր խանդոտ — սպանող կամ այլասեռուած մարդ է կամ խելագար։

15.

Սեպտեմբերի 5-ին.

Թանկագին բարեկամ.

Մինչև այստեղ մենք խօսեցինք խանդի մասին ընդհանրապէս. այժմ տեսնենք մասնաւորապէս այն խանդը, որ ծնւում է դաւաճանութիւնից։

Կեանքի ներկայ պայմանների մէջ էրը, խանդը և դաւաճանութիւնը պիտի միմեանց ձեռք տուած գնան։

Նշանաւոր է, որ դաւաճանութիւնը, մանաւանդ ամուսինների մէջ, շատ յաճախ ներկայանում է թէ իրանց, ամուսիններին և թէ շրջապատողներին իբրև մի տեսակ դատարկ բան, չարաճճիութիւն։

Ծանօթները, ինչպէս սովորական կարգ է, իմանում են այդ չարաճճիութեան մասին աւելի վաղ, քան այն ամուսինը, որ դաւաճանութեան զոհն է դարձել. և ծանօթների շրջանում այդ չարաճճիութիւնը դառնում է հանաքների և սրախօսութիւնների առարկայ։

Բայց այսպէս է ամուսնական դաւաճանութեան սկիզբը միայն. իսկ նրա շարունակութիւնը և մանաւանդ ողբերգական վերջը արագ կտրում են ուրախ տրամադրութիւնը։

Ամուսինը, վերջապէս, տեղեկանալով իրողութեանը, բոլորովին տրամադիր չէ լինում ընդունել նրան ծիծաղով ու հանաքներով։

Կնոջ դաւաճանութիւնը այր ամուսնու համար և հակառակը՝ այնպիսի մի բարդ և ահագին աղէտ է, որ նրա դիմաց բոլորովին անհնարին է ոգու ուրախ տրամադրութիւնը։

Դաւաճանութիւնը, որ անում է մի ամուսին միւսի վերաբերմամբ, մի կոպիտ հարուած է, որ միանգամից, ինչպէս ասում է, բոլոր տեղերին է խփում. նա շանթահար է անում պատուի զգացմունքը, քարուքանդ է անում սիրոյ և երջանկութեան բոլոր անուրջները։

Այդ դաւաճանութիւնը, այդ ամուսնական անհաւատարմութիւնը ծնեցնում է տղամարդի մէջ մի չարատանջ կասկած իր երեխաների հարազատութեան մասին, խայտառակութեան, անվերջ ընտանեկան կռիւների պատճառ է դառնում և այդ կռիւների մէջ կամայ-ակամայ խառնւում են երեխաները, ազգականները, ծանօթները, ծառաները։

Այդ քիչ է, խաբուած ամուսինը դէմ առ դէմ կանգնում է իր հակառակորդի առաջ, որի հետ նա յաճախ պիտի կռիւ, մրցութիւն ունենայ կնոջ տիրելու համար։ Հին բարի ժամանակները, տարբաբախտաբար շատ հին ժամանակները, տղամարդիկ էլ, կանայք էլ ողջախոհ կեանք էին վարում։

Այն ժամանակները ոչ ոք ոչ մի ժամանակ արատը չէր դարձնում իր համար զուարճութեան առարկայ։

Կինը միայն մի անգամ իր կեանքի մէջ կարող էր փայփայել իր մէջ տղամարդի հետ կապուելու ձգտումը և այդ՝ միայն օրինական ամուսնութեան միջոցով։

Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում այժմեան ժամանակը։

Այժմ դաւաճանութիւնը և յանցանքի մի շատ երկար պոչ, որ ձգւում է նրա ետևից, բռնում է

քրէական վիճակագրութեան աղիւսակների մէջ շատ էական տեղ (Ֆրանսիա)։

Բայց չէ՞ որ քրէական վիճակագրութեան մէջ մտնում են միայն այն դէպքերը, որոնք արդարադատութեան ձեռքն են ընկել։ Եւ ի հարկէ դաւաճանութեան բոլոր դէպքերը չեն ունենում աղմկալի քրէական վերջաբանութիւն։

Պէտք է մտածել, թէ դաւաճանութիւնների ինչ ահագին քանակութիւն անյայտ է մնում այն անձանց համար, որոնք նրանց զոհն են դարձել։ Եւ վերջապէս այն անձանց շարքերում, որոնք գիտեն դժբախտութիւնը, մի՞թէ քչերն են լինում, որոնք աւելի լաւ են համարում լռել և զանգակատան բարձրութիւնից չեն աղաղակում իրանց ընտանեկան չարաղէտ դիպուածների մասին։

Դաւաճանութիւնը երկու կողմանի մի գործողութիւն է. դաւաճանում է և՛ կինը ամուսնուն, և՛ ամուսինը կնոջը։

Պէտք է ասել, որ կնոջ դաւաճանութիւնը, առհասարակ, աւելի ծանր կերպով է այր ամուսնուն հարուածում, քան հակառակը, ուստի և դաւաճանութեան առաջացրած յանցանքների թիւը աւելի սասսիկ կերպով դէպի կնոջ դաւաճանութեան կողմն է թեքւում։

Կնոջ դաւաճանութեան եթէ ոչ գլխաւոր, գոնէ յաճախ երևացող պատճառներից մէկը պէտք է համարել ամուսինների հասակի անհաւասարութիւնը։

Տնտեսական պայմանների պատճառով այժմեան ժամանակ տղամարդկանց մէջ հաստատ սովորութիւն է դրուած որքան կարելի է երկար ժամանակ ամուրի մնալ անկախութիւն պահպանելու համար. բացի դրանից, կինն էլ վերջնականապէս ստրկացրուած է։

Այսպէս ասած «օրինաւոր ջէնտլմէն» անուն իւրացնող երիտասարդները իրանց կեանքի երեք քառորդը հարկաւոր են համարում ամեն տեսակ և ամեն ուղղութեամբ զուարճութիւնների և շուայտութեան տալ. իսկ դրա համար հարկաւոր է ազատութիւն և անկախութիւն, որոնք չեն հաշտւում ամուսնութեան հետ։

Ուրեմն, ընտանեկան օջախը ինկատի է առնւում, ինչպէս մի տեսակ գերեզմանաքար, ինչպէս մի տեսակ խաչ, որ դնւում է ոչ մի կապ ու պարտաւորութիւն չը ճանաչող ազատ կեանքի վրայ։

Բայց որքան հասակ է առնում այդպիսի երիտասարդը, այնքան նրա մէջ, կամայ-ակամայ, զօրեղանում է ամուսնական կեանքի «քորը»։

Մարդը մի տեսակ ձգտում է զգում դէպի խաղաղութիւնը, դէպի հանգստութիւնը կամ, ինչպէս սովորաբար ասում են, դէպի «խաղաղ նաւահանգիստ»։

Ամենից յաճախ այդ ձգտումը դէպի նաւահանգիստ գալիս է այն ժամանակ, երբ ամենակարող ժամանակը արդէն աւերումներ է գործում գլխի մազերի և բերանի ատամների խիտ և կանոնաւոր շարքերում։

Կաւալէրը սկսում է համոզուել, որ ինքը գնալով աւելի և աւելի անընդունակ է դառնում դէպի մի որ և է բան, որ աշխարհի վրայ ապրուստի ոչ մի ձևի համար ընդունակ չէ, բացի... ամուսնական կեանքից։

Եւ նա ամուսնանում է։

Զարմանանք, երբ այդպիսի ամուսնութիւնը, ուր հակադրուած են երկու այնպիսի մարդիկ, որոնցից մէկը արդէն սպառել է իր սեռական եռանդը, իսկ միւսը նոր միայն սկսում է օգտուել նրանից, ոչինչ բարիք չէ բերում։

Բրէական անկողմնապահ տարեգրութիւնները մեր առջև լուսաւորում են այս փաստը ամենափայլուն կերպով։

Ծեր ամուսինների ջահիլ կանայք, որոնք դաւաճանութեան հիման վրայ կատարուած յանցանքի պատճառով գալիս նստում են դատարաններում մեղադրուողների նստարանի վրայ, յաճախ ամենաանկեղծ ցինիզմով յայտնում են յանցանքի շարժառիթը։

Մի կին, որ թունաւորել էր իր ծեր ամուսնուն, ընտանեկան շարունակ տևող ընդհարումների միջոցին կրկնում էր.

«Ես ջահիլ եմ, դու ծերացած. երեխաներ ես չունիմ և սրա փոխարէն ես ինձ վարձատրում եմ, ինչպէս կարողանում եմ և ինչպէս ցանկանում եմ»։

«Իմ ամուսինը—պատմում էր այս խմբին պատկանող մի ուրիշ ոճրագործ կին—իմ ամու-

սինը 25 տարով մեծ էր ինձանից, և մենք վաղուց դադարել էինք միմեանց հետ տղամարդ ու կին լինելուց»։

Դժուար է ասել, թէ ինչու ընդունուած է խոհեմութիւն անուանել այսպիսի ամուսնութիւնները ծեր տղամարդկանց և ջահիլ կանանց մէջ։

Եւ սակայն, հասարակութեան մէջ հէնց այսպիսի անունով են զանազանում սիրուց բղխած ամուսնութիւնը (որպէս թէ անխոհեմ) այն ամուսնութիւններից, որոնք կնքւում են առողջ դատողութեամբ, այն ամուսնութիւններից, որոնց օգտին խօսում են մի ամբողջ կոյտ փաստաբանութիւններ։

Ծերացած ամուսինը զուտ ոսկի է և ոչ թէ մարդ. նա և՛ խելահաս է, և՛ լուրջ է, և՛ թեթևսոլիկ չէ, և՛ փոփոխական չէ, և՛ ապահովուած է և այլն։

Մինչդեռ թւում է, թէ ամենահասարակ առողջ դատողութիւնը պէտք է ուղղակի դատապարտէ այդ ամուսնութիւնները, հէնց պարզապէս այն ֆիզիոլոգիական տարբերութեան պատճառով, որ գոյութիւն ունի փեսայի և հարսի մէջ։

Այդ տարբերութիւնը միանման չարաղէտ է երկու կողմերի համար, այսինքն միևնոյն է, թէ ով է տարիքով՝ տղամարդը թէ կինը։

Շատ ծերացած ամուսինը նոյն Աստուծու պատիժն է ջահիլ կնոջ համար, ինչպէս շատ ջահիլ տղամարդը ծերացած կնոջ համար. հետևանքները միևնոյն են։

Առաջին դէպքում տղամարդն է գտնւում կնոջ դաւաճանութեան սպառնալիքի տակ, իսկ երկրորդ դէպքում ծերացած կինը պիտի երկու աչքը մի անէ, որ իր երիտասարդ ամուսինը, ինչպէս ասում են, «մեղքի տակ չընկնի»։

Այն ամուսնութիւնների մէջ, ուր չկայ ներդաշնակութիւն, շատ երիտասարդ ամուսինը չափազանց արագ ցրտանում է դէպի իր կինը. վերջինս ձանձրոյթ ու տաղտկութիւն է պատճառում, և ամուսինը շուտով կտրում է բոլոր յարաբերութիւնները նրա հետ, յաճախ և բոլորովին թողնում է նրան, որպէսզի ազատ նուիրուի իր զուարճութիւններին։

Այսպիսի ջահիլ ամուսիններից մէկը սկսեց նրանով, որ վռնդեց իր կնոջը, յետոյ, տեսնելով, որ նա չէ ուզում իրան բաց թողնել, սպանեց։

Դատարանում նա անկեղծօրէն յայտնեց, թէ ամուսնանալով շատ ջահիլ հասակում, նա շուտով ենթարկուեց ազատ ու ուրախ ապրելու գայթակղութեան և վճռեց ժամանակաւորապէս բաժանուել իր կնոջից, բայց մտադրութիւն ունէր նորից ապրել նրա հետ, երբ բոլորովին կրկշտանար կեանքից։

Այս երիտասարդին 18 տարեկան հասակում ամուսնացրել էին 15 տարեկան աղջկայ հետ, որպէս զի դրանով պահպանած լինեն նրան երիտասարդ հասակին յատուկ կրքերից։

Չափազանց ջահիլ ամուսինը շատ դէպքե-

րում է ցոյց տալիս, որ չէ կարող լինել ընտանիքի լաւ անդամ։

Ամուսնական անհաւասարմութիւնների մի ուրիշ պատճառն էլ պէտք է համարել սիպողական ամուսնութիւնը։

— Շատ յաճախ է պատահում, որ ջահիլ աղջիկը կամ ունի փեսացու կամ գտնէ կազմել է իր համար ամուսնու մի իդէալ։ Ծնողները իրանց իշխանութեան ճնշումով հարկադրում են նրան գնալ մի մարդու, որ ոչնչով նման չէ նրա իդէալին։

Զարմանալու բան չկայ, որ այսպիսի դէպքում ջահիլ կինը չէ դադարում իր ջարդուած յոյսերը ողբալուց և եթէ ապագայում դէպքը հանդիպեցնում է նրան նախկին փեսայի կամ, առհասարակ, մի այնպիսի անձի հետ, որ համապատասխանում է նրա իդէալին, նա անձնատուր է լինում այդ մարդուն։

Տարաբախտաբար, հազուադիւտ են այն կանայք, որոնք «պատուաւոր» են մնում. դժբախտ կանանց կեանքն է նրանց դցում անառակութեան գիրկը. դա ճիշտ որ անառակութիւն է, որովհետև այդպիսի կնոջ իդէալը կարող է յաճախ փոխուել հազար ու մի կենսական պայմանների շնորհիւ։

Այն կինը, որ սիպմամբ է ամուսնացել, եթէ ունի փոքր ի շատէ դիւրաթեք խղճմտանք, կիմանայ գտնել շատ բաւարար արդարացում իր մեղքերի համար։

Նրա դէմ գործ են ածում այժ։ Շատ գեղեցիկ։ Նա այժի դէմ դուրս կը հանէ խաբէութիւն և խորամանկութիւն և, ինչպէս շատ անգամ է պատահում, կգնայ կեղծ ճանապարհով ու կը փչանայ։ Այստեղ ահա հարց, ո՞վ է մեղաւոր։

Կրթուած և զարգացած քահանան կարող է շատ մեծ դեր կատարել այսպիսի ամուսնութիւնների ժամանակ։

Աւելի առաջ գնալով, կտեսնենք որ ամուսինների հասարակական դիրքի, բայց մանաւանդ կրթութեան և դաստիարակութեան անհաւասարութիւնը, հասակների անհամաչափութեան նման, վատ ազդեցութիւն է անում ընտանեկան կեանքի վրայ։ Եթէ կինը բացարձակապէս աւելի խելօք և կրթուած է, քան ամուսինը, այն ժամանակ նա, ի հարկէ, սարսափելի կերպով ճնշուած պիտի լինի նրա հետ մօտ լինելու մտքից։

Այդպիսի ամուսնու փաղաքշանքներն ու քընքշութիւնները և առհասարակ նրա անձնաւորութեան ամբողջ կազմուածքը հեռացնում են, դէն են հրում կնոջը։

Մեծ մասամբ կանանց դէպի իրանց ամուսիններն ունեցած սիրոյ մէջ փառասիրութիւնը բաւական աչքի ընկնող տեղ է բռնում։

Կինը անպատճառ կամենում է հպարտ լինել իր ամուսնով. նրան հարկաւոր է, որ ամուսինը փայլէ հասարակութեան մէջ իր խելքով, տաղանդով, դիրքով։

Իսկ միայն սրտի և բնաւորութեան ծանրակշիռ յատկութիւնները միջին դիրքի կնոջ համար չափազանց քիչ են, որ դրանց պատճառով սիրէ իր ամուսնուն։

Վատ է այն ամուսնու բանը, որի խօսքերի և ձևերի համար իւրաքանչիւր քայլում պիտի կարմրէ նրա կինը։

Անցեալներում մի կին գնդակահար արաւ իր ամուսնուն գիշերը, քնի ժամանակ։

Դատարանում պարզուեց, որ հանգուցեալը մի բարի, ամենքից յարգուած, բայց հասարակ, չը կրթուած մարդ էր, իսկ նրա կինը ստացել էր փայլուն կրթութիւն, բառի բուն նշանակութեամբ, չէր կարողանում տանել իր պարզամիտ մարդուն, նրա զուտիկ ձևերի համար։ Եւ այդ կինը ամուսնացել էր նրա հետ, որովհետև ինքը աղքատ էր, իսկ նա հարուստ։

Ահա և սովորական դրաման։

16.

Սեպտեմբերի 12-ին.

Թանկագին բարեկամ.

Քի՞չ կան դաւաճանութեան պատճառներ։

Շատ ամուսնացած կանայք մեղքերի մէջ են ընկնում այն պատճառով, որ շատ չափազանցրած ակնկալութիւններ և յոյսեր են դնում ամուսնութեան վրայ։

Այսպէս է գեղեցիկ սեռի այն ներկայացուցիչների սովորական վիճակը, որոնք բոմանտիական բնաւորութիւն են ստացել։

Նրանց թւում է, թէ ամուսնութիւնը կը բերէ մի ինչ որ առանձին, անվերջ, ոչ-երկրային երջանկութիւն։

Նրանց երևակայութիւնը ստեղծում է երանութեան մի մշուշապատ պատկեր, որի ինչ լինելը նրանք էլ կարողութիւն չունեն հասկանալու։

Կոպիտ իրականութիւնը արագ փշուր փշուր է անում այդ երևակայական պատկերները, դառնապէս հիասթափուած կինը, զգալով իրան չափազանց դժբախտ՝ ճակատագրի ուղարկած ամուսնու հետ, սկսում է դէս ու դէն ընկնել, որոնել մէկին, որ փոխարինէր նրան, և որի հետ նա յոյս ունի իրականացնել իր երկրային դրախտը։

Քիչ չեն և այն վտանգները, որոնք սպառնում են զգայնոտ կանանց, այսինքն այնպիսիներին, որոնք երազում են պլատոնական անմարմին, ոչ երկրային սէր։

Յայտնի է, որ այսպիսի սէրը վերին աստիճանի անկայուն է, միշտ որոնում է մի ելք իր չը հաւասարակշռուած դրութիւնից։

Շատ ջահիլ կանայք են ընկնում պլատոնական սիրոյ ցանցերի մէջ, որ նրանց առաջ փռում են փորձուած Դոն-Ժուանները։

Մի երիտասարդ գրաւեց մի պատուաւոր ամուսնացած կնոջ և սկսեց իր նուաճումը ամենամաքուր պլատոնական սիրոյ հողի վրայ։

Նրա գրաւած տիկինը վերին աստիճանի սենտիմենտալ և ռոմանտիկ մի անձ էր և այսպիսով

շատ մեծ յարմարութիւններ ունէր պլատոնական սիրոյ ցանցն ընկնելու համար։

Կեանքը թւում էր նրան մի ձանձրալի և անճոռնի բան։

Իսկապէս նրա կեանքը բոլորովին դատարկ էլ չէր, քանի որ նա ունէր չքնաղ երեխաներ, որոնց կրթութեան գործով նա կարող էր լցնել կեանքի դատարկ տեղերը, ճեղքերը։

Զգալով, որ իր մէջ մի ինչ-որ տարօրինակ բան է կատարուում, տիկինը աշխատում էր հանգստացնել իրան, հաւատացնելով ինքն իրան, թէ դէպի երիտասարդն ունեցած իր զգացմունքը բոլորովին մաքուր է, եղբայրական և նրա մէջ չկայ ոչինչ յանցաւոր և խայտառակ բան։

Մի անգամ երիտասարդը ուշաթափուեց նրա ոտ։

Ամեն խնամք թափելով նրան ուշքի բերելու համար, խեղճ կնիկը չկարողացաւ պահել հոգու այնպիսի շարժումները, անձնուիրութեան այնպիսի արտայայտութիւնները, որոնց մէջ արդէն շատ եղբայրական ու մաքուր բան չէր մնում։

Եւ, վերջ ի վերջոյ, երբ նա բաց արաւ իր աչքերը, արդէն ուշ էր, և իր յանցանքը քաւելու համար վերջ դրեց իր կեանքին։

Տաղտկութիւնն ու պարապութիւնն էլ քիչ դեր չեն խաղում դաւաճանութեան դրամների մէջ։ Այստեղ երկար բացատրութիւնների մէջ ընկնելու կարիք էլ չկայ, որովհետև ամեն ինչ պարզ է.

տաղտկութիւնը պահանջում է զուարճութիւն, պահանջում է, ինչպէս ասում են, ցրուել։

Իսկ այս դէպքում ինչը կարող է աւելի հեռաքրքրական լինել, քան սիրային ինտրիգը, որ կարող է գերել կնոջ ամբողջ էութիւնը։

Զուր չէ ասուած թէ տաղտկութիւնն ու ծուլութիւնը բոլոր արատների մայրն են։

Հասարակ ժողովրդի կանանց մէջ սիրային դաւաճանութիւններին շատ նպաստում է հակումը դէպի թունդ խմիչքները, որոնց քիչ չեն լինում ենթարկուած հասարակ կանայք։ Օրինակ, Պարիզում լինում են օրեր, երբ դատարաններում քննւում են տասը, տասներկու գործեր, որոնց մէջ մասնակցութիւն ունեն արբեցող կանայք և որոնք արբեցողութեան պատճառով են դատաստանական գործ դառել։ Այդպիսի գործերի հերոսների մէջ սովորական է տեսնել և չահիլ կանանց, 17, 16 և նոյն իսկ 15 տարեկան աղջիկներին։

Բայց այս մասին չարժէ էլ երկար խօսել, քանի որ լաւ յայտնի է, թէ մարդկանց ինչ խոզային դրութեան է հասցնում արբեցողութիւնը։

Տղամարդու զանազան բնածին պակասութիւնները, նոյնպէս և կոպտութիւնը, ինչպէս և հարկաւոր էր սպասել, կարող են խորին զզուանք ներշնչել կնոջը և դաւաճանութեան պատճառներ դառնալ։

Մի տիկին ասում էր իր առաջին ամուսնուն և ահա ինչ էր գրում իր բարեկամուհուն. «Նա ինձ կսպանէ իր շնչառութեամբ» (Որքան կա-

լեոր է ամեն անգամ դիմել բժշկին և թոյլատրութիւն ստանալ ամուսնանալու համար)։

Զարմանք չէ, որ խորշող բնաւորութիւն ունեցող կինը խուսափէր այդպիսի շնչառութիւն ունեցող տղամարդու փաղաքշանքներից։

Տղամարդու կոպտութիւնը ամուսնական կեանքի սկզբում շատ յաճախ յարուցանում է ջահիլ ու նրբազգաց կնոջ մէջ խորին զզուանք, որը նա յետոյ այլ ևս անկարող է լինում խեղդել։

Առհասարակ կոպտութիւնը տանել չէ կարող ամեն մի կին. և սակայն որքան քիչ բան է հարկաւոր մի ջահիլ կնոջ նրբազգացութիւնը խնայելու համար, մի կնոջ, որ դեռ ոչինչ հասկացողութիւն չունի ամուսնական պարտաւորութիւնների մասին։

Մի քանի տղամարդիկ իսկապէս մի անգամ ընդ միշտ քայքայում են իրանց ընտանեկան համաձայնութիւնը այն անսովոր կոպտութեամբ, որ ցոյց են տալիս ամուսնութեան առաջին օրերում։

Մեծ բախտ կլինէր, եթէ մարդիկ լսէին մի հին փիլիսոփայի այս խօսքերը. «Այր և կին ամուսինները պիտի ամեն տեղ և ամեն ժամանակ իրար հետ այնպէս վարուեն, որ կարծես թէ նոր են ծանօթացել և դեռ չեն պսակուել»։

«Եթէ նոյն իսկ իրար չեն սիրում, անկասկած իրար կյարգեն փոխադարձ յարաբերութիւնների մէջ թէ տանը, ուր մենակ են և թէ հասարակութեան մէջ»։

Երբ ամուսնացած կինը միանգամից կանգ-

նել է սիրային արկածների լարծուն ու փշոտ ճանապարհի վրայ, նրա ամբողջ կեանքը այնուհետև կամայ-ակամայ դառնում է ստութեան, խաբէութեան, կեղծիքի մի անընդհատ ցանց։

Յաճախ իր ամուսնու և հասարակութեան ուշադրութիւնը իրանից հեռացնելու համար նա սկսում է կեղծել բարեպաշտութիւն։

Այդ անում է նա այն հաշուով, որ ոչ ոք չի մտածի կասկածել, թէ մի այդպիսի սատուածասէր անձ, ինչպիսին ինքն է, կարող է վատ վարքի տէր լինել։

Ամուսնու աչքին թոզ փչելու համար նա իրան ձևացնում է խանդոտ և սարսափելի տեսարաններ է սարքում. առաջ կռիւներ, ապա և հաշտութիւն։

Նա խաղում է կամ կոմեդիա կամ ողբերգութիւն և թեքւում է, գալարւում է դէպի բոլոր կողմերը։

Զուր չէ, որ սիրային արկածների մէջ ընկած կնոջ բնաւորութիւնը համեմատում են կատուի բնաւորութեան հետ։

Այստեղ էլ նոյն արտաքին հեզութիւնն է, նոյն առերես շնորհալիութիւնը, նոյն կեղծութիւնը, և նոյն չարութիւնը. ուստի և թաւիշի պէս փափուկ թաթիկը մի գլուխ սուր ճիրաններ է հանում։

Մի մի անգամ էլ, ամուսնու ուշադրութիւնը իսկական սիրականից հեռացնելու համար, նա ամուսնուն «քրս» է տալիս. մի ուրիշ, բոլորովին

անմեղ մարդու դէմ, զանգատւում է նրա մօտ, որ այդ մարդը շատ է ընկնում իր ետևից, խնդրում է ազատել իրան այդ աներես Դոն-Ժուանից։

Եւ սրտաշարժ ամուսինը, հիացած այդ մտերմութիւնից, անսահման հաւատով է վերաբերւում իր կնոջ առաքինութեան և յաճախ կռւում ու ծեծւում է այն մարդու հետ, որին ցոյց էր տուել կինը։

Այն կինը, որ ուզում է ապահարզան ստանալ իր սիրած մարդու հետ ամուսնանալու համար, ամեն տեսակ թակարդներ է լարում իր ամուսնու առաջ և յաճախ ցոյց է տալիս խելքի մի ապշեցուցիչ ճարպիկութիւն և ինքնդիմադրութեան առաջ տանելու հնարագիտութիւն։

Անցեալներում մի լրագրի մէջ տպուած էր, թէ մի լեհուհի իւրաքանչիւր քայլում այնպէս էր անում, որ ամուսինը նրան հայհոյէ և նոյն իսկ ծեծէ։

Նա յամառութեամբ մերժում էր ամուսնական փոխադարձութիւն տալ նրան, իր ամուսնուն, հաշուելով, որ այդպիսի պահեցողութիւնը կհարկադրէ ամուսնուն սէր որոնել ուրիշ տեղերում։ Նրան հէնց այդ էլ հարկաւոր էր։ Նա կկարողանայ հեռանել ամուսնուն, բռնել նրան յանցանքի տեղում և այդպիսով ձեռք բերել մի անխորտակելի առիթ ապահարզանի համար։

Դաւաճանող կինը քիչ է մոածում իր երեխաների սիրոյ և յարգանքի մասին։

Յաճախ նա իրան այնքան բաց է պահում երեխաների մօտ, որ նրանք կորցնում են իրանց յարգանքը դէպի նրան (շատ է պատահում, որ անհաւատարիմ կինը իր երեխաների միջոցով է նամակներ ուղարկում սիրականին)։

Եղել են դէպքեր, երբ մայրը իրան թոյլ է տուել անուանարկել իր աղջկան, որպէս զի նրանով վարագուրէ իր սեփական տգեղ վարքը։

Հազուագիւտ չեն և այն դէպքերը, երբ յանցաւոր մայրերը սկսում են խորապէս ատել իրանց երեխաներին, որոնց առաջ սիրում էին։ Օտար մարդիկ, օրինակ, հիանում են այդպիսի մօր երեխաների գեղեցկութեան վրայ, իսկ նա վրդովուած պատասխանում է.

«Ի՞նչ լաւ բան էք տեսնում այդ հրէշի մէջ, Ես նրան տեսնել չեմ կարող. երբ սկսում է լայ լինել, ես ուզում եմ ջարդել նրան»։

17.

Սեպտեմբերի 19-ին.

Թանկագին բարեկամ.

Ամուսնական պարտաւորութիւններին դաւաճանող կնոջ ատելութիւնը դէպի իր տղամարդը և այն բոլոր խաղերը, որ նա խաղում է ամուսնու դէմին, շատ կարևոր դեր են կատարում ամուսնական անհամաձայնութիւնների մէջ։

Այս ատելութեան հիմքը մի տարօրինակ հոգեբանական երևոյթ է.—մարդու բնաւորութեան յատուկ է ատել զրկուածին։

Վիրաւորանք հասցնելով իր մերձաւորին, մարդը, փոխանակ զղջալու, ինչպէս պէտք էլ ինէր թէ առողջ դատողութեան և թէ արդարութեան ամենապարզ զգացմունքի օրէնքով, սկսում է ատել վիրաւորանք կրածին։

Դժուար է հաստատել, թէ մեր հոգու այս յատկութիւնը ընդհանրական է, թէ նա գտնւում է ամեն մի մարդու մէջ։

Մենք այստեղ չենք մտնի այս հարցի մանրամասնութիւնների մէջ, բայց կարևոր է իմանալ, որ այդ երևոյթը յամառութեամբ կրկնւում է, համարեա առանց բացառութեան, սիրային դաւաճանութեան բոլոր դրամաների մէջ։

Իր ամուսնուն և առհասարակ իր սիրած մարդուն դաւաճանող կինը, որ յամենայն դէպս մեղաւոր է այդ մարդու առջև, վիրաւորանք, անպատուութիւն է հասցնում նրան, միաժամանակ վառուած է նրա դէմ մի ատելութեամբ, որ երբեմն նոյն իսկ ինքնասպանութեամբ է վերջանում։

Փաստը հաստատուն է, անուրանալի։

Կինը վիրաւորանք է հասցնում մարդուն, նա մեղաւոր է այդ մարդու առաջ, բայց փոխանակ զղջալու, նա այնքան լցւում է ատելութեամբ, որ

աշխատում է, որքան կարելի է, շատ սատակացնել իր գործած չարիքը։ Աւելացնենք և այն, որ քրէական դատավարութեան տուած փաստերով ապացուցուած է, թէ որքան բարի և անձնուէր է լինում այր մարդը, այնքան անհաշտ է այն ատելութիւնը և անզուսպ է այն զզուանքը, որ տածում է կինը դէպի նրան։

Սովորաբար առաջին արարքը, որի մէջ արտայայտւում է ատելութիւն դէպի ամուսինը, բամբասանքն է։

Կինն զգում է, որ ամուսինը արհամարհում է իրան. մի և նոյն ժամանակ նրա հարազատ երեխաները յաճախ բողոքում են նրա վարքի դէմ և սրանով սատակացնում են իրանց սէրն ու քնքշութիւնը դէպի հայրը։

Կինը այս բանի վրէժը հանում է ամուսնուց և երեխաներից։

Նա սկսում է երեխաների մօտ բամբասանք անել հօր մասին, ամենասև գոյներով է ներկում նրան, առատաձեռնութեամբ վերագրում է նրան ամեն տեսակ, ամենից զզուելի արատներ։

Մօր մշտական ազդեցութեան տակ գտնուող երեխաները յաճախ ենթարկւում են նրա ներշնչման և վարակւում են նրա ատելութեամբ դէպի իրանց բոլորովին անմեղ հայրը։

Այսպէս ահա, չարախօսութեան և բամբասանքի միջոցով կինը ապահովում է իր առաջին յաղթանակը. նա զրկում է իր տատ մարդու երեխաներին, ոչնչացնում է նրանց սրտի մէջ

որդիական սէրը դէպի հայրը, մի սէր, որ այդպիսի հանգամանքների մէջ մնում է այդ հօր համար միակ մխիթարութիւն։

Դժբախտ մարդը, յուսահատութեան հասնելով այդ չարախօսութիւններից, շատ յաճախ գլուխ է կորցնում, մոռանում է ամեն սահման, կատաղում է, սկսում է հայհոյել և ծեծել.—ահա մի ամբողջ դրամա, և երեխաները մնում են առանց կրթութեան։

Պակաս չեն այն դէպքերը, երբ այդպիսի չարաբախտ ամուսինները, յուսահատուելով կնոջ անառակութիւնից և այն ատելութիւնից, որ զբրգռել է կինը երեխաների մէջ, վերջ են դնում իրանց կեանքին, ինքնասպանութեան դիմելով։

Տարօրինակ բան, ընտանեկան այս դրամաների մէջ ամենից շատ ջնջւում են այնպիսի այր ամուսիններ, որոնք ամենից քիչ արժանի են ատելութեան։

Որքան ազնիւ, աշխատասէր, բարի և զիջող է ամուսինը, այնքան աւելի մեծ վտանգ է նրան սպառնում դաւաճանող կնոջ կողմից։

Որքան շատ էր կինը մինչև այդ սիրում ամուսնուն, և որքան շատ էր նրա մէջ լաւ յատկութիւններ գտնում, այնքան սատակիչ է յետոյ առում նրան և այնքան շատ է նրա մէջ գտնում վատ յատկութիւններ։

Սէրը պակասութիւններն ու արատները դարձնում է առաքինութիւն, իսկ ատելութիւնը, ընդ-

հակառակը, առաքինությունը դարձնում է արատներ։

Եթէ այր ամուսինը հեզ և համբերատար է, նա դաւաճանող կնոջ աչքում բացէ ի բաց մի ապուշ է. եթէ նա խնայող է, կնոջ համար դառնում է ժլատ, կծծի։

Ամուսնական անհաւասարմութիւնից ծագած քրէական դրամների մեծամասնութեան մէջ, դոնէ ֆրանսիական դատարաններում, համոզմունք է կազմւում, որ փնասուած տղամարդը յաճախ բարի, աշխատասէր, իր ընտանիքին նուիրուած մի մարդ է, մինչդեռ կինը ծոյլ է, շատակեր, շռայլ և ասատիկ եսամոլ։

«Ես ինձ շատ եմ սիրում, քան իմ երեխաներին».—այս խօսքերը կարելի է համարել իւրաքանչիւր դաւաճանող կնոջ ոգու դրութիւնը բնորոշող խօսքեր։

Անսահման եսամոլութիւն—ահա ինչից է կազմուած նրա ամբողջ ոգին։

Նա չէ սիրում ոչ ամուսնուն, ոչ երեխաներին, ոչ ոքի չէ սիրում բացի իրանից՝ նոյն իսկ իր սիրեկանին նա սիրում է միայն իբրև հաճոյքների աղբիւր, այսինքն իբրև եսամոլութեանը բաւականութիւն տուող։ Ի դէպ, այսպիսի ծայրայեղ եսամոլութիւն երևան է գալիս և այնպիսի կնոջ մէջ, որ բոլորովին խորթ է որ և է սիրային չարագործութեան։

Այստեղ եսամոլութեան աղբիւրը պարզապէս

կնոջ անչափ հակումն է դէպի շռայլութիւն, արտաքին փայլ, զարդարանք։

Եւ այս հակումը յաճախ ընդունում է կատարեալ կրքի չափերը, որի անդունդների մէջ խեղդւում են և՛ ամուսնական պարտաւորութիւնները և՛ մայրական սէրը։ Ո՞վ չէ տեսել այնպիսի ամուսնացած կանանց, որոնք զզւում են մայրական պարտաւորութիւններից և չեն ուզում երեխաներ ունենալ։

Խաբուած այր ամուսնու դրութեան ամենաողբալի կողմն այն է, որ, ինչպէս ասացինք վերևում, նա համարեա միշտ ամենից յետոյ է իմանում իր դժբախտութիւնը, մինչդեռ այդ դժբախտութեան մասին արդէն ամեն տեղ են խօսում։

Սովորաբար, մի որ և է դատարկ պատահականութիւն յանկարծ բաց է անում նրա առջև շշմեցնող դաւաճանութիւնը և այդ րոպէից նրա համար սկսւում է կսկիծների, տատանումների. ների մի տանջալից շարք և նա կամ հանդարտ կերպով համոզուած է կամ այդ դրութիւնից թռիչք է գործում դէպի ծանր անյայտութիւն։

Ֆրանսիական հանճարեղ գրող Մոլիէրը, որ այնպէս կծու և ուրախ կերպով ծաղրում է իր կոմեդիաների մէջ խաբուած ամուսիններին, ինքն էլ իր կեանքի մէջ խաղացել է այդ դերը. նա գիտէր, թէ որպիսի խելացնոր կրքով էր վառուած իր ջահիլ կինը դէպի մի կոմս։

Մոլիէրը շատ անգամ բացատրութիւններ ունեցաւ իր կնոջ հետ, շատ խրատեց նրան, բայց

ամեն անգամ այդ կնոջ տեսքն անգամ, որին նա սիրում էր, չարդ ու փշուր էր անում նրա ամբողջ վճռականութիւնը, հարկադրում էր մոռանալ այն խօսքերը, որ ուզում էր ասել նրան։

Սկսելով կշտամբանքներից և յանդիմանութիւններից, նա արագ ցածրացնում էր իր խօսելու եղանակը և վերջացնում էր նրանով, որ աղաչում էր իր կնոջը ներել իրան։

Ամենից յաճախ այր ամուսինը ներում է կնոջը ոչ թէ մեծահոգութիւնից, այլ պարզապէս այն պատճառով, որ մարմնաւոր, ֆիզիկական սէր է զգում դէպի նրան և չէ կարող հրաժարուել նրանից։

Տարաբախտաբար, սէրը առհասարակ քիչ է հաշտւում սեփական արժանաւորութեան զգացմունքի հետ։

Սիրահարուածը յաճախ այն մասին չէ մտածում, որ իր արժանաւորութիւնը պահպանէ, այլ այն մասին, որ կնոջը սիրած լինի, թէև դրանից փշրուեն իր բոլոր արժանաւորութիւններն ու առաքինութիւնները։

Որպէսզի արժանաւորութիւնը յաղթանակէ և նուաճէ սէրը, պէտք է, որ նա սէրից ուժեղ լինի։ Բայց այդպէս շատ յաճախ չէ պատահում։

Բրէական մի գործի մէջ, օրինակ, կայ այսպիսի մի նամակ, դաւաճանող կնոջից իր սիրեկանին. «Երբ ես երէկ երեկոյեան վերադարձայ տուն, իմ խեղճ ծերուկը (ամուսինը) պառկած էր անկողնում, նիրհում էր, բայց չէր քնած. նա

ամբողջ օրը ոչինչ չէ կերել. երբ ինձ տեսաւ, սկսեց լաց լինել երեխայի նման և ասում էր ինձ. «Եթէ դու դաւաճանում ես ինձ, խոստովանիր անկեղծօրէն,— և ես կներեմ քեզ»։ Ես, ի հարկէ, սկսեցի երդում-հաւատ անել, որ երբէք մտքովս չեմ անցկացրել նրան խաբել։

— Տղամարդկանց այս թուլութիւնը դէպի իրանց կանանց դաւաճանութիւնը գլխաւորապէս հիմնուած է այն բանի վրայ, որ նրանք կապուած են կանանց հետ, սովորած են ամուսնական առագաստին։

Կանայք շատ լաւ են իմանում իրանց ամուսինների այս թուլութիւնը։

Յափշտակուած քնքոյշ յիշողութիւններով, հնազանդ ամենակարող սովորոյթին, տեսնելով և շոշափելով կնոջը նորից իր մօտ, վերաւորուած տղամարդը այսպիսի պայմաններում աւելի հակուած է դէպի ներում և հաշտութիւն, քան ուրիշ որ և է պայմաններում։

Բայց աւաղ, տղամարդու ներումը միշտ չէ բերում այն պտուղները, որոնց վրայ նա յոյս ունէր։

Միանգամից քէֆի սովորած կնոջ զղջումը բոլորովին նման է արբեցողի զղջման։

Առաջին դաւաճանութիւնը բերում է իր հետից ուրիշ դաւաճանութիւնների մի երկար պոչ։ Ամուսնու ներումը կնոջ համար ուրիշ ոչինչ չէ, բայց միայն թուլութեան և «փալասութեան» նշան։

Խօսք չկայ, որ մի քանի կանայք անկեղծ զղջման և դարձի են գալիս, մանաւանդ, ի հարկէ, այն դէպքերում, երբ նրանց կիրքը հանգել է և կարող են բոլորովին սառնասիրտ կերպով նայել իրանց վրայ։

Պատահում է, որ դառն զղջումը քայքայում է նրանց առողջութիւնը և երբեմն ինքնասպանութեան էլ է հասցնում։

18.

Սեպտեմբերի 25-ին.

Թանկագին բարեկամ.

Այժմ թողնենք մարդկութեան գեղեցիկ կէսը և տեսնենք տղամարդկանց։

Այստեղ մեր առջև բոլորովին մի և նոյն պատկերն է, մի և նոյն մանրամասնութիւններով, թէև, ի հարկէ, բոլորովին զրկուած չէ իր առանձնայատուկ գծերից ու գոյներից։

Ոչ մի կասկած չկայ, որ իրապէս դաւաճան այր ամուսինների թիւը անհամեմատ աւելի շատ է, քան դաւաճան կանանց թիւը։

Ապացուցանել այս բանը թուանշաններով, ի հարկէ, անկարելի է։ Բայց ամեն մէկը, որ ապրում է և ուշադրութեամբ նայում է իր շուրջը, բոլորովին համաձայն կլինի որ այսպէս է։

Այր մարդու սիրային փոփոխականութիւնը

բերում է իր ետևից նոյն հետևանքները. մի և նոյն ապականութիւնը, միևնոյն խաբէութիւնները, կեղծաւորութիւնը և լրբութիւնը, նոյնպէս ընտանեկան օջախի մոռացումը, նոյնպիսի ատելութիւն դէպի հարազատ երեխաները...

Դաւաճանող այր մարդի վատ վարքի առանձնայատկութիւնը գլխաւորապէս բղխում է այն բանից, որ տղամարդու սիրային կիրքը անհամեմատ աւելի խիստ է արտայայտւում իր զուտ մարմնային բնաւորութեամբ, քան կին մարդու կիրքը։

Տղամարդը աւելի բարձր աստիճանով որձ է, քան կինը—էգ։ Առհասարակ, մարմնային կիրքը ծնեցնում է անպթութիւն։ Դրա օրինակները կան պատմութեան մէջ, օրինակ, Տիբերիոսը, Ներոնը, Կապոյտ Միրուք անունով յայտնի թագաւորը և ուրիշ շատերը։

Հէնրիխի աղջիկ Ելիզաւետան իր սիրածի գլխատման օրը զբաղուած էր մուզիկայով։

Պատմութիւնը լիքն է այդպիսի փաստերով, որոնք վկայում են թէ հեշտասիրութիւնը շաղկապուած է գազանային անզթութեան հետ։ Պէտք է այն էլ նկատել, որ տղամարդը բնութիւնից լինելով պարզ, կոպիտ և ոչ այնքան խորամանկ, իր յանցաւոր կիրքն էլ արտայայտում է աւելի կոպիտ ձևերով։

Կարող է նոյն իսկ թուալ, թէ տղամարդը շիտակ և անկեղծ է իր մեղքերի մէջ և այս բանը, կարծես թէ, խօսում է նրա օգտին։

Տղամարդը կեղծաւորութիւն անում է աւելի կոպիտ և յաճախ, քան կինը. նա աւելի թոյլ վարպետ է կոմեդիաներ սարքելու մէջ, բայց պակաս էլ եռանդուն սոսախօս չէ։ Նա պատրաստ է ամեն տեսակ երդում ուտել կնոջ մօտ, որպէս զի տիրանայ նրան, իսկ տիրանալուց յետոյ իսկոյն մոռանում է այդ երդումները և անվրդով է պահում իր խիղճը։

Նա առանց որ և է տատանման խաբում է իր ամենալաւ բարեկամին, որպէս զի իր ձեռքը դցէ նրա կնոջը, քրոջը կամ աղջկան։ Նոյնպիսի թեթևութեամբ խաբում է նա և իր կնոջը և կեղծաւորութիւն է անում նրա առաջ, թաւալւում է նրա ոտների մօտ, լաց է լինում, զղջում է, քնքշութիւններ է շռայլում։

Իսկ այդ ժամանակ նա մի մարդ է, որ վաղուց է վճռել բաժանուել իր կէսից, և դրա համար չափում, կշռում է բոլոր միջոցները։

Զարմանալի չի լինի, թանկագին բարեկամ, եթէ այստեղ մենք նորից յիշենք մեր հերոսին, որ պատրաստւում էր վերջ դնել իր կեանքին, երբ սիրահարուեց իր իդէալի վրայ։

Ինչպէս ասուած է վերևում, մեր հերոսը մեր ժամանակի զաւակն է, մեր զաւակն է, որի նման շատերը կան ամեն տեղ և իւրաքանչիւր քայլափոխում։ Նա մեր հասարակութեան արդասիքն է, նա մեր կեանքի կազմակերպութեան զաւակն է։

Թէև ուշ, մեր հերոսը հասկացաւ, որ ամուսնացող տղամարդուց պէտք է կուսութիւն պահանջել։

Մեր հերոսը չէ էլ ուզում էժանագին բարոյախօս լինել, նա այդ իդէալը իսկոյն չէ էլ պահանջում, նա համոզուած է, որ դա ընդհանուր էրկարատև սոցիալական առաջադիմութեան գործն է և ուզում էր մեռնել, որպէս զի դառնայ «մի փոքրիկ քար ապագայ հրաշալի շինութեան համար»։

Ուրեմն յուսանք, որ ոչ-հեռաւոր, լուսատու ապագայում երկու մարդ, հանդիպելով իրար սիրոյ ճանապարհի վրայ, չեն հարցնի իրար. «դու կոյս ես, ով տղամարդ», «դու կոյս ես, ով կին»։

Այս հարցերը վիրաւորում են սէրը։

Հանդիպելով և սիրելով իրար, երկու մարդիկ միմիայն կհարցնեն. «մաքուր է քո հոգին»։

Եւ արժէ՞ վիճելի համարել, որ տղամարդը կնոջից և կինը տղամարդուց պիտի պահանջեն կուսութիւն և՛ մարմնի, և՛ հոգու, իսկ գլխաւորը՝ հոգու ազնուութիւն և մաքրութիւն։

Առողջ հոգին առողջ մարմնի մէջ։

Բանը այն չէ, թէ ունեցել է այս կամ էրիտասարդը կամ աղջիկը «անցեալ», այլ այն, դուրս է եկել նա կամ միւսը այդ անցեալից ազնիւ և մարդկայնացած։

19.

Հոկտեմբերի 1-ին.

Թանկագին բարեկամ.

Ճշմարիտ ամուսնութիւնը երկու էակների շաղկապումն է, նրանց հոգիների և մարմինների ներդաշնակ միացումը։

Ամուսնական արարողութիւնը ինքը ամուսնութիւնը չէ, — դա միայն մի ձև է, որի միջոցով հասարակութիւնը տեղեկանում է, թէ այսինչ մարդիկ ուզում են ապրել միասին, միանալով ամենասերտ կապերով։

Մարդիկ բնազդմամբ իմանում են, որ ոչ միայն ֆիզիկական բնութիւնը, այլ և հոգու զուտ անհատական և բարոյական տարրերը կատարեալ զարգացման հասնում են կապուած լինելով այն անձի հետ, որ իր էութեամբ միւս սեռի բոլոր անձինքներից ամենաթանկագինն է և ամենամօտիկը։

Կատարեալ ամուսնութիւնը, որ ներկայացնում է երկու անձինքների հոգիների և մարմինների կատարեալ միացումը, իսկապէս տանում է երկուսին դէպի կատարելագործութիւն։

Ինչ պակասում է մի անձի բնաւորութեան մէջ, լրացնում է միւսի բնաւորութեամբ, պա-

կասութիւններն ուղղում են, որովհետև նրանց դատապարտում է սէրը. խիստ գծերը շտկում են։

Ինքնազսպումը, համբերութիւնը, աշխատասիրութիւնը և ուրիշ շատ յատկութիւններ ծագում և զարգանում են. երկու անձնաւորութիւնների այս կատարեալ միացման մէջ հոգին իր բոլոր ընդունակութիւններով ստանում է մղում դէպի լիուլի զարգացում, կարգ և հաստատութիւն։

Բարոյական շարժառիթները միշտ գերակշիռ կհանդիսանան այդ միութեան մէջ. նրանք կը-ղեկավարեն բոլոր ձգտումները և կհպատակեցնեն զգայնութեան պահանջները։

Բարոյական տարրի այս գերակշռութիւնը կը-պահպանէ փոխադարձ յարգանքը, առանց որի սէրը երկարակեաց չէ։

Տգամարդու և կնոջ բոլոր միացումները չեն ներկայացնում կատարեալ կամ ճշմարիտ ամուսնութիւն, այսինքն թէ ֆիզիկական, թէ մասաւոր և թէ բարոյական միութիւն։ Շատ և շատ միացումներ, ինչպէս ասել ենք, տեղի են ունենում միայն կրքին բաւարարութիւն տալու համար։ Այսպիսի միացումները սէր չեն միացնում, այլ զգայնութիւն. և ամեն բան այդպիսի միացման մէջ ղեկավարում է ոչ թէ հոգին, այլ մարմինը։

Եւ այսպիսի ամուսնութեան հետևանքը միշտ կը լինի խանգարուած առողջութիւն և երջանկութեան բացակայութիւն։

Մարմնական, զգայնական միացումները մեծ մասամբ ամուսնութեամբ չեն վերջանում, որ ա-

ւելի ևս վատ է. թոյնը աւելի խոր է թափանցում և մեծ սոցիալական չարիք ստեղծում։

Աղջիկները պատմում են, թէ ինչպէս մաքուր և անկեղծ էր ձևանում նա, ով ուզում էր հարկադրել հաւատալ, թէ ինքը սիրում է նրանց, ինչպէս նա ուսումնասիրել էր նրանց մտաւոր ճաշակները և աշխատում էր բաւարարութիւն տալ այդ ճաշակներին։

Ո՛րքան սիրուն և քնքոյշ էր երիտասարդի վարմունքը, որքան անփոփոխ էր նրա ուշադրութիւնը. որպիսի՜ ճարպիկութեամբ կարողանում էր թագցնել իր դիտաւորութիւնները մինչև այն ժամը, երբ աղջիկը խոստովանում է նրան իր սէրը, իր իսկական սէրը, որ միայն դէպքի է սպասում՝ անգառնալի կերպով իրան զարթեցնողին նուիրուելու համար։

Եթէ այդ մարդը բարեխիղճ, ազնիւ լինէր, երկու էակները կարող էին միացնել իրանց ճակատագիրը և լինել երջանիկ, ու մարդկային ստորութեան, լրբութեան և անարգութեան զոհուող կանանց թիւը մէկով պակաս կը լինէր։

Տղամարդը, իմանալով, որ աղջիկը կատարեալ պէս հաւատում է իրան, խօսում է նշանադրութեան, ամուսնութեան մասին, ասում է թէ իրանք, այդ երկուսը, պիտի մօտիկ լինեն իրար, բացատրում է, թէ ինչպէս կը վարուէր «ճշմարիտ անձնուէր» կինը։ Խեղճ աղջիկը իմանալով, որ իր սէրը ճշմարիտ և կատարեալ անձնուիրութիւն

է, հաւատացնում է նրան թէ ինքը յաւիտեան և անփոփոխ կապուած կլինի նրա հետ։

Այն ժամանակ տղամարդը փորձում է նրա սէրը և յաղթահարում է նրա առաքինութիւնը, պատասխանելով նրա բոլոր առաքինութիւններին և բողոքներին թէ նա չէ սիրում կամ թէ հաւատացնում է, որ բոլոր նշանադրուած զոյգերը ապրում են ամուսնացածների նման։

Կամ թէ սկսում է ցոյց տալ, թէ աղջիկը ինչ լաւ ազդեցութիւն ունի իր վրայ և հաւատացնում է, թէ առանց օրիորդի ինքը չէ կարող բարի լինել, խոստանում է երբէք չթուլացնել իր կապը նրա հետ. էլ ինչո՞ւ սպասել, ինչո՞ւ հէնց այժմ չը լինել միմեանց համար ամեն ինչ։

Եւ այսպէս, երկար ժամանակից և երկար ջանքերից յետոյ, մի յամառութեամբ, որ արժանի էր մի աւելի լաւ նպատակի, տղամարդը հասնում է իր ցանկութեան կատարման։

Աղջիկը զիջում է նրան, որովհետև թւում է, որ պիտի զիջէ։

Նա գիտէ, որ սիրում է տղամարդին և պատրաստ է ամեն մի զոհ տալ, որպէս զի նա բարի լինի, որպէս զի ապացուցանէ, թէ որքան խոր է իր սէրը։ Մի բոպէ նա չէ կասկածում, որ տղամարդի սէրն էլ նոյնքան հզօր ու մաքուր է, ինչպէս իրանը, որ տղամարդը երբէք չի թողնի իրան։ Այս պատմութեան վերջաբանը միշտ աւելի

լաւ յայտնի է հասարակութեան, քան այն մասը, որ մենք պատմեցինք այստեղ։

Աղջկան հեռացնում և վատաբանում են ընտանիքն ու ծանօթները, հասարակութիւնը ատում է նրան, ամեն մի արկածախնդիր վազում է նրա ետևից, համարելով նրան մի հեշտ որս իր անասնական զգայնութիւնը գոհացնելու համար և, որ ամենից վատն է, նրան երեսի վրայ թողնում է այն տղամարդը, որին աղջիկը գոհ էր բերել այն ամենը, ինչ թանկ էր նրա համար։

Ահա կեանքի դրամաներից մէկն էլ. ինչպէս չը յուզուել, տեսնելով նրա փշրուած սիրտը, փշրուած յոյսերը, փշրուած կեանքը։

Անարդարութիւնը այնքան մեծ է, որ երբ կը հանդարտուի առաջին բոպէից ծագած վրդովմունքը, խաբուած աղջիկը կը տեսնէ, որ իրան խաբողը ընդունւում է այն իսկ հասարակութեան մէջ, որի դռները ընդմիշտ փակուած են իր, այդ խաբուածի առջև, չը նայած, որ իսկապէս նա խաբողից շատ արժանաւոր է։

Այսպէս է ժամանակակից կեանքը։ Ամբողջ չարիքը առաջանում է նրանից, որ թէ աղջիկների և թէ տղաների դեռահաս սերունդը անկանոն կրթութիւն է ստանում, կամ, աւելի ճիշտն ասած, ոչինչ կրթութիւն չէ ստանում։

Մեծ կլինի ծնողների երախտիքը, եթէ նրանք կարողանան իրանց զաւակների բոլոր կրքերը սանձահարել մանկութիւնից։

Թող ներուի ասել, որ աղջիկները պարտա-

ւոր են հասկանալ, թէ կիրքը, այսինքն ֆիզիոլոգիական գրաւչութիւնը, սիրոյ մի մասն է կազմում, բայց շփոթւում է այն սիրոյ հետ, որ մի յայտնի մարդու կին դառնալու ցանկութիւնն է զրգռում։ Նրանք պարտաւոր են հասկանալ, որ կիրքը մի օրինաւոր բնազդ է, որից չպէտք է ամաչել, եթէ նա չէ անցնում իր սահմաններից դէն. ինքը բնութիւնն է նրան դրել մեր մէջ, ինչպէս և բոլոր մեր միւս բնազդները։

Այդ բնազդին բաւարարութիւն տալը պատճառ է դառնում, որ աշխարհ գան նոր մարդկային էակներ, որոնց վիճակուած է ժամանակին տանջուել և ուրախանալ։

Աղջիկը պիտի լաւ յիշէ, որ այդ բնազդին բաւարարութիւն տալու ժամանակը կը գայ այն միջոցին, երբ նրա սիրած տղամարդը այս կամ այն կերպով կը յայտարարէ հասարակութեան, թէ միտք ունի նրա ամուսինը դառնալու և բացարձակ կերպով նրան իր կինը կը ճանաչէ։ Իսկ եթէ տղամարդը կը խոստանայ ամենքի առաջ կին ճանաչել նրան միայն այն ժամանակ, երբ արդէն ստացած կը լինի նրա սիրոյ ապացոյցը,—այդ դէպքում նա, աղջիկը, պիտի ասէ նրան, որ եթէ նա այնքան քիչ է մտածում աղջկայ ցանկութեան և հանգստութեան մասին, հազիւ թէ մտածէ և իր խոստումը կատարելու մասին։ Մեծ մասամբ այսպէս էլ լինում է։

Տղամարդիկ քիչ են ամուսնանում (չը նայած այն բանին, խոստացել են թէ ոչ) այն-

պիսի աղջիկների հետ, որոնք առաջ արդէն նրանց կինն են եղել։

Լաւ իմանալով այս փաստը, աղջիկները քիչ սխալուած կը լինեն այն տղամարդկանց զգացմունքի բնաւորութեան վերաբերմամբ, որոնք նրանց սէր են յայտնում. այսպիսով էլ աղջիկները շատ քիչ դէպքերում կը լինեն կեղծ ճանապարհի վրայ։

Նրանք կհասկանան ամենաքնքոյշ խօսքերի շարժառիթը, երբ այդ խօսքերի մէջ չար դիտաւորութիւն կայ. երբէք սէրը նրանց այնքան չի կապկապի-փաթաթի, որ այլ ևս անհնար լինի կրտրել այն շղթան, որ կապում է նրանց մի անարժան մարդու հետ։

Ի դէպ. կան միջոցներ հաւասարելու և հանգստացնելու այն փոխադարձ կրքոտ զրաւչութիւնը, որ զարգանում է սեռային հասունութեան շրջանում. դրանցից մէկն է հասարակական կեանքի բարձր սոցիալական և բարոյական երևոյթների մէջ մասնակցութիւն ունենալը. էլ չենք խօսում կեանքի եղանակը փոխելու մասին, ճանապարհորդութիւնների և այլ այդպիսի բաների մասին։

Կասկած չկայ և պէտք է հաւատալ, թանկագին բարեկամ, որ այս բոլորի խելացի ըմբռնումը չի փնտրի այն համեստութեան և մաքրութեան, որոնք այնպէս զարդարում են աղջկայ հոգին, չի ոչնչացնի իդէալական գծերը նրա բնաւորութեան մէջ։

Սրանից չպէտք է վախենալ. լուրջ հայեացքը այս յարաբերութիւնների մասին աղջկայ օգտին կը ծառայէ և կուժեղացնէ նրա բարոյական քաջութիւնը և ինքնազսպումը։

Զիմանալը անմեղութիւն չէ և չէ կարող առաքինութիւն պահպանող լինել. թող դէթ մի աղջիկ ապատուի կեղծ քայլից...

Իմ նամակների վերջում ես ինձ թոյլ կտամ, լուսաբանութեան համար, բերել մի համառօտ պատմուածք։ Դրա նիւթը ամերիկական «Վաղը թէ կին» պատմուածքն է, որ ես քիչ փոփոխել եմ։

Պէտք էր մահուան պատժի ենթարկել մի ոճրագործի։

Դատապարտուածին բերին հանդիսարանը, ուր դրուած էին երկու ծածկուած վանդակներ. մէկի մէջ գտնուում էր մի սոված վագր, միւսի մէջ մի կին, որ այդ երկրի ամենագեղեցիկ աղջիկներից մէկն էր։

Ոչ ոք չգիտէր, թէ որ վանդակումն է վագրը և որի մէջ է կինը։ Գիտէր միայն մէկը, որ սիրում էր դատապարտուածին. դա թագաւորի աղջիկն էր։ Իսկ վանդակում փակուած կինը նրա ընկերուհին էր։ Այս կինն էլ սիրում էր դատապարտուածին, սակայն փոխադարձաբար չէր սիրուած նրանից։

Երկրի սովորութիւնն այնպէս էր, որ թագաւորի աղջիկը պիտի ցոյց տար, թէ որ վանդակը պիտի բաց անել։ Եթէ նրա ցոյց տուածը վագրի վանդակն էր, այն ժամանակ սոված գազանը, դուրս գալով իր արդելարանից, պատառոտում էր դատապարտուածին. իսկ եթէ թագաւորի աղջիկը մատնացոյց էր անում կնոջ վանդակը, այն ժամանակ դատապարտուածը ազատւում էր մահից և պիտի ամուսնանար վանդակի կնոջ հետ։

Եւ ահա թագաւորի աղջկայ առաջ դրուած է մի ծանր հարց։ Դատապարտուածը նրա սիրահարն է։ Ի՞նչ անել։ Եթէ ցոյց տայ վագրի վանդակը, այդ սիրահարը պիտի ոչնչանայ ամեհի գազանի ճիրաններում. իսկ եթէ միւս վանդակը ցոյց տայ, այդ դէպքում նոյն սիրահարը պիտի ամուսնանայ սիրոյ մէջ իրան հակառակորդ հանդիսացող ընկերուհու հետ։

Արդեօք ի՞նչը պիտի դերադասէր թագաւորի աղջիկը իր սիրած մարդու համար—գազանի ճիրանները, ուր նա պիտի մահ գտնէր, թէ դեղեցիկ աղջկայ գիրկը, ուր նա պիտի ապրէր։

Դատապարտուածը բարձրացրեց իր աչքերը և իր սիրած ու իրան սիրող աղջկայ դէմքի վրայ ուզում էր կարդալ իր վճռագիրը։

Եւ նա, թագաւորի աղջիկը, նշան արաւ ու վանդակներից մէկի դուռը բացուեց։

Ի՞նչ էր սպասում դատապարտուածին։

Արդեօք թագաւորի աղջիկը տանջալից և անդութ մահուան գի՞րկը նետեց նրան, որին սիրում

էր։ Իրաւունք ունէ՞ր նա մի անդութ, եսամոլ հարուածով կտրել թանկագին կեանքի թելը։

Իրաւունք ունէ՞ր նա այդ անելու ուրիշների և իր սեփական խղճի առաջ, այն անմահ սկզբունքի առաջ, որ յաւիտենական կեանք է ստեղծում։

Եւ ի՞նչ պիտի թելադրէր նրան սիրող սիրտը. կարո՞ղ էր նա տալ իր սիրածին մի ուրիշ կնոջ, որ նոյնպէս նրան սիրում էր։ Ի՞նչ պիտի անէր իր համար և նրա համար, որպէս զի արդար լինէր։

Սպանե՞լ սիրածին մի անդութ, եսամոլ հարուածով, թէ... մի երկարատև ստրկութիւն ստեղծել նրա համար, նետելով նրան մի կնոջ գիրկը, որ թէև ամենագեղեցիկներից մէկն էր, բայց չէր վայելում նրա սէրը։

Ազատե՞լ դատապարտուածին։ Դնե՞լ նրա ազատ և հպարտ հոգու մէջ այն տանջող գիտակցութիւնը, թէ նրան տրուում է մի կեանք, որ գնուած է նրա ազատութեան գնով, այն գիտակցութիւնը, թէ մի ուրիշ, օտար կնոջ ոտների մօտ է նետուած նրա ազատ, սիրող սիրտը, փոխանակ մեռնելու այն կնոջ համար, որին սիրում է։

Ըստ երևոյթին, դատապարտուածը այսպէս կարող էր ներկայացնել իրան, թէ ինչ է կեանքի միտքն ու գեղեցկութիւնը։

Միւս կողմից, չկայ կեանքի մէջ մարդուց ուժեղ ոչ մի բան, երբ նա ուզում է լինել ազատ և հուժկու։ Նա միայն պիտի հասկանայ, որ իրանից ուժեղ ոչինչ չկայ, և երբ միանգամից հաս-

կոցաւ այդ, այլ ևս ոչ ոք և ոչինչ չէ կարող արդելք կամ ցուցմունքներ տուող հանդիսանալ նրա համար։

Լինել այն, ինչ ինքն է, հաւատալ և մտածել այնպէս, ինչպէս ինքն է կարող,—մի՞թէ սա այնքան դժուար է, մի՞թէ սա անկարելի է ամեն տեսակ հանգամանքների և պայմանների մէջ։

Ուրեմն, ո՞ւր է լաւ. ի՞նչ դատավճռի էր սպասում դատապարտուածը. ի՞նչ էր պահանջում նրա հպարտ ու ազատ հոգին, որ խելացնորութեան չափ սիրահարուած էր. արդեօք մի հպարտ, իր ազնուութեամբ վեհ մահ սիրածի համար թէ «առանց կեանք կեանքի» ողորմելի փշրանքներ։ Ինչի՞ մէջ էր ուզում դատապարտուածը կարդալ ճշմարիտ սիրոյ դատավճիռը։

Իսկ ի՞նչ էր ուզում սիրող արքայադուստրը. սպանե՞ց թէ ստրուկ դարձրեց իր սիրած տղամարդին։

Ի՞նչ տանջանք նշանակեց. արդեօք փառաւոր մահուա՞ն տանջանքը, թէ ողորմելի, ստորացրած, բաշխուած կեանքի տանջանքը...

Եւ այսպէս, ի՞նչ դատավճիռ կարդաց դատապարտուածը իր սիրած աղջկայ աչքերում...

Մա՞հ թէ կեանք...

Ազատութի՞ւն թէ ստրկութիւն։

Ի՞նչ է սիրելը. մա՞յն, որ խելացնորի պէս սիրող մարդուն թոյլ տալ, որ ծուատէ գազանը, թէ գցել նրան բախտաւոր հակառակորդուհու իշխանութեան տակ։

Օ՜, սէր, որքան տանջանքներ և որքան երջանկութիւն ես դու բերում մարդկութեան...

Դու աշխահի ոյժն ես։

Դու տալիս ես մեծագոյն երջանկութիւնը և մեծ վիշտը. քո մէջ լսւում է երկնքի ձայնը, մի ձայն, որ թռչում է այնտեղից, ուր շողշողում է յաւիտենական ճշմարտութիւնը...

Դու կեանքի գրաւականն ես։

Դու միացնում ես ամեն ինչ և ստեղծում ես ամեն բան։ Դու լուսաւորեցիր սխալների և խարդախութեան մեր երկրային ճանապարհը հանճարների փայլուն շողերով, որպէս զի մարդկութիւնը առաջ գնայ։

Սէրը աշխարհի հոգին է. նա էլ ասում է հոգուդ, որ աշխարհային կեանքը մի է եւ դու, եթէ սիրում ես եւ սիրուած ես, մենակ չես այդ կեանքի մէջ...

ՎԵՐՋ

ԼՈՒՍԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԻՆ
ԱՇԽԱՐՀՈՒ. ԳՐԱԴԱՐԱՆ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆ.

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-ՍՍՀ
Ա. Մասեանի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0596958